

3136-3138

491.99-5
47-45

2010

460

p. 681

Յ Ա Ն Կ Գ Լ Խ Ո Ց

1. Յառաջաբան հեղինակին	էջ Ա.
2. Առարկայ	” 7
3. Շնչաւոր և անշունչ առարկայներ	” 9
4. Մտաւոր և նիւթական առարկայներ	” 10
5. Առարկային թիւը	” 12
6. Առարկային որպիսութիւնը	” 13
7. Որպիսութեան թիւը	” 17
8. Առարկային գործողութիւնը	” 18
9. Թիւ գործողութեան	” 22
10. Բառ և վանկ	” 26
11. Հնչիւն և տառ	” 28
12. , տառի գործածութիւնը	” 30
13. չ և - տառերու գործածութիւնը	” 35
14. Գործածութիւն „ և օ երկբարբառներու	” 37
15. Ուղղագրութիւն „ և օ տառերու	” 39
16. Ուղղագրութիւն է և է տառերու	” 42
(Բառերու կապակցութիւնը)	
17.	” 48
18.	” 50
19. Պարզաբանող բառեր	” 58
20. Վերջաբան	” 66

Ք Ե Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Ե Ա Ն

Մ Ա Յ Ր Ե Ն Ի Լ Ե Զ Ո Ւ Ի

Մ Ա Ս Ն Ե Ր Կ Ր Ր Դ



Ե Ր Ր Ր Դ Ե Ի Զ Ր Ր Ր Դ Տ Ա Ր Ի Ո Ց Ո Ւ Ս Ո Ւ Յ Մ Ա Ն Ն Ի Ի Թ



Ա Շ Ի Ա Տ Ա Ս Ի Ր Ե Ց

Ն Ի Կ Ո Ղ Ա Ց Ո Ս Տ Ե Ի Ր — Ղ Ե Ի Ո Ն Դ Ե Ա Ն Ց

Ե Ր Կ Ր Ր Դ Տ Գ Ս Գ Ի Ո Ւ Թ Ի Ի Ն



Փ Ո Ր Ա Գ Ի Զ Ս Ե Ր Վ Ի Զ Է Ն

Տ Գ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ե Ի Վ Ի Մ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Կ. Պոլիս, Սուլթան-Համամ, Ազրիւրիկ Բոյ

11973

ԵՐԿՈՒ ԽՕՍԲ

Հ Ե Ղ Ի Ն Ս Կ Ի Ն Կ Ո Ղ Մ Ս Ն Է



Ընթերցողը պիտի նկատէ որ Քերականութեան սոյն հատորը սերտ կապ ունի նախընթաց հատորին հետ եւ նորա պարզ շարունակութիւնն է : Առաջին հատորն հրատարակելու առթիւ , մենք սահմանեցինք զայն իբր երկրորդ տարւոյ ուսուցման նիւթ , թէեւ նորա վերջին մասին մէջ եղած քաւերու կապակցութիւնը (էջ 48) յարմարագոյն կը դատէինք իբր նիւթ՝ երրորդ տարւոյ ուսուցման՝ Բայց ինչպէս յայտնի է մեր ուսուցիչք եւ վարժուհիք՝ դժուարին համարած են լեզուի այբուբենէն անբաժան եւ զող այդ վարժութեանց ուսումը , որոց դիւրութիւնը եւ «գտակարութիւնը մենք քանիցս ստուգած եմք՝ երկրորդ տարիէն սկսել : Բաց աստի , քերականական ուսումն իսկ մեր ուսումնարանաց մէջ իւր արժանաւոր տեղը դեռ չէ գտած . մեր ուսուցիչներէն եւ վարժուհիներէն շատերը այն կարծիքէն են որ քերականութեան ուսումը աւելորդ բեռ մ'է ուսումնարանին համար , զոր կարելի է շատ դիւրաւ բառնալ , յանձնարարելով նոցա՝ աւանդել ընթերցանութեան հետ եւ լեզուի քերականական անհրաժեշտ գիտելիքները : Բայց նախ պէտք է խոստովանինք որ առ մեզ պակաս չեն ուսուցիչներ անտեղեակք՝ լեզուի քերականական անհրաժեշտ գիտելիք . երկրորդ՝ ենթադրելով որ անոնցմէ շատերը տեղեակք նաեւ լինին լեզուին , չունին իրենց համար կանոնաւորեալ ուղղեցոյց մը որ ըստ այնմ կարենան լաւ առաջնորդել այլոց : Երրորդ եւ գլխաւոր խնդիրն է որ մեր ուսուցիչք մտնալով շատ անգամ իրենց դիրքը , կը կարծեն թէ ինչ որ դիւրամբանելի է ի-

րենց համար, նոյնը պէտք է լինի նաեւ իրենց աշակերտաց համար: Ո՛հ ապաքէն մանուկը կը սեփհականէ եւ կ'իւմացնէ ո եւ իցէ հատուծիւն՝ չնորհիւ բազմաթիւ եւ գործնական վարժութեանց. ո՛չ ապաքէն կրկնութիւնը գիտութեան հիմն է, հետեւաբար եւ վարժապետին աւանդած քերականական կանոնները այն ատեն միայն լաւ արդիւնք կ'արտադրեն երբ աշակերտը միջոց կ'ունենայ դասի ժամանակ իրեն աւանդուածը՝ իւր սեփհական գիտութեամբը կրկնել, երեքկնել եւ իւր յիշողութեանը մէջ արմատացնել: Կը պնդեմք նաեւ որ մինչեւ իսկ մեր միջնակարգ ուսումնարաններէն ելած աշակերտները եթէ մէծ մասով անկարող են ուղիղ գրելու, սորա պատճառը եւ հզորագոյն պատճառն այն է որ մեր գրական լեզուի ուսումը գրեթէ արհամարհուած է եւ բարձի թողի եղած է: Քանի որ մեր լեզուն շատ եւ շատ կարօտ է խնամածութեան, շատ եւ շատ կարեւոր է որ մեր ուսումնարանները զայն ուսման գլխաւոր առարկայ ընէին, զայն մշակէին, սորա հիմունքը, ոգին, քերականական եւ տրամաբանական կազմակերպութիւնը ծանօթացնէին իրենց աշակերտաց, այն աշակերտաց որք վաղը այդ ուսումնարաններէն դուրս ելլելով իրենց գրուածներով աւելի եւս պիտի նպաստեն լեզուին աղաւաղման:

Եւ ո՛վ չէ զիտած որ մեր աշխարհաբար լեզուն՝ կանոնաւոր կազմակերպութեան տեսակէտով ոչ միայն չէ յառաջադիմած, այլ որ աւելի ցաւալին է, օր ըստ օրէ աւելի իսառնաչփոթ եւ աղաւաղեալ վիճակի մը մատնուած է: « Հայերէն աշխարհաբար է, կարելի է ամեն ձեւով գրել » կ'ըսեն, եւ այդ գաղափարը մեր մէջ տոյն աստիճանի ընդհանրացած է որ ամեն ոք մեզմէ, կամ ագիտութեամբ, կամ անուշադրութեամբ կամ ընդհանուր հոսանքէն մղեալ, առանց բնաւ խիղճ ընելու՝ ամեն օր կը մեղանչէ լեզուին ոգւոյն, նորա քերականական եւ տրամաբանական կազմութեան հիմնական կանոնաց դէմ:

Ո՛վ որ զիտելու ձիրք ունի, դիւրաւ պիտի համոզուի որ մեր ամեն մէկ խօսակցութեան մէջ բազում սխալներ կը սպրդին. շատ անգամ ուղղական եւ հայցական հոլովները փոփոխակի կը գործածուին՝ հակառակ հաստատեալ կանոնաց, երբեմն տրականը նաեւ շփոթութեամբ կը գործածուի ուղղականի կամ հայցականի տեղ. լեզուի կազմակերպութեան անտեղեակ գրիչք՝ դեռ կը շարունակեն գրել գորօրինակ՝ « կովին մորթեցին », փոխանակ ըսելու « կովը մորթեցին »: —

Անորեայ բազմաթիւ սխալներու մէջէն, օրինակ մը միայն զատեցինք, ցոյց տալու համար թէ լեզուի ուսումը օր ըստ օրէ աղաւաղման վիճակի հասած է չնորհիւ լրագրական թեթեւ եւ անմշակ յօդուածներու, հետեւաբար մեր ուսումնարանք աւագ պարտականութիւն մ'ունին այս աղաւաղման դէմ թումը մի կանգնելու, աշխարհիկ լեզուի քերականական ուսումնա պատշաճապէս աւանդելով իրենց սանիկներուն:

Քերականութեանս այս մասը նախորդին անընդմիջական շարունակութիւնը լինելով, բնականաբար երրորդ եւ չորրորդ տարիներու ուսման նիւթը պիտի բովանդակէ իւր մէջը. բայց մենք այս անգամ կ'զգուշանանք ո եւ է սահման մը որոշելէ, ուսումնարանաց տեսուհներուն եւ բանիբուն ուսուցիչներուն թողլով ինքնին որոշել թէ ե՛րբ եւ ի՛նչ չափով պէտք է սկսին աւանդել քերականական ուսումը՝ իրենց սանիկներուն:

Մայրենի լեզուի սոյն « Քերականութեան տարերքը » շատ տեսակէտով կը տարբերի իւր նախորդներէն. սա իսկապէս կարօտ է մանրամասն բացատրական ձեռնարկի մը, այսինքն բանալիի մը, եւ որովհետեւ գրքիս յառաջաբանը չ'կրնար այդ նպատակին յատկանալ, պարտք կը համարիմք զայն պատրաստել ապագային մէջ. կը յուսամք որ մինչեւ այն ատեն մեր բանիմաց ուսուցիչները իրենց խոհեմ նկատողութիւնները պիտի փութան գրաւորապէս

հաղորդել մեզ, որպէսզի կատարեալ շրջանայեցութեամբ ձեռնարկած լինիմք աշխարհաբար լեզուի կազմակերպութեան որ կոչուած է կամայ ակամայ մեծ դեր մը կատարել արագային մէջ, առանց բնաւ անգոսնելու գրաբարը, այլ զայն միշտ առաջնոյն առաւել կամ նուազ ուղղեցոյց ունենալով. այս է մեր անկեղծ փափաքը եւ այս է անչուշտ ամեն անոնց իղձը որք ազգային լեզուի բարգաւաճումը՝ նորա կանոնաւոր կազմակերպութեան մէջ միայն կ'ուզեն տեսնել:



ՏԱՐԵՐԻՔ

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ



ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ԵՐՐՈՐԻ ԵՒ ԶՈՐՐՈՐԻ ՏԱՐԻՈՅ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՆԻԻԹ



Ա. ՆԱԽԱԴԱՍՈՒԹԵԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

ՀԱՄԱՌՕՏ ԵՒ ԸՆԴԱՐՁԱԿ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆՆԵՐ

- Ա. Աշակերտը կը կարդայ :
- Բ. Աշխատասէր աշակերտը կը կարդայ իւր դասը : Առաջին նախադասութիւնը կազմուած է միմիայն գլխաւոր անդամներէ : Երկրորդ նախադասութեան մէջ կան նաև պարզաբանող բառեր :
- ԿՑ. Այն նախադասութիւնը, որ միայն գլխաւոր անդամներէ բաղկացած է՝ կը կոչուի համարայ նախադասութիւն :
- Այն նախադասութիւնը, որոյ մէջ, բացի գլխաւոր անդամներէն՝ կան և պարզաբանող բառեր, կը կոչուի ընդհանր նախադասութիւն :

104. Գտէք համառօտ և ընդարձակ նախադասութիւնները : — Թռչունը կը թռչի : Երգող թռչունները ձմեռը կը մեկնին օտար երկիրներ : Գիւղացին կ'աշխատի : Գիւղացին գարնան արօրով հողը կը վարէ : Արտերը կը կանաչանան : Հնձողները արտերը կը հնձեն սուր մանգաղներով :

Մառերը կը ծաղկին : Խոտը կը կանաչնայ : Ձիւնը սպիտակ է : Սոխակը թռչուն է : Սոխակը տեղափոխիկ թռչուն է : Հաւը ընտանի թռչուն է : Գառնան ձեան մէջէն գլուխը կը բարձրացնէ սիրուն ձիւնածաղիկը : Կապուտակ մանուշակը գարնան կարապետն է :

105. Հետեւեալ նախադասութիւնները ընդարձակեցէք . — Կովը կը բառայէ : Շունը կը հաչէ : Ձին կ'ուտէ : Խոտը կը բուսնի : Աչակերտը կը գրէ : Արեւը կը լուսաւորէ : Վարժապետը կ'ուսուցանէ : Մայրս կը կարէ : Երկրագործը կը հերկէ : Պարտիզպանը կը տընկէ : Դերձակը կը ձևէ :

106. Հետեւեալ նախադասութիւնները համառօտեցէք : — Փոքրիկ երախայ մը կար, ծնողքը ուղարկեցին զնա ուսումնարան : Թռչունները կ'երգէին անուշիկ ձայնով : Երախային սիրտը յուզուեցաւ : Նա չէր ուզեր ուսումնարան երթալ : — Յուրտ գիշերն անցաւ : Առաւօտեան զովութիւնը տարածուեցաւ օդին մէջ : Փոքրիկ ամպերը բարձրացան երկինքը : Գարունը իւր ամենայն վայելչութեամբ իւր հրաշալի ազդեցութիւնը ներշնչեց ամեն շնչաւորներուն : Ընտանի կենդանիները սէղապատ դաշտերու պարարտ խոտերը կ'ուտեն : Թռչունները իրենց անփետուր ձագերու համար կերակուր կը տանին :

ՊԱՐԶԱԲԱՆՈՂ ԲԱՌԵՐՈՒ ՏԵՍԱԿՆԵՐԸ

- Ա. Գարնանային գեղեցիկ օրերը սկսան :
- Բ. Երկու մանուկ միասին կը խաղային : — Առաջին մանուկը մեծ էր իւր ընկերէն :
- Գ. Թագաւորին պալատը գեղեցիկ կերպով զարդարուած է :

49. Նշանակեալ բառերը դրուած են առարկային համար և զայն կը պարզաբանեն : Առարկայն պարզաբանող բառերը՝ շուրջը կը կոչուին : Որոշող բառերը որ և է առարկայ մը կը զատեն իրենց նման ուրիշ առարկայներէ :

Որոշող բառերը երեք տեսակ են՝ որպիսութիւնը որոշող՝ բերան, բարձր, որքանութիւնը՝ քանակութիւնը որոշող՝ երկու, առաջին, երկրորդ — որու պատկանիլը որոշող՝ Բագրատ, Գեղեցիկ, Կարգաւոր (*):

107. Հետեւեալ նախադասութեանց մէջ գտէք որոշող բառերը : — Յուրտ ձմեռն անցաւ : Գեղեցիկ գարունը սկսաւ : Անուշահոտ ծաղիկները ծլեցան : Ձմեռնային մերկ ծառերը զարդարուեցան : Տեղափոխիկ թռչունները տաք երկիրներէն մեր աշխարհը վերադարձան : Մառերու տերեւները բացուեցան : Խոտերու ցօղունները հաստացան : Վայրենի գազան-

(*) Այս երրորդ տեսակը որոշողին՝ յատկացուցիչ ալ կ'ըսեն :

ները թողուցին իրենց որչերը : Երկնային մարմինները
 զիշերները հանդարտ կը փայլին : — Տաք ամառը
 կուգայ . օգտակար պտուղները կը հասնին : Հարուստ
 ցորենի հասկերը դաշտին մէջ կը ծածանին . — Մեր
 ուսումնարանի մէջ շատ աշակերտներ կան : Առաջին
 նստարանին վրայ նստած են հինգ հոգի : Ես երկրորդ
 նստարանին վրայ կը նստիմ : Վերջին նստարանը դա-
 տարկ է : Իմ ընկերս շատ լաւ կը սերտէ : Ես առի
 ընկերոջս գիրքը : Ուսումնարանին բակը շատ ընդար-
 ձակ է : Մեր պարտէզը մեծ է : Պարտէզին ծառերը
 պտղատու են :

Մեր քաղաքը կայ բարձր եկեղեցի : Եկեղեցւոյ
 գմբէթը ծածկուած է մետաղով : Երկրորդ եկեղեցին
 փոքր է : — Գեղեցիկ թուշունը թռաւ : — Գրիգորին
 թուշունը թռաւ : Թուշուն մը թռաւ : — Գրիգորին մէկ
 գեղեցիկ թուշունը թռաւ :

108. Վերի (107) վարժութեան մէջ գտէք որոշող
 բառերը :

109. Գրեցէք ձեր կողմանէ կամ արտադրեցէք
 ձեր դասերէն քանի մը նախադասութիւններ որոշող
 բառերուն իւրաքանչիւր տեսակէն :

110. Որոշող բառերու տակը գիծ քաշեցէք :

Ո՞ւր կ'երթաս լողալով հէզ ոստ դու ծառի—ն ,
 Տես , չ'ձգեն քեզ ալիք՝ անդունդը ծովի—ն :
 Ինչպէս որբ .՝ անտէր , թշուառ , անպաշտպան ,
 Որպէս ձեռքն ինկած չարանենդ մարդկան .
 Փրկութեան հընար քեզ ա՛լ չի մնար .
 Զոհ կը լինիս , խեղճո՛ւկ , ալեաց չարաչար :

Ասա՛ դու ինձ , ո՛ստդ վարդի ,
 Ո՞ւր ես ծըլեր , ո՞ւր ես ծաղկեր .
 Դու ո՞ր հովտի կամ՝ ո՞ր դաշտի
 Զարդարանքն ես եղեր .
 Այն ո՞ր անգութ ձեռն է քաղեր
 Քեզ քո թըփէն մայրենական ,
 Կամ ո՞ր անգութ է քեզ տնկեր
 Յայս աշխարհիս պանդըխտական :

- Ա. Յովհաննէս աշակերտը կը կարդար :
- Բ. Իմ ընկերս Յովհաննէսը կը կարդար :
- Գ. Ոլիմպոս լեռը ձիւնապատ է :

50. Վերի օրինակներուն մէջ նշանակ-
 ուած բառերը միեւնոյն առարկայի անունն
 են զոր կը պարզաբանեն : Անոնք բացայայտ
 կերպով կը ցուցնեն թէ առարկայն չէ կամ
 չի է . — ո՞ր աշակերտը՝ Յովհաննէս . ո՞ր Յով-
 հաննէսը՝ ի՞նչեր . ո՞ր լեռը՝ Ոլիմպոս :

Միեւնոյն առարկայի երկու անուններէն
 մէկը որ զմիւսը կը պարզաբանէ , կը կոչուի
 Բացայայտիչ :

Բացայայտիչը առարկայի երկու անուն-
 ներուն մէջէն որոշեալ յօդ չ'ունեցողն է և
 սովորաբար նախադաս կը լինի :

111. Հետեւեալ նախադասութեանց մէջ գտէք
 բացայայտիչ բառերը : — Խաչնարած Դաւիթը՝ սպան-

նեց Գողիաթը: Յորդանան գետը՝ ուր առաջին անգամ Յիսուս՝ Յովհաննէս Մկրտչի ձեռամբ մկրտուեցաւ, Գալիլիացուց ծովուն շրջակայ լեռներէն կը բղխի և Մեռեալ ծովը կը թափի:

112. Գրեցէք քանի մը նախադասութիւններ ձեր բարեկամներուն, ուսուցիչներուն, ծանօթներուն, ընկերներուն՝ ձեր քաղաքի, գիւղի կամ նահանգի մէջ եղած լեռներուն, գետերուն, լճերուն անուններէն՝ բացայայտիչ բառերով:

Ա. Աշակերտը կը գրէ:

Բ. Աշակերտը կը գրէ իւր դասը գրչով:

Յ1. Առաջին նախադասութիւնը համառօտ է: Երկրորդ նախադասութեան մէջ պարզաբանող բառեր դրուած են *արեւելք, հարաւ, և նախադասութեան միտքը կը լրացնեն: Լրացող բառ ըսելով կը հասկնանք արեւելք, հարաւ, արեւմուտք, և հարցումներու միջնորդութեամբ:*

113. Հարցումներով գտէք լրացնող բառերը: — Հայրը կը սիրէ իւր որդին: Որդին կը յարգէ իւր հայրը: Հայրը որդւոյն գիրք տուաւ: Որդին հօրը շնորհակալ եղաւ: Գիւղացին կտրեց ծառը: Որսորդը սպաննեց եղնիկ մը: Մայրը կանչեց իւր աղջիկը: — Ես փողերս գրքի տուի: Զուրը հարկաւոր է թռչուններուն և կենդանիներուն: Վազելու ժամանակը ոտքդ քարի զարկիր: — Մենք ծառէն պտուղ քաղեցինք: Դուք ձեր բարեկամէն նամակ կ'ստանաք: Վարպետը

ոսկիէ գեղեցիկ շղթայներ շինեց: Ես վաճառականէն գլխարկ մը գնեցի: — Երկրագործը արօրով կը հերկէ արտը: Հայրը կ'ուրախանայ իւր զաւակներով: Մենք աչքերով կը տեսնենք, ականջով կը լսենք, քթով կը հոտոտենք, լեզուով կը ճաշակենք, իսկ մատներով կը շոշափենք:

116. Հետեւեալ ստորագրեալներու քովը՝ լրացնող բառեր դրէք: — Կովը կերաւ: Զկնորսը բռնեց: Մայրըս կարեց: Գարտիզպանը քաղեց: Հնձողը հնձեց: Դերձակը ձեւեց: Հիւսնը շինեց: Վարժապետը կարդացուց: Մայրը եփեց: Դայրը պատուտեց: Արծիւը գիշատեց: Շունը կը պահպանէ: (Շունը կը պահպանէ հօտը՝ յափշտակող գազաններէն):

Այժմ աշակերտը՝ տունը ուշի ուշով կը կարդայ իւր դասը:

Աշակերտը քանի մը անգամ կը կարդայ դասը՝ սովորելու համար:

Յ2. Նշանակեալ բառերը դրուած են գործողութեան համար, բայց անոր միտքը չ'են լրացներ. նոքա կը ցուցնեն գործողութեան այլևայլ *արեւելք, հարաւ, արեւմուտք, և արեւելք* թէ ե՞րբ կատարուեր է գործողութիւնը, բ. *արեւմուտք* թէ ե՞րբ կատարուեր է, գ. *արեւելք* թէ ի՞նչպէ՞ կատարուեր է, գ. *արեւմուտք* թէ ի՞նչպէ՞ կամ *արեւելք* անբա՛ կատարուեր է, և վերջապէս ե. *արեւմուտք* թէ ի՞նչպէ՞, ի՞նչ պարագայով կատարուեր է:

Ուրեմն պարագայներու յատկացեալ բառերը հինգ տեսակ կը լինին, ժամանակական, տեղական, որակական, քանակական, պատճառական :

Պարագայներու յատկացեալ բառերը գլխաւորապէս հետեւեալ հարցումներու կը պատասխանեն՝ ե՞րբ, ո՞ւր, ո՞րտեղ, ի՞նչպէս, ո՞րքան, քանի՞ անգամ, ինչո՞ւ, ինչո՞ւ համար :

115. Հետեւեալ նախադասութեանց մէջ գտէ՛ք պարագայներու յատկացեալ բառերը և որոշեցէ՛ք անոնց տեսակները : — Ինչպէ՛ս գեղեցիկ կ'երգէր սոխակը իւր երգը՝ վարդի դեռափթիթ կոկոնին վրայ : Հազիւ մթնցեր էր և ահա զմեզ սաստիկ կը տանջէին ցուրտը և անձրեւը : Այսօր սաստիկ հրդեհ բորբոքեցաւ քաղաքին մէկ ծայրը : Բարեբաղդաբար կրակը շուտ մարեցաւ : Ես գիտեմ հայերէն կարդալ : Իու գիտես ուսերէն և ֆռանսերէն խօսիլ : Կամայ ականայ պիտի տաք ձեր զէնքերը : Կամաց գնացէ՛ք, մենք ալ շուտով կը հասնինք ձեզ : Ամենեւին փոյթս չէ՛ թէ դու ետ կը մնաս : Ես բոլորովին պատրաստ չէի երբ դուք զիս կանչեցիք : Ի սպառ մոռցած էի թէ խօսք տուած եմ : Շուտով երթանք, և շուտով սկսինք գործը : Բնաւ կարելի չէ յետաձգել զայն :

116. Բնութեան գեղեցկութիւնն ալ չէր սփռուի ծերունին . անոր երեսը այլ ևս չէր ժպտեր : Մահուան մերձաւորութիւնը բոլորովին չփոթեր էր զնա : Գիւղացին միայնակ կանգնած էր բլրոյն վրայ և ուշի ուշով կը դիտէր չրջակայքը, ուր Արարիչը ձրի սփռած

էր իւր առատ պարգեւները : Յաճախ մարդս այնպիսի բաներ կը լսէ, որոց ստուգիւ դժուարաւ կը հաւատայ : Մայրը ստէպ թուղթ կը գրէր իւր որդւոյն, որ անիրաւաբար գրեթէ մոռցած էր զնա : Յանկարծակի՝ այն նեղութենէն յետոյ, արեգակը կը խաւարի : Ուրիշներու մասին խօսած ժամանակդ՝ պէտք է մեծ զգուշութեամբ խօսիս : Աստուած յայտնապէս խօսեցաւ Մովսէսի հետ : Մովսէս ուժգին զարկաւ գաւազանով և ապառաժէն անմիջապէս առատ ջուր հանեց, Վերջապէս քառասուն տարի ետքը, Իսրայէլացիք հասան Քանանացոց երկիրը : Հայր և որդի ընտանեբար կը խօսէին . հայրը մեղմաբար կը ցուցնէր որդւոյն կենաց չարիքը : Բամբասանքը չարաչար կը վշտացնեն մարդու սիրտը : Անշուշտ կը հասկընանք եթէ մինչև անգամ հարեւանցի պատմէք մեզ եգիպտացոց յաղթուելու պատճառները : Ուշադիր մանուկը պէտք է որ շատ լսէ և քիչ խօսի : Ո՞ւր կ'երթաս, ուսկի՞ց կուգաս, պանդո՛ւխտ սոխակ : Դըրսէն զարդարուած էր, բայց ներսէն լի էր ապականութեամբ :

117. Ե՞րբ տեսած էք որ այրին իւր զարդերով թանկագին՝ ոտքէն գլուխը պճնուի : Այխատասէրը միշտ հաց կ'ունենայ, երբէք չսովիր : Երբեմն էի լոյս, իսկ այժմ եմ խաւար : Մերթ կ'որոտաս, մերթ կ'ամպես, մերթ կը մթնես մռայլ, մերթ կը տեղաս անձրև, մերթ հարաւային հողմի նման սաստիկ կը փչես : Ես զգաստ կը լինիմ : Լաւ է անագան քան երբէք : Բժիշկը դեռ չ'հասած, հիւանդն արդէն մեռած էր : Առաւօտը կանուխ մենք եկեղեցի գնացինք : Առաջուց լսած էինք, որ քահանան քարոզ պիտի տայ : Առ այժմ մենք պէտք չ'ունինք ձեր օգնութեանը, առաջ ու-

բիշներուն օգնեցէք : Նախ մտածէ՛ և ապա խօսէ՛ :
Նախ և առաջ նիւթը պատրաստէ՛ և յետոյ գրէ՛ : Աս-
տուծոյ նախախնամութիւնը յաւիտեան կայ :

118. Հարցումներու օգնութեամբ վերոգրեալ
վարժութեանց պարագայական բառերը չորս խումբի
բաժնեցէ՛ք՝ որակական, քանակական, ժամանակա-
կան, տեղական և ձեր յիշատակարանի տետրակին
մէջ նշանակեցէք ապագային համար :

119. Վերոյիշեալ երեք վարժութիւնները (113, 116,
117) վերլուծեցէք տրամաբանօրէն և ցուցուցէք գըլ-
խաւոր և երկրորդական անդամները, երկրորդական
անդամներու տեսակները՝ որոշող, լրացնող, պարա-
գայական, և եթէ կայ՝ բացայայտիչ բառերը : — (Բե-
րանացի և ապա գրաւոր) :

Աստուած իմ, Աստուած իմ, ընդէ՞ր թողեր զիս :
Հա՛յր, հա՛յր, վիշտը չարաչար կը ճնշէ հոգիս :

53. Այն առարկային անունը, որուն
կ'ուղղենք խօսքերնիս՝ կոչու
բառ կ'ըսուի :
Կոչահան բառերը իրարմէ և նախադասու-
թեան միւս անդամներէն ստորակէտով կը
բաժնուին : Կոչական բառի առաջին վան-
կին վրայ շեշտ կը դրուի, եթէ անոր նա-
խընթաց բառը շեշտ չ'ունի :

120. Գտէ՛ք կոչական բառերը : — Ասա՛ դու ինձ,
ո՛սագ վարդի, ո՛ւր ծըր ես, ո՛ւր ծաղկեր ես : Տէ՛ր,
օրհնէ՛ իմ ձեռքերուս վաստակը : Օրհնէ՛, Տէր, իմ

ձեռաց վաստակը : Ինչո՞ւ կը խրխնջաս ի՛մ ձի եռան-
դուն : Քո՛յրիկ, կանչեց քաջ պատանին : Ո՛վ լուսին,
լուսին, արդէն քանի՞ դար . . . Գնա՛, եղբայր, Աստ-
ուած քեզ հետ : Հայրի՛կ, դարձեալ թռչուն մը թռաւ :
Քուն եղի՛ր, զաւակս, խփէ՛ աչքերդ : Հազար երանի՛
քեզ, մանուկ անբիծ, որ շուտ հեռացար դու այս աշ-
խարհէս :

ՄԻԱԻՈՐԵԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆ

- Ա. Աչակերտը կը կարգար, կը գրէր և կը նկարէր :
- Բ. Ապակին թափանցիկ է, ջինջ և դիւրաբեկ :
- Գ. Կարապետը, Յովհաննէսը և Մկրտիչը ուսում-
նարան գնացին :
- Դ. Արեգակը, լուսինը և աստեղք երկնային մար-
միններ են :
- Ե. Ուսուցիչը բերաւ կարմիր, կանաչ և կապոյտ
թանաք :
- Զ. Որսորդն սպաննեց վայրի եղնիկ մը և այժ մը :
Լուծելով վերոգրեալ նախադասութիւնները, մենք
կը նկատենք .
- Ա. Առաջին և երկրորդ նախադասութեան մէջ
ենթակայ մը որ քանի մը ստորոգրեալներ ունի :
- Բ. Երրորդ և չորրորդ նախադասութեան մէջ մի
ստորոգրեալ որ քանի մը ենթակայներ ունի :
- Գ. Հինգերորդ նախադասութեան մէջ առարկայի
մը համար գրուած են քանի մը նմանօրինակ որո-
շողներ :
- Դ. Վեցերորդ նախադասութեան մէջ գործողու-
թեան մը համար գրուած են քանի մը նմանօրինակ
լրացնողներ :

Ս. Այդ նախադասութիւններէն իւրաքանչիւրը կարող ենք այնքան նախադասութեան վերածել որքան կրկնուած անդամներ կան . զօրօրինակ՝ առաջին նախադասութեանէն կը կազմենք՝ 1. Աշակերտը կը կարգար : 2. Աշակերտը կը գրէր : 3. Աշակերտը կը նկարէր :

Տ4. Այն նախադասութիւնը, որոյ մէջ անդամներուն մին կամ միւսը քանի մը անգամ կրկնուած է՝ կը կոչուի *մասնաւոր նախադասութիւն* :

Տ5. Այն նախադասութիւնը, որոյ մէջ կրկնուած անդամներ չ'կան և որ իւր մէջ միմիայն մէկ իմաստ կ'ամփոփէ, կը կոչուի *պարզ նախադասութիւն* :

Տ6. Պարզ նախադասութեան մէջ գլխաւոր և երկրորդական անդամները և ոչ մի կէտով կը բաժնուին իրարմէ :

Տ7. Միաւորեալ նախադասութեան մէջ կրկնուած անդամները ստորակէտներով կը բաժնուին երբեք և բառէն առաջ միայն ըստ ստորակէտ չ'դրուի, եթէ դա կրկնուած չէ : — Ես գիտեմ լ' կարդալ, լ' գրել, լ' նկարել : — Ես գիտեմ կարդալ, գրել և նկարել :

121. Հետեւեալ պարզ նախադասութիւններէն կազմեցէք միաւորեալ նախադասութիւններ : — Յորենը արդէն հասած է : Գարին արդէն հասած է : Գետերը սառած են, լճերը սառած են : Խնձորենին գարնան կը ծաղկի : Տանձենին գարնան կը ծաղկի :

Գորտերը խոնաւ տեղեր կ'ապրին, դօդօշները խոնաւ տեղեր կ'ապրին : Բզէզները կը փսասեն բոյսերուն, թրթուրները կը փսասեն բոյսերուն : Այլուէսը խորամանկ է, աղուէսը ճարպիկ է : Արջը թանձրամիտ է, արջը դանդաղ է : Սկիւռը մագլցելով կ'ելլէ ծառերուն վրայ, սկիւռը կ'ոստոստէ ծառերուն վրայ : Շունը մսակեր կենդանի է . կատուն մսակեր կենդանի է : Ծիծեռնակը տեղափոխիկ թռչուն է . սոխակը տեղափոխիկ թռչուն է : Ձին ընտանի կենդանի է : Կովը ընտանի կենդանի է, կովը կաթնասուն կենդանի է, կովը չորքոտանի կենդանի է :

122. Կազմեցէք միաւորեալ նախադասութիւններ : — Գլուխը՝ մարդուս մարմնոյն մասն է : Ձեռքերը մարդուս մարմնոյն անդամներն են . ոտքերը մարդուս մարմնոյն անդամներն են : Աշնան՝ գիւղացին օրավարը(*) կը հերկէ . աշնան՝ գիւղացին կը սերմանէ օրավարը . աշնան՝ գիւղացին կը ցաքանէ(**) օրավարը : Գիւղացին կանուխ կ'արթննայ, գիւղացին կը լուացուի, գիւղացին Աստուծոյ կ'աղօթէ, գիւղացին կ'սկսի իւր ծանր գործը : Գիւղացին ցորենի՝ խուրճերը կալը տարաւ . գիւղացին ցորենի հատիկները տոպրակի մէջ դրաւ . գիւղացին ցորենի հատերը ջաղացը տարաւ . գիւղացին ցորենը աղալ տուաւ . գիւղացին ալիւրը տուն բերաւ . գիւղացին ալիւրէն թարմ հաց թխեց :

123. Հետեւեալ միաւորեալ նախադասութիւնները պարզի վերածեցէք : — Բուն և Ղղիկը գիշերային

(*) Օրավար . — Հողագործին մէկ օրուան մէջ մշակած հողին չափը :
 (**) Ցաքանէ . — Տանկերէն՝ «թարաքմալաք», այսինքն հերկուած հողը՝ թարաքով կարգի դնել :

կենդանիներ են : Կովը և ձին ընտանի կենդանիներ են : Ձին և շունը մարդուս հաւատարիմ ընկերներ են : Այծերը և ոչխարները մեզ կաթ և միս կուտան : Խնձորը և տանձը ախորժահամ պտուղներ են : Գազարը, սոխը, սխտորը և բողկը բանջարեղէն բոյսեր են : Բաղերը կը թռչին, կը լողան և կը պտտին : Գայլերը զգոյշ և երկչոտ են : Եղջերուն արագ կը վազէ, խրամատներու վրայէն կ'ոստնու համարձակ և գետերէն լողալով կ'անցնի :

124. Հետեւեալ զոյգ նախադասութեանց մէջէն միաւորեալ նախադասութիւններ կազմեցէք, կապելով զանոնք՝ Քոյ, ոյ բառերով . — Կէտը կաթնասուն կենդանի է . կէտը թռչուն չէ : Երկիրս կը շարժի, արեգակը չ'շարժիր : Կշտանալու համար օձը չ'խայթեր, չարութեան համար օձը կը խայթէ : Լուսինը կը լուսաւորէ . լուսինը չ'տաքցներ : Յորենը գեղեցիկ չէ, ցորենը օգտակար է : Մանուկը ընդունակ է . մանուկը ծոյլ է : Աստուած համբերող է . Աստուած սաստիկ կը պատժէ : Եղէգը քամիին ճնշումէն կը թեքի . եղէգը քամիին ճնշումէն չ'կոտրիր : Տանձը համեղ է, տանձը թանգ է : Ոսկին փոքր է, ոսկին թանգ է : Կուր գետը մեծ չէ, Վոլկա գետը մեծ է : Էջմիածինը հեռի է, Կ. Պոլիս մեզի շատ մօտ է : Կայծակը զարհուրելի է, կայծակը մռայլ լոյս կ'արձակէ : Գործելէ մի' վախնար, անգործութենէ վախցիր : Չարութեան՝ չարութեամբ մի' պատասխաններ, չարութեան՝ բարութեամբ պատասխանէ : Քեզմէ խնդրողին մի' մերժեր, քեզմէ խնդրողին օգնէ :

ԲԱՂԱԴՐԵԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՆ

Ա. Ներսէս հինգերորդը՝ որ ինչ նշանաւոր կախովիներէն մէկն էր, շատ ազգօգուտ գործեր կատարած է :

Բ. Կան այնպիսի մարդիկ, որոնք իրենց պարտականութիւնը որքան թեւեթ չեն կատարեր :

- Գ. Ես կը կատարեմ ինչ որ ինչ կը յանջեն :
- Դ. Ուր որ տե՛ս գրե՛նք, այնտեղ արժիւնները կը ժողովուին :
- Ե. Բոյսերը կը զուարթանան, երբ անոնք կուտան :
- Զ. Մանուկները աշխատեցան, որտե՛ս որ կարողացան :
- Է. Դու կը պատժուիս, ինչպէ՛ս կը պարտանին ծոյլ ծանկները :
- Ը. Ես կը ջանամ, որդեգրի լաւ մարդ լինիմ :

Վերոգրեալ նախադասութեանց իւրաքանչիւրը երկու մասէ բաղկացած է, որոց մէն մի մասը առանձին նախադասութիւն է և ունի իւր գլխաւոր և երկրորդական անդամները : Այդ երկու նախադասութեանց մին անկախ է, ինքնիրեն պարզ և որոշ կը հասկցուի, իսկ միւսը, որ մենք կէտադրութեամբ բաժնած ենք՝ առաջինէն կախումն ունի և առանց անոր պարզ չի հասկցուիր : Կէտադրեալ նախադասութիւնները ընդհակառակն դրուած են միւս նախադասութեանց միաքը պարզաբանելու համար : Եթէ անկախ նախադասութեանց հարցնենք, կը տեսնենք որ կէտադրեալ նախադասութիւնները ճիշտ այն հարցումներուն կը պատասխանեն, որոց կը համապատասխանեն պարզ նախադասութեան երկրորդական անդամները :

Յ8. Ենթակայն, ստորագրեալը, որպէս և նախադասութեան միւս անդամները, կրնան պարզաբանուիլ ոչ միայն առանձին բառերով այլ և ամբողջ նախադասութիւններով :

Այն նախադասութիւնը որ կը պարզաբանէ միւս նախադասութեան որ և իցէ մի անդամը, կը կոչուի երկրորդական նախադասութիւն:

Այն նախադասութիւնը որմէ կախումն ունի երկրորդականը, կը կոչուի բխոր:

Գլխաւոր և երկրորդական նախադասութիւնը միասին՝ կը կոչուին բարդ եւ նախադասութիւն:

59. Երկրորդական նախադասութիւնը գլխաւորէն կը բաժնուի ստորակէտով, իսկ եթէ երկրորդականը ինկած է գլխաւոր նախադասութեան: անդամներու մէջ, կը բաժնուի երկու ստորակէտներով, երբեմն ալ բութ և ստորակէտով:

60. Երկրորդական նախադասութիւնները, իրենց կատարած սրաշտօնին համեմատ, կը լինին՝ բացայայտիչ, սրոշող, լրացնող և պարագայական:

123. Հետեւեալ նախադասութեանց մէջ գտէ՛ք երկրորդականները, հարցուցէ՛ք և լուծեցէ՛ք, որոշելով՝ թէ գլխաւոր նախադասութեան ո՞ր անդամի համար գրուած են: — Երուսաղէմի դռները կը փակեն՝ երբ արեգակը մայրը մտնէ: Երբ հասկերու մէջ ցորենի հատիկները կ'ամրանան և կը լեցուին՝ այն ժամանակ կը հնձեն զայնս: Երբ վառարանի կրակը մոխրով կը ծածկուի, այն ժամանակ կը փակեն ծընեկոյզը կափարիչով:

Գաղղայի անապատը՝ այրին մէջ կը քնանար Սաւուղ, երբ Դաւիթ նորա լողիկի ծայրէն կտրեց: Աբրահամ նահապետը իւր գերդաստանով գաղթեց այն աշխարհը, ուր Տէրը հրամայած էր անոր: Պաղ քամիներ կը փչեն այնտեղէն, ուր տարածուած է սառուցեալ ովկիանոսը: Սոխակը կ'երգէր այնպէս, որ աշխարհ ամեն անոր ականջ կը ղնէր: Առիւծն այնպէս մռնչեց որ բոլոր զազանները սասանեցան:

126. Որսորդն ունի հրացան մը, որ շատ ճիշտ կը հանդիպցնէ նպատակին: Ծառին վրայ թառած էր թռչուն մը, որոյ փետուրները գեղեցկապէս կը փայլէին: Փոքրիկ ձագերը, որոնք քաղցած իրենց մօրը կ'սպասէին, ցաւալի ձայներ կ'արձակէին: Աշխատասէր մեղուն, որ իրեն համար ծաղիկներուն մէջէն մեղր կը հաւաքէր, ծանրաբեռնած թռաւ դէպ ի փեթակը: Ի՞նչ ակորժալուր է հովուական սրնգի ձայնը մայիս ամսուն, երբ նա հեռուէն մեր ականջին կը հասնի: Դուք մի՛ կարծէք թէ հովուը միայն իւր սրտի ուրախութեան համար կը նուագէ, նա այդու կը հասկցնէ իւր հօտին թէ ժամանակ է ժողովուելու իւր շուրջը և կամ ուղեւորիլ դէպ ի փարախ, ուր սիրուն գառնուկները կ'սպասեն իրենց մայրերուն:

127. Երթանք, ժողվենք դաշտերէն ինչ որ Արարիչը պարգեւած է մեզ: Կան այնպիսի տեղեր ուր հին ժամանակի բոյսերու փոտելէն սեւահող է գոյացած: Առաւօտը, երբ անկողնէդ կ'ընես, հազար լեռներու ծայրերէն ամպ և ծուխ երկինք կը բարձրանան: Եթէ դրախտ կ'ուզես, այստեղ կեցիր: Երբ

մարդ լեռնային գիւղի մը մէջ պատահի որ հիւր ըլ-
լայ, շաբաթներով՝ ամիսներով կը հիւրասիրեն զնա :

61. Երբեմն խօսող անձը, իւր ըսածնե-
րուն իբր հաստատութիւն, ուրիշներուն
ըսած խօսքերը նոյնութեամբ առաջ կը
բերէ : Այն նախադասութիւնը, որ ու-
րիշի խօսքերէն կազմուած է, կը կոչուի
նախադասութիւն :

62. Յաւելեալ նախադասութենէն ա-
ռաջ կը դրուի միջակէտ և երկու կողմա-
նէ չակերտներ : Երբ մի քանի անձերու
խօսակցութիւն կը պատմուի՝ այն ժամա-
նակ մէկուն ըսածին առջեւը չակերտներ
կը դնեն, իսկ միւսին առջեւը փոքրիկ գիծ
մը (« ») և չակերտ :

128. Կէտերը և հարկաւոր նշաները դրէ՛ք : —
Երբ մեծամեծք իրենց գլխաւորին համար Պարսից
արքային բողոքել կ'ուզէին եկան Ս. Սահակի մօտ և
առաջարկեցին անոր որ նա ալ միաբանի իրենց հետ :
Արժանաւոր հայրապետը պատասխանեց Երէք ես
չեմ փոխարինեմ իմ հիւանդ ոչխարս ուրիշի ա-
ռողջ գազանին հետ :

Յիսուս երբ վերջին գիշերը աղօթելու կ'երթար
ըսաւ իւր աշակերտներուն Արթուն կեցէ՛ք և աղօ-
թեցէ՛ք որ փորձութեան մէջ չ'իյնաք :

Գարունը ըսաւ ես եմ գիւղացիին հաց տուողը :
Ամառը պատասխանեց կարող չես տալ, եթէ ես
չ'ուզեմ :

Գիւղացին մտածեց ինքնիրեն Ամենայն ինչ Աս-
տուծոյ ձեռքն է :

63. Շատ անգամ նախադասութեան
անդամոց մէջ կը մտնէ մի առանձին նա-
խադասութիւն որ ամենեւին կապ չ'ունի
գլխաւոր նախադասութեան հետ և կա-
րելի է առանց իմաստին պարզութիւնը
խանգարելու դուրս թողուլ : Այդպիսի
նախադասութիւնները կը կոչուին *փոխակէտ* :

— Իուք, Կերեւոյ թէ, շուտով կը վերադառ-
նաք քաղաքէն : Մենք, շոք հասնական է, որ բը-
նաւ չ'վերադառնանք :

64. Շատ անգամ բաղադրեալ նախա-
դասութիւնը կրնայ կազմուած ըլլալ քա-
նի մը ընդարձակ պարզ նախադասութիւն-
ների համալուր նշանակութեամբ : Համադօր
նախադասութիւնները կը բաժնուին ի-
րարմէ միջակէտով, իսկ եթէ շատ համա-
ռօտ են, ստորակէտով կը բաժնուին :

129. Ահա գայ ամառ այրող եղանակ,
Անխոնջ վաստակի պտղոյ ժամանակ .
Իւր աստուածային շերմութեան ոգին,
Կենսատու շնչով ծաւալէ արփին .
Հասած է ծիրան, տանձը մեղրածոր,
Կարմիր վարդի պէս կը փայլի խնձոր,
Դեղին սաթի պէս կախուած է ողկոյզ .

Մանկտին կը գրաւէ սալոր, նուռ ու թուզ .
 Զըմեռուկ, սեխով լի է բուրաստան
 Ոսկի ալիքով ծըփի անդաստան .
 Եւ արտօրէից ծանրացած հասկեր ,
 Աչք հիացնեն զինչ չքնաղ պատկեր :

65. Երբ գլխաւոր նախագասու թեանց
 կը յաջորդէ միացեալ նախագասու թիւն
 մը , որոյ կրկնուած անդամները տեսակ
 մը համրանքի ձեւ կ'առնուն , այն ժամա-
 նակ այդ երկու նախագասու թեանց մէջ
 բուզ (՝) կը դրուի : — Գիւղացին քաղա-
 քէն զանազան բաներ գնեց՝ շաքար , թէյ ,
 զգեստներ , կաւեղէն , պղնձեղէն և ուրիշ
 տնտկան կահ կարասիք :

66. Բաղադրեալ նախագասու թիւնը
 միացեալէն և միացեալը բաղադրեալէն
 միջակէտով կը բաժնուի :

130. Հետեւեալ նախագասու թիւները կարգա-
 ցէք մինչեւ վերջակէտը , գլխաւոր մասերը զատեցէք
 իրարմէ և նախագասու թեան իւրաքանչիւր մասը ա-
 ռանձին առնելով՝ լուծեցէ՛ք :

Կանայք տաւարի հեա են զբաղած զանոնք կթե-
 լու կաթը ժողվելու իւղ ու պանիր շինելու երիտա-
 սարդուհիք տաւարը լեռը կը քչեն կամ բուրդ ու իւղ
 կը տանին փողոցը կը ծախեն և ձեռք բերած ստա-
 կովը իրենց տան համար կարեւոր իրերը կը գնեն :
 Միայն այս չէ կանանց գործը ձմեռը ցերեկները

ճախարակ կը մանեն կտաւ շալ գորգ կամ կա-
 պերտ կը գործեն և իրենց օրը գոհ և զուարթ կ'ան-
 ցընեն : Այդտեղ հարսը և աղջիկը ազատ կը պտըտին
 և երեսնին քօղով չեն ծածկեր ինչպէս տանը մէջ :
 Մէկ տան պէս են և որուն վրանը մանեա զամենքը
 առողջ ուրախ և զուարթ կը գտնես : Այն օդի ու
 ջրի և այն ծագկի ու կանաչի հոտը ու համը առ-
 նողին հոգին և երեսին գոյնը ինչ կը լինի՝ հապա :
 Երբ լեռները հիւր կը պատահի շաբաթներով ա-
 միսներով չեն թողուր որ հեռանայ աղբիւրներու
 կարկաջիւնը ջրերու խոխոջիւնը ծառերու սուսա-
 փիւնը թռչուններուն ճռուողիւնը հովուի սրինգը
 գառնուկներու ոչխարներու բառաչիւնը այս ամենը
 կարծես քեզ կ'ըսեն «Դրախտ կ'ուզես այստեղ կե-
 ցի՛ր այսպէս կեցի՛ր սիրտդ անմեղ միաքոյ յստակ» :

Մ Ա Ս Ո Ւ Ն Ք Բ Ա Ն Ի

Ա. ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆ

67. Ամեն առարկայ անուռն ունի (3) : Ա-
 ռարկայներու անուռնները քոյակն անուռն կը կոչ-
 ու ին :

68. Ինչպէս տեսանք՝ առարկայն , ու-
 րեմն և գոյական անուռնը նախագասու-
 թեան մէջ կը կատարէ՝ ենթակայի , բայցա-
 յայտիչի , լրացնողի , միանգամայն և ստո-
 բողրեալի պաշտօնը՝ այս յետինս օժան-

դակ բայերու օգնութեամբ (եմ, լինիմ) . երբեմն կարող է և պարագայական բառերու պաշտօն կատարել :

131. Կարգացէք 132րդ վարժութիւնը, գոյական անունները դտէք և իմացէք թէ իւրաքանչիւր նախադասութեան մէջ ի՞նչ պաշտօն կը կատարեն :

132. Հետեւեալ գոյական անունները ենթակայ ընդունելով՝ քովերնին գոյական ստորոգրեալներ դրէք է բայի օգնութեամբ . — Ոսկի, շուշան, մանուշակ, ուռենի, Փարիզ, Օտեսա, Էջմիածին, հրացան, խաղող, ճնճղուկ, գայլ, արծիւ, առիւծ, ցորեն, գարի, տառելի, տուն, ջուր, հաց . . .

133. Այնպիսի նախադասութիւններ կազմեցէք, որոնց մէջ հետեւեալ գոյականները ստորոգրեալ լինին . — Պտուղ է . թուփ է . ծաղիկ է . բանջար է . վայրենի գազան է . ընտանի թռչուն է . չորքոտանի կենդանի է . խաղալիկ է . թունաւոր միջատ է . օգտակար միջատ է . երկրագործական գործիք է . ձիուկերակուր է . մարդու ընկեր է .

134. Հետեւեալ նախադասութեանց վրայ գոյական որոշողներ աւելցուցէք . . . պատերը բարձր են (ի՞նչ բանի պատերը) . . . գմբէթը կը փայլի . . . ճիւղերը կը կոտորին . . . պարտիզպանը հիւանդացի է . . . թերթերը թառամեր են . . . գիրքը կորաւ (ո՞ւմ գիրքը) . . . ոտքը կոտրեցաւ . . . աչքը կը ցաւի . . . թևերը թուլցան . . . շունչը կտրեցաւ . . . տունը գեղեցիկ է . . . այգին մեծ է . . .

135. Հետեւեալ նախադասութեանց վրայ աւելցուցէք գոյական բացայայտիչներ . — վարժապետը եկաւ (ո՞ր վարժապետը) : Ընկերս զնաց : Եղբարդ կ'աշ-

խատի : Կարապետը աշխատասէր է . . . թագաւորը խաղաղասէր էր : . . . Յովհաննէս յաղթանդամ էր : . . . Յուդա Մակաբէ հզօր և հայրենասէր էր : . . . Լեռները կանգնած են դէմ առ դէմ : . . . Գաղաքը շինուած է ծովեզերքը :

136. Հետեւեալ նախադասութեանց վրայ աւելցուցէք գոյական լրացնողներ . — Գիւղացին կը հերկէ (ի՞նչ, ինչո՞վ) : Գիւղացին կազմեց արօրը (ինչէ՞) : Նա շատ փող տուաւ (ի՞նչ բանի) : Ուսուցիչը պարգև տուաւ (որո՞ւ, ինչո՞վ) : Հարուստները կ'օգնեն (ո՞ւմ) : Օդը և ջուրը կարևոր են (ո՞ւմ և ի՞նչ բանի) : Զուրը մենք կ'ստանանք (ուսկի՞ց) .

137. Գտէք գոյական պարագայականներ . — Առաւօտը մենք ուսումնարան կ'երթանք : Երեկոյնները ուշադրութեամբ կը սովորինք մեր դասերը : Անցեալ տարի մենք ուսումնարան զնացինք : Այս տարի մենք քաղաքը կը մնանք : Եկեղեցւոյ մէջ մարդիկ կ'աղօթեն : Ցերեկը տաք կը լինի՝ գիշերը զով : Ես զնա սըրտանց կը սիրեմ : Նա երեսանց բարեկամ է քեզ :

ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒԱՆ ՍԵՌԸ

Արա զնաց ուսումնարան, իսկ Շամիրամ տունը մնաց :

Աշակերտը կը պատրաստէր դասը, իսկ աշակերտուհին կար կը կարէր :

69. Արա և Մարգարէ բառերը այր մարդու անուն են . Շամիրամ և Մարգարէ կ'լին մարդու անուններ են :

Այն գոյական անունները , որոնք այր մարդոց յատուկ են , կը կոչուին բնական գոյականներ . նոքա՝ որոնք կին մարդոց յատուկ են , կը կոչուին բնական գոյականներ :

Այր մարդու անուններէն շատերը արականէ իգական դարձնելու համար՝ ծայրը կ'աւելցնեն՝ ուն , ունի , գոնո մասնիկները :

70. Բայց գոյական անուններու մեծագոյն մասը չ'ընդունիր իգական մասնիկներ . այդպիսիներու սեռը կ'որոշենք՝ իրենց նշանակութեանը նայելով : — Եղբայր , քոյր , մանուկ :

71. Այն գոյական անունները , որոնք միանգամայն թէ արական և թէ իգական սեռին կարող են յատկացուիլ , հասարակ տեղի գոյականներ կը կոչուին : — Մանուկը հասարակ սեռի գոյական անուն է :

Անշու՛նչ առարկայները սեռ չ'ունին :

138. Հետեւեալ նախադասութեանց մէջ գոյականներու սեռերը որոշեցէք : — Զարեհ և Զարուհի քոյր ու եղբայր էին : Հայրն ու մայրն իրենց քով կանչեցին վարդը և Սանդուխտը : Սահականուշ իւր ընկերուհիներու հետ դաշտին վրայ ծաղիկ կը քաղէր : Թագաւորն և թագուհին ժողովրդին վրայ խնամք ունին : Ուսուցիչները և ուսուցչուհիները բարեխղճաբար կը կատարեն իրենց պաշտօնը :

139. Հետեւեալ գոյականներու սեռը որոշեցէք : — Երախայ , մանուկ , մանկամարդ , պատանի , կին , մարդ , ծեր , պառաւ , հայր , մայր , կոյս , քահանայ , բնիկ , գաղթական , քաղաքացի , գիւղացի , ոչխար , մաքի , խոյ , հաւ , գարի , վառեակ , որձակ , աքաղաղ , ձի , երիվար , մատակ , խոզ , վարազ , եղնիկ , եղջերու , կով , եզ , ցուլ :

Ս. Քաղաք , գետ , լեռ , գիւղ , մարդ , զօրապետ , թագաւոր :

Բ. Նիկոմիդիա , Զմիւռնիա , Կեսարիա , Եւդոկիա , Մինաս , Միսակ , Արբուն :

Առաջին օրինակին գոյական անունները առ հասարակ շատ առարկայներու կարող են պատկանիլ :

Երկրորդ օրինակին գոյական անունները , ընդհակառակն՝ ինքնուրոյն յատուկ անուններ են :

72. Գոյական անունները երկու դասի կը բաժնուին՝ հասարակ գոյական անուն որ բազմաթիւ նոյնասեռ առարկայներու կարող է պատկանիլ և անհատական , որոնք մասնաւոր առարկայներու պէտք է պատկանին :

73. Յատուկ անունները միշտ գլխագիրով կը գրուին : Գլխագիրով կը գրուին նաև ազգանունը և մականունը , որոնք նմանապէս յատուկ են :

140. Արտադրեցէք առաջ հասարակ և ապա յատուկ անունները , ուր որ կարեօր է՝ գլխագիր դրէք :

— Ծառ, գիւղ, բոյս, հայ, գետ, բերք, պետրոս, պօղոս, հաւ, հաւատք, համբարձում, գամ, քար, սէր, սեռ, սեամ, մարգ, միրգ, մօրուք, մարգար, մարգարէ, մինաս, մեղր, դանուբ, կոյր, երազ, տիգրիս, զանգակ, կարիճ, պօլիս, վանք, կար, կարին, տէր, տէգ, արեքսանդր, գրիչ, գրիգոր, հորթ, յորդանան, գահիրէ, արա, երուսաղէմ, եկեղեցի :

141. Գրեցէ՛ք ձեր յատուկ անունը, մականունը և ազգանունը. գրեցէ՛ք ձեր հօր, մօր, վարժապետի անունները՝ մականունովը և ազգանունովը մէկտեղ. գրեցէ՛ք թէ ի՛նչ թագաւորութեան մէջ կ'ապրիք, ո՞ր քաղաքի, ո՞ր գիւղի, ո՞ր գետի, ծովի, լեռան մօտ :

142. Գրեցէ՛ք քանի մը նախադասութիւններ, որոց ենթակայն յատուկ անուն ըլլայ, իսկ ստորոգըրեալը մի և նոյն առարկայի հասարակ անունը. — կարապետը դարբին է և այլն :

ԳՈԹԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐՈՒ ԹԻՒԼ ՀԱՒԱՔԱԿԱՆ ԱՆՈՒՆ

Ա. Գիրք, հաց, ծառ, քար, փայտ, կացին, բաժակ :

Բ. Գրքեր, հացեր, ծառեր, քարեր, փայտեր, կացիներ, բաժակներ :

74. Գոյական անունը երկու թիւ ունի՝ եզակի և յոգնակի (6) : Յոգնակի թիւը կը կազմուի եզակիէն՝ բառին ծայրը աւելցնելով

ըով եւ կամ ՚նէ մասնիկը, երբեմն և + տառը :

Միավանկ բառերը եւ մասնիկը կ'ընդունին յոգնակի թիւ կազմելու համար : Եթէ բառը մէկուկէս վանկ ունի՝ ՚նէ մասնիկը կ'առնու. — ճրագներ, կրակներ :

Միավանկ բառերէ կազմուած բազմավանկ բառերը կարող են փոխանակ ՚նէ մասնիկի՝ եւ մասնիկը առնուլ. — տանուտէր — տանուտէրեր, նախահայր — նախահայրեր :

Յատուկ գոյական անունները յոգնակի թիւ չ'ունին (ինչո՞ւ) :

143. Հետեւալ գոյական անունները յոգնակիի դարձուցէ՛ք. — Քար, պատ, միս, շուն, սեղան, գերան, բերան, մառան, դարան, գաւազան, մատանի, գինի, հոգի, որդի, աղանի, եկեղեցի, տղայ, քահանայ, կաթսայ, ճանապարհ :

Կաթ, եղ, ջուր, նուռ, դուռ, թոռ, ձեռք, ոտք :

Սպաս, գրիչ, կրակ, գլուխ, բլուր, սրահ, մնուր, մրուր :

Հօրաքոյր, մօրաքոյր, տանուտէր, նախահայր, նախամայր :

Ոչխար, ոչխարներ — հօտ. զինուոր, զինուորներ — զօրք :

75. Երբ շատ մը միաստե սակ հասարակ

գոյական անուններ՝ հասին ծոցը, իրենց հասարակ անունը կը փոխեն և եզրէ ըստ նոր անուն մը կ'ստանան, այդ նոր ստացած անունը՝ հաւաքական անուն կը կոչուի: — **Հօտ, զօրք:**

146. Հետեւեալ յոգնակի հասարակ գոյականներէն եզակի հաւաքական գոյական անուններ կազմեցէք: — Խոտեր, ծառեր, մարդիկ, թռչուններ, ձիեր, անասուններ, խոզեր, ոչխարներ:

147. Հետեւեալ հաւաքական գոյականները հասարակ գոյականներու դարձուցէք: — Հօտ, ջուկ, անդեայ, երամակ, հորան, վոհմակ, պար, երամ, ջուր, տարմ, վտառ, հող, բոլ, դէզ, շեղջ:

Բ. ԱՄԱԿԱՆ ԱՆՈՒՆ

Պարտէզին մէջ կան գեղեցիկ ծաղիկներ:

Երկնային մարմինները կը զարգարեն երկնակամարը:

76. Նշանակեալ բառերը կը ցուցնեն առարկային որպիսութիւնը: Առարկայի որպիսութիւնն ալ իւր որոշ անունն ունի (8): Որպիսութիւն արտայայտող անուններուն հետեւ անուն կու տանք:

77. Ածական անուան պաշտօնն է՝ գոյական անուան քով դրուիլ և շնորհ զայն ուրիշ գոյական անուններէ. բայց ածականը

եթէ առանձին մնայ՝ կրնայ կատարել նաև ենթակայի, լրացնողի և ստորոգրեալի պաշտօնը:

146. Հետեւեալ նախադասութիւնները վերլուծեցէք և գտէք որպիսութիւնը ցուցնող, որոշող ածական անունները: — Մենք արժանացանք ուրախ Մայիսին: Կապոյտ երկնքի վրայ պարզ գիշերի մէջ երեցող փայլուն աստղերը՝ դիւթական գեղեցկութիւն ունին: Առաւօտեան արշալուսին քաղցրաձայն սոխակը կ'երգէր վարդի ծաղկալից թփին վրայ: Երեկոյեան վերջալուսին սրաթև ծիծեռնակները վերադարձան դէպի իրենց փոքրիկ ձագերը: Գարնանային անձրևները կենսատու են գաշտային բոյսերուն և արմտիներուն համար: Հիւսիսային եղջերուները աղքատ բնիկ տեղացւոց՝ անփոխարինելի ծառայութիւններ կը մատուցանեն:

147. Հետեւեալ գոյական և ածական անուններէն այնպիսի նախադասութիւններ կազմեցէք որ գոյականը ենթակայ լինի և նախադաս, իսկ ածականը օժանդակ բառի հետ ստորոգրեալ: — Սուր դանակ (դանակը սուր է). ծանր մուրճ. թեթև կացին. պողպատէ թուր. փոքրիկ եկեղեցի. մեծ աշտարակ. բարձր գմբէթ. լայն փողոց. վատ ճանապարհ. պաղ ջուր. թափանցիկ ապակի. ոսկի մատանի. փայտէ տուն. պարսկական կապերտ. արաբական նժոյգ:

148. Հետեւեալ ածական անուններու մօտ դրէք իրենց համապատասխանող գոյական անունները: — Կարմիր, կապոյտ, դեղին, կանաչ, գորշ, մոխրագոյն, նարնջագոյն, չազանակագոյն, մանուշակագոյն, սպիտակ, սեւ, մեծ, փոքր, հաստ, բարակ,

նուրբ, նօսր, թանձր, երկար, կարճ, լայն, նեղ, ընդարձակ, համառօտ, ծանր, թեթեւ, առողջ, հիւանդ, բարձրահասակ, կարճահասակ, ամեհի, վիթխարի, ահռելի, նազելի, հաճելի, կոր, ուղիղ, կոյր, կաղ, բութ, սուր, ցած, բարձր, ստոր, ցանցառ, խուլ, համր, խոնաւ, չոր, տխուր, ուրախ, զուարթ, թթու, քաղցր, դառն, տաք, սառ :

149. Հետեւեալ ածականներու քով ալ գրէք իրենց համապատասխանող գոյականները : — Քաղաքային, ծովային, ջրային, ցամաքային, դաշտային, երկնային, հիւսիսային, հարաւային, երկրաւոր, երկնաւոր, գիւղային, տնական, բնական, կենդանական, բուսական, արեւելեան, արեւմտեան, պարսկական, հելլենական, հնդկական, առաւօտեան, երեկոյեան, տարեկան, ամսական, բուսեղէն, մսեղէն, խմորեղէն, քարեղէն, փայտեղէն . . . :

ՈՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՅԱՐԱԲԵՐՈՒԿԱՆ ԱԾԱԿԱՆՆԵՐ

Անշ խօսքը տուն կը շինէ, դաս խօսքը տուն կը քանդէ :

Փայտաշէն տունը՝ քարաշէն տան չափ ամուր չ'իինիր :

Անշ, դաս, ամուր ածականները գոյականի իսկական որպիսութիւնը կը ցուցնեն, դոքա առարկային անբաժան յատկութիւններն են : Փայտաշէն և քարաշէն ածականները թէև նոյնպէս գոյականի որպիսութիւնը կը ցուցնեն, բայց այդ որպիսութիւնները առարկայի բնութենէն չեն բղխիր այլ անոր ուրիշ առարկայի հետ ունեցած յարաբերութիւնը կը ցուցնեն :

78. Ածական անունը երկու տեսակ է՝ որակիւմ և յարաբերակիւմ :

Որակական ածականը կը ցուցնէ գոյական անունն բնական որպիսութիւնը : Որակական ածականի ցոյց տուած որպիսութիւնը կրնայ աւելնալ և պակսիլ՝ առարկայի մը նկատմամբ շատ լինիլ, իսկ ուրիշ առարկայի մը նկատմամբ սակաւ :

Յարաբերական ածականը՝ առարկային ստացական յատկութիւնը կը ցուցնէ :

Յարաբերական ածականին ցոյց տուած յատկութիւնը ոչ կ'աւելնայ ոչ կը պակսի :

79. Որակական ածական անունները երեք համեմատութեան աստիճաններ ունին՝ բնական, բազմութեան և բերբերական : — Քաղցր, քաղցրագոյն, ամենաքաղցր :

80. Գրական աստիճանը պարզապէս գոյականին բնական լինելն ցոյց կու տայ : — Մեծ, փոքր, թեթեւ, ծանր, ցած, բարձր :

Բաղդատական աստիճանը՝ առարկայ մը միւսին հետ համեմատելով, կը ցուցնէ բաղդատեալ առարկային առաւել կամ նուազ որպիսութիւնը : — Մեծագոյն, փոքրագոյն, թեթեւագոյն :

Գերադրական աստիճանը որպիսութեան

գերազանց դրու թիւնը ցոյց կու տայ: — Ամենամեծ, ամենածանր, երբեմն ալ շատ անգամ, սակայն բառերու օգնութեամբ — շատ զօրաւոր, անչափ մեծ, սաստիկ դժուարին ։

Գերադրական է նաև բարձր աստիճանը որ միայն Աստուծոյ յատկացեալ է ։

81. Յարաբերական աստիճանները համեմատութեան աստիճաններ չ'ունին: Նորա կը ծագին ուրիշ բառերէ և գլխաւորապէս, նիւթի, տեղւոյ, ցեղի և ժամանակի յարաբերութիւնը կը ցուցնեն: — Մսեղէն, երկնային, հեղինական, առաւօտեան ։

150. Վերոգրեալ (148) վարժութեան բոլոր որակական աստիճանները բարձրացուցէք բազմաթիւ և ապա գերադրական աստիճանի ։

151. Նախընթաց (149) վարժութեան մէջ գրտնուած յարաբերական աստիճանները չորս կարգի բաժնեցէք իրենց նշանակութեան համեմատ, և իրացէ՛ք թէ ինչ բառերէ շինուած են ։

152. Հետեւեալ նախադասութեանց մէջ որոշեցէք որակական և յարաբերական աստիճանները: — Գարնանային անուշ եղանակն անցաւ, եկան ամառնային տօթ օրերը: Աշնանային յորդ անձրեւները դադարեցան: Երեկոյեան մեղմիկ զեփուրը զովութիւն կը տարածէր: Առաւօտեան թարմ օդը անուշահոտութեամբ լի է: Անձրեւային օրերը՝ գիւղացիները չեն ելներ իրենց փոքրիկ խրճիթներէն: Փոթորկեալ ծովը կատաղի ալիքներ կը բարձրացնէ: Ծո-

վային սոսկալի փոթորիկը՝ երթալով սաստկացաւ: Ծաղկաւէտ դաշտերու մէջ կ'արածին ընտանի կենդանիները: Գիւղացի համեստ օրիորդները՝ դաշտային ծաղիկներէն իրենց համար գեղեցիկ փունջեր կապեցին: Բարի մարդիկ արժանաւոր գործեր կը կատարեն: Ընտանի գրաստները մարդուս դաշտային և առտնին գործերը կատարելու կ'օգնեն ։

Գ. ԹՈՒՍԿԱՆ ԱՆՈՒՆ

Տարին աստիճանաբար ամիս ունի: Տարւոյն աստիճանաբար յունվարն է ։

Տասնեակ բառը կ'որոշէ առարկայն և նորա թիւը կը ցուցնէ (քանի՞) ։

Աստիճան բառը առարկային կարգը կը ցուցնէ (քանի՞ երորդ) և նոյնպէս որոշող բառ է ։

Տասնեակ և աստիճան բառերը թիւերու անուններ են ։

82. Այն բառերը որոնք գոյական անունով թիւը և դասաւորութիւնը կը ցուցնեն՝ կը կոչուին բառական անուններ ։

83. Թուական անունները երկու տեսակ կը լինին, բարձր և ցածր: Որ առարկային քանի հաս լինելը կը ցուցնէ — մէկ, երկու, երեք, չորս, հինգ, և այլն: Ինչ որ առարկային քանիերորդ լինելը կը ցուցնէ — առաջին, երկրորդ, երրորդ, չորրորդ, հինգերորդ և այլն ։

84. Դասաւորական թուականները կը ծագին բացարձակներէն իրենց վերջաւորութիւն առնելով՝ երբ մասնիկը — Հինգ-երբ, քսան-երբ, հարիւր տասն-երբ, հազար-երբ :

Մէկ, երկու, երեք, չորս թուականաց՝ դասաւորականն է առաջներորդ, երկ-երբ, եր-երբ, չոր-երբ :

153. Հետեւեալ բացարձակ թուականները դասաւորականի դարձուցէք :

Մէկ, երկու, երեք, չորս, հինգ, վեց, եօթը, ութը, ինը, տասը, տասնմէկ, տասներկու, տասներեք, տասնչորս, տասնհինգ, տասնվեց, տասնեւեօթը, տասնուութ, տասնինը, քսան, քսանմէկ, երեսուն, երեսունհինգ, քառասուն, յիսուն, վաթսուն, եօթանասուն, ութսուն, ինսուն, հարիւր, հազար, բիւր, միլիոն :

85. Բացարձակ թուական անուններու երբ վերջաւորութեան մասնիկին աեղ, ու մասնիկը աւելցնելով կ'ստանանք բառաւոր թուական անուններ, որոնք կը ցուցնեն թե գոյական անունը քանի՞ անգամ բաժնուած է : Մէկ կամ ոչ բացարձակ թուական անունը ոչ մասնիկը չ'առնուր . (կը կրկնուի մի մի այսինքն մէյմէկ), իսկ երկու, երեք, չորս, հինգ, վեց և այլն, վերոյիշեալ ոչ մասնիկը առնելով կը լինի՝ երկուքական, երեքական,

չորսական, հնգական, վեցական, եօթնական, քսանական, հազարական :

154. Կարգով գրեցէք բոլոր բացարձակ թուական անունները և նոցա հանդէպ՝ բաշխողները :

86. Դասաւորական թուականներու վերայ եթէ աւելցնեմք ոչ մասնիկը՝ կ'ստանամք մասնական թուականները, որոնք գոյական անուն մասունքները կամ կոտորակները ցոյց կուտան : — Կէս, քառորդ, երրորդական, հինգերորդական, հարիւրերորդական . . . :

87. Բացարձակ թուականներու վրայ աւելցնելով ոչ մասնիկը՝ կ'ստանանք արժէք և չափ ցոյց տուող թուական անունները : — Մէկ-նոյ, երկուք-նոյ, երեք-նոյ, չորս-նոյ, հինգ-նոյ, վեց-նոյ և այլն :

155. Հետեւեալ թուական անունները իրենց նշանակութեանը ու կազմութեանը նայելով զանազան կարգերու բաժնեցէք : — Մէկ, կէս, առաջին, քառորդ, երկու, երեք, երկրորդ, երկուքնոց, երեքնոց, չորս, չորրորդ, հինգ, հինգերորդ, հինգնոց, հինգերորդական, վեցնոց, վեցերորդական, վեց, վեցերորդ, եօթներորդ, եօթը, եօթնոց, եօթներորդական, ութը, ութերորդական, ութնոց, ութերորդ, ինը, իննական, իններորդական, երկ—երկու, մէկ—մէկ, հնգական, չորս—չորս, տասնական, տասներորդական, տասնոց, քսան, քսանական, քսանե-

րորդական, քսաննոց, երկու հարիւր երեսուն և վեցերորդական, հազար հարիւր վաթսուն և հինգերորդ, ութը հարիւր երեսուն և չորսնոց, հազար ութը հարիւր ութսուն և եօթներորդ թուականին, երկու հարիւր քառասուն և չորրորդ օրը :

88. Բացարձակ թուական անուանները կրնան ստանալ նաև — և եւ մասնիկները = Մի—, տասն—, հարիւր—, հազար—, երկոքեան, երեքեան և այլն :

Դ. ԴԵՐԱՆՈՒՆ

Յովհաննէսը վերցուց գեղեցիկ գիրքը :

Նա վերցուց այն գիրքը :

Նա բառը դրուած է՝ Յովհաննէս յատուկ անուան տեղ. այն դրուած է՝ Գեղեցիկ որակական ածականին տեղ :

89. Այն բառերը, որոնք գոյական և ածական անուաններու տեղ կը դրուին և անոնց պաշտօնը կը կատարեն՝ դերանուն կը կոչուին :

90. Գոյական անուաններու պաշտօն կատարողները գոյական դերանուններ կը կոչուին, իսկ ածական անուաններու պաշտօն կատարողները — ածական դերանուններ :

156. Հետեւեալ նախադասութեանց մէջ գտէք գոյական և ածական դերանունները : — Կովը, ձին և

չունը կը վիճէին ինչեանց հետ թէ տանուտէրը անանցի՞ն արեւելի կը սիրէ : Ի հարկէ նա ղեւ արեւելի կը սիրէ ըսաւ ձին, եւ նոր արօրը ու ցաքանը կը քաշեմ, դաշտէն նոր համար փայտ կը բերեմ, և նա ինչ ի՞նչ վրաս կը հեծնէ և քաղաք կ'երթայ, առանց ինչ նա կորսուած պիտի լինէր :

Խնձորենին ըսաւ կաղնոյն. յիս պտուղներս թագաւորին սեղանը կը զարդարեն, իսկ դու միայն խոզերու կերակուր ես : Ամենայն իրենց ղերենց կը գովէին :

91. Գոյական դերանունները նախադասութեանց մէջ ենթակայի և լրացնողի պաշտօն կը կատարեն. — եւ կը յարգեմ ղերեն :

Ածական դերանունները որոշողի պաշտօն կը կատարեն : Այս աշակերտը վերցուց այն գիրքը :

157. Վերոգրեալ (156) վարժութեան նախադասութիւնները վերլուծեցէք և ցուցուցէք թէ գոյական դերանունները ի՞նչ պաշտօն կը կատարեն :

158. Հետեւեալ օրինակները վերլուծեցէք արամարանօրէն՝ նախադասութեան անդամներով : — Այն տունը շինուած է այս վարպետին ձեռքով : Սա լաւ աշակերտ է, ես կը յարգեմ այդ աշակերտը : Երէկ մենք բոլոր աշակերտներս գնացինք զբօսանքի : Մարդըս ինքը պէտք է հոգայ իրեն համար : Նոքա իրենց գործերը կարգով գրեցին : Սա, դա, նա, գնացին այդի : Այս, այդ, այն տղաքները գնացին դաշտը : Ո՞վ եկաւ : Ո՞ր մարդը եկաւ : Այնպէս պէտք է գործէք, որ ինքնիրեննիր չկարմրիք ձեր ըրածին համար : Քու մատիտը գեղեցիկ է, բայց իմն գեղեցկագոյն է :

տեղաւորուիր : Եւ այդպէս փառաւոր հանդէս չէի տեսած : Եւ եմ ճշմարիտ որթը , իսկ է՛ հայրս մշակ է : Տէ՛ր , + ողորմութեամբդ պահպանէ շնչ : Հայր մեր , որ երկինքն ես , սուրբ ըլլայ + անունդ : Այն ձեռքը , որ քեզի զարկաւ՝ համբուրէ և դիր + ճակատդ : Ոչ + կ'ուզէ է-ր պարտքը կատարել : Այն ձեռնարկութեանէն մեծ + ոչնչ օգուտ ստացանք : Դուրսը մի + կանգնած է : Ո՞նչ այն կ'ըսէ , ո՞նչ այն : Ո՞նչն էր կարծեն թէ արեգակը կը պարտի երկրիս շուրջը : Ի-բարեւոյն-դ մարդ կը հանգստանար է-ր ծառի հովանոյն ներքեւ : Մարդ մը՝ մեծ կը խրատէր , որ է-ր յոյսը -- ընչե-ր-- օգնութեան վրայ չ'դնէ :

Ի. ԲԱՅ

- Ա. Աշակերտը իւրեւ , իւր-բարեւոյն , իւր-նկարէ :
- Բ. Աշակերտը կ'աշխատէ , իւր հանգստանայ , իւր-նկարէ :
- Գ. Աշակերտը իւր-պարտք-ն , իւր-նկարէ , իւր-նկար-ն :

Բոլոր ստորագրեալները ցոյց կուտան աշակերտին գործողութիւնը : Առաջին տողին ստորագրեալները աշակերտին կ'աշխատէ գործողութիւնը ցոյց կուտան , երկրորդ տողին ստորագրեալները՝ անոր ուրիշներէն իւր ներգործութիւնը , երրորդ տողին ստորագրեալները՝ անոր դրոշմներ :

93. Այն բառերը , որոնք կը ցուցնեն առարկային ըրած գործողութիւնը կամ կրած ներգործութիւնը և գրութիւնը , բայց կը կոչուին :

94. Բայերն իրենց ցոյց տուած գործողութեանը նայելով՝ երեք տեսակ կը լինին .

ա. Ներդրում-ն , երբ բային գործողութիւնը գլխաւոր առարկայէն կ'անցնի երկրորդական առարկային կամ ենթակայէն՝ լրացնողին : Աշակերտը իւր-բարեւոյն , իւր-նկարէ , իւր-նկարէ , (ի՞նչ բան) դասը :

բ. Կր-բարեւոյն , երբ բային գործողութիւնը ընդհակառակն երկրորդական առարկայէն գլխաւորին վրայ կ'անցնի , այսինքն ենթակային կը կրէ լրացնողի գործողութիւնը : Աշակերտը իւր-նկարէ , իւր-պարտք-ն , իւր-նկար-ն :

գ. Չեւ-ն , երբ բային ցոյց տուած գործողութիւնը գործող անձին մէջ կը մնայ , այսինքն գլխաւոր առարկային չ'ներգործէր , բայց միանգամայն ուրիշի գործողութիւնն ալ չ'կրէր : Աշակերտը իւր-նկարէ , իւր-հանգ-ն , իւր-նկար-ն :

Բայերուն տարբեր տեսակները ս-կը կոչուին :

95. Ներգործական բայերը ձեռով նման են չէզոք բայերուն , իսկ մաքով՝ տարբեր : Ներգործական է բայը՝ երբ իւր քով ունի բուն լրացնողը : Բուն լրացնողը է-ր կամ չէ՛ հարցումներուն կը պատասխանէ և կը կոչուի ներգործական բայի սե-ն ինքի-ն : Աշակերտը կը գրէ (ի՞նչ) դասը : Աշակերտը կը յարգէ (զո՞վ) լուր-պարտք-ն :

96. Չէզոք բայերը չ'ունին բուն լրացուցիչ կամ սեռի խնդիր: — Աշակերտը կը յոգնի, կը հանգչի, կը ննջէ (կարելի չէ հարցնել ի՞նչ կը յոգնի, ի՞նչ կը հանգչի, ի՞նչ կը ննջէ):

97. Կրաւորական բայը ձևով տարբեր է ներգործականէն, բայց անկէ կը ծագի: Կրաւորական բայն ալ ունի սեռի խնդիր, միայն այդ խնդիրը կը պատասխանէ որտե՞ր, ինչ՞ն և որտե՞ր չեւոզ հարցումներուն: — Դասը ի՞նչ էր: (որով) աշակերտէն: Աշակերտը ի՞նչ էր: յարտ: (որով) վարժապետէն: Քարը կը տաշուի (որով ձեռքով) արտիստի յետմէ:

Ամեն ներգործական բայ իւր կրաւորականը ունի. ուրեմն ամեն ներգործական իմաստ կրնայ նաև կրաւորական ձևով բացատրուիլ:

98. Չէզոք բայերու երկուքը՝ ե՛ս և ինչ՛ես, որոնք միշտ ստորոգրելոյն կազմութեանը կ'օժանդակեն՝ կը կոչուին եւկան կամ օժանդակ բայեր: — Ես մարդ ե՛ս, դու մարդ ե՛ս. նա մարդ ե՛ս. Մենք աշխատասէր ինչքան, դուք աշխատասէր ինչքան, նորա աշխատասէր ինչքան:

160. Հետեւեալ ոտանաւորին մէջ որոշեցէք բայերուն սեռերը:

Ահա ի՞նչ ամառ, կիզիչ եղանակ, Անխոնջ վաստակի, պտղոյ ժամանակ. Իւր աստուածեղէն ջերմութեան հոգին կենսատու շնչով շարժեալ արփին: Հասած է ծիրան և տանձ մեղրածոր, Կարմիր վարդի պէս ի՞նչ խնձոր. Մաթի պէս դեղին ի՞նչ օղկոյզ, Մանկտին սալոր, նուռ և թուզ, Ձրմերուկ սեխով լի է բուրաստան. Իբր հոսանք ոսկի ձէլի անդաստան Եւ արտորայից ծանրացեալ հասկեր Յոյժ հիանալի նկարէն պատկեր: Յետ երից անգամ երգի խօսնակին՝ Ձարման իսկ և իսկ հրնձողի հոգին: Շողոջ մանգաղ մինչ քրծէ մըշակ. Ծանրաբերձ սայլին ճրճինն անուշակ Կը հնչէ հեռու հեռու դաշտերէն, Երբ ՚ի կալ քերէ հունձքը արտերէն:

161. Հետեւեալ նախադասութիւնները վերլուծեցէք և գտէք բայերու սեռը և անոնց համար դրուած բուն և երկրորդական լրացուցիչները (սեռի և բնութեան խնդիր): —

Քարկոփները կը տաշեն ծանր քարերը: Քարը կը կտրեն ժայռերէն: Չկնորսը ձուկը բռնեց: Չուկերը հանեցին ուռկանէն: Հայրը կոչեց իւր որդին և զնա գործի ուղարկեց: Վարժապետը գովեց և խրախուսեց յառաջադէմ աշակերտները: Մայրը ժողովեց իւր զաւակները և կերակրեց զանոնք: Ես սառնորակ ջուր խմեցի: Լուզորդն ազատեց խեղդուողը: Դու կը հաւանիս իմ գրքիս, եթէ տեսնես: Չաղացի մէջ ցո-

րեն կ'ազան. Լուսցարարը ճերմակեղէն կը լուանար. Հացթուխը հաց կը թխէ. Ես զինքը չեմ ճանչնար:

162. Վերոգրեալ վարժութեան բոլոր նախադասութիւնները այնպէս փոփոխեցէք որ ենթակայն լրացնողի փոխուի, լրացնողը ենթակայի, իսկ ներգործական սեռի բայերն ալ՝ կրաւորականի փոխուին: — Կարծր քարերը կը տաշուին քարկոփներէն: Քարերը կը կտրուին ժայռերէն: Զուկը բռնուեցաւ գետէն՝ ձկնորսին ձեռքով:

163. Հետեւեալ վարժութեանց մէջ գտէք բայերուն սեռը:

Ապրիլ կայ երկաթ է, ապրիլ կայ արծաթ է. Գողը գողէն գողացաւ, Աստուած վերէն զարմացաւ: Կուշար սովածին մանր կը բրդէ. Կծու քացախը իւր ամանը կը ճաթեցնէ. Շունը կը հաջէ, կարաւանը կ'անցնի: Ստախօսին տունը կրակ ինկաւ, ոչ ոք հաւատաց: Զիս տե՛ս, զքեզ լա՛ց, ուր որ ես՝ հաստատ կա՛ց: Աղքատն ունի հաց ու պանիր, գիշերը քունը չ'տանիր: Մի բաժակ ջուր, ո՛վ ուզէ տո՛ւր: Հաց ու պանիր, կեր ու բանէ՛: Հացին կտրածը՝ թուրը չ'կտրեր: Թուրին կտրածը կ'առողջանայ՝ լեղուին կծածը չ'առողջանար: Լեռ լերան չ'հանդիպիր, մարդ մարդու կը հանդիպի. Պատուէ ծերը, որպէսզի ծերանաս: Երբ ծերանաս՝ ծերի պատիւը կ'իմանաս:

164. Սոխակը կ'երգէ, սոխակը կը թռչի, սոխակը կը բռնուի: Արծիւը թռաւ, արծիւը յափշտակեց նապաստակ մը, արծիւը սպաննուեցաւ որսորդէն: Կովը կը բառաչէ, կովը խոտ կ'ուտէ, կաթ կուտայ, հորթ կը ծնի և իւր կաթովը զախ կը կերակրէ: Գայլը յափշտակեց գառնուկ մը, գայլը սպաննուեցաւ որսորդի ձեռամբ. որսորդը սպաննեց գայլը, մաշկը

հանեց և տարաւ վաճառեց: Երկրագործը կը վարէ երկիրը, ցորեն կը ցանէ, աշնան կը հնձէ, կալը կը տանի, կամնով կը կալսէ, ամբարը կը ժողվէ: Խոտը հնձուեցաւ, ցորենը կալուեցաւ, ջաղաց տարուեցաւ, ալիւր շինուեցաւ, յետոյ տուն բերուեցաւ, խմոր շաղուեցաւ և հաց թխուեցաւ: Ծովը ալեկոծուեցաւ քամիէն: Ծովը լուսնի լուսով կը փայլի: Օդը տաքցաւ, գիշերը կարճացաւ, ցերեկը երկնցաւ: Ծիծեռնակը կուգայ մեր երկիրը, բոյնը կը գտնէ, նորէն կը կարկատէ, երեք ձու կ'ածէ, թուխս կը նստի, ձագեր կը հանէ, կը կերակրէ, կը մեծցնէ և աշնան իրեն հետ տաք երկիր կը տանի:

ԱՅՅԻ ԵՂԱՆԱԿԸ, ԺԱՄԱՆԱԿԸ, ԹԻԻԸ ԵՒ ԴԷՄՔԸ

99. Ամեն գործողութիւն միաձեւ չ'կատարուիր. միևնոյն գործողութիւնը տարբեր ձեւերով կրնայ կատարուիլ. կարելի է, զորօրինակ՝ գոյնէ թէ ի՞նչպէս գործողութիւն մը սկսեր և վերջացեր է, կարելի է նաև հոգիէ կամ խնդրել որ չ'սկսած գործողութիւնը սկսուի և կատարուի, կարելի է վերջապէս հոգի յայտնել գործողութեան կատարման մասին:

Ամեն գործողութիւն, ամեն բայ կատարման երեք ձեւ կամ եղանակ ունի՝ առաջինը եղանակ՝ երբ գործողութեան սկիզբը

և վերջը—սահմանները մեզ որոշ յայտնի են.
բ. հրամայական եղանակ, երբ գործողութիւնը սկսուած չ'է, բայց մենք կը հրամայենք կամ կը խնդրենք որ սկսուի և կատարուի.
գ. արարական եղանակ, երբ գործողութեան կատարման մասին որ և է տարակոյս կամ կասկած ունինք:— Կը տեսնեմ, տե՛ս, թէ որ տեսնեմ:

100. Ամեն գործողութիւն կը կատարուի ո և է սահմանափակ ժամանակի մէջ. ժամանակները երեք են՝ ներկայ, անցեալ և ապագայ:— կը տեսնեմ, տեսայ, պիտի տեսնեմ:

101. Անցեալը գլխաւորապէս երկու է. կայ գործողութիւն որ անցած է, բայց կիսկատար մնացեր է, դա կը կոչուի անարդար, կը տեսնէի. կայ՝ որ վերջացեր է, դա կը կոչուի արդար, տեսայ:

102. Ապառնին ալ երկու է՝ մին պարզաբար—պիտի տեսնեմ, միւսը պայմանական՝ որպէսզի տեսնեմ:

103. Սահմանական եղանակը ունի բոլոր յիշեալ ժամանակները:

Հրամայական եղանակը ունի միայն մի ժամանակ՝ ներկայ, որովհետեւ հրամայել կարելի է միայն ներկային մէջ:

Ստորադասական եղանակն ունի երկու ժամանակ. ա. թէ որ տեսնեմ, բ. թէ որ տեսնէի:

104. Որ և է գործողութիւն կրնայ կատարել խօսողը, կրնայ կատարել լսողը, կրնայ կատարել և այն անձը որու վրայ կը խօսինք. վերջապէս ամեն գործողութիւն ինչպէս անձ մը միայնակ կրնայ կատարել նոյնպէս կարող են կատարել շատ անձինք միասին: Հետեւաբար բայը ունի երեք դիմաց և երկու բն. եզակի և յոգնակի.— ես կը կարդամ, դու կը կարդաս, նա կը կարդայ, մենք կը կարդանք, դուք կը կարդաք, նոքա կը կարդան:

165. Հետեւեալ բանաստեղծութեան մէջ գտէք բայերուն սեռը, եղանակը, ժամանակը, թիւը և դէմքը:

Մասեաց երկնքէն ամպեր կը վազեն բռնաշունչ հովէն,
Այդ սեւ սեւ ամպեր լեռներու նրման կ'անցնին արտերէն:

Կացէ՛ք, ա՛յ ամպեր, ինչո՞ւ կը փախչիք, անձրեւ չէք թափեր,

Օրեր կը համրեն ու ձեզ կ'սպասեն մեր ծարաւ արտեր:

Քամի, դո՛ւ քամի, խղճա՛ արտերուն, թո՛ղ այդ ամպերուն

Կանգնիլ ու թափել անձրեւի չիթեր, ջուր տալ արտերուն:

Քամին դադարեցաւ, մեղմ անձրեւ տեղաց և արտեր ջրեց,
 Արտը բարձրացաւ, ցօղուն արձակեց ու հասկեր բլու-
 նեց:
 Գիւղացին գընաց, տեսաւ ու խնդաց, խնդաց ու ա-
 սաց:
 «Փառք քեզ, ո՛վ Աստուած, որ տուիր մեզ հաց, չենք
 մընար քաղցած:»

Զ. Դ Ե Ր Բ Ա Յ

Ես կարող գիտեմ:
 Կարող եմ գիրքս շատ հետաքրքրական է:
 Կարող եմ դասեր ալ շատ ունիմ:
 Կարող եմ մարդիկ միշտ յարգանք կը վայելեն:
 Վերոյիշեալ նախադասութեանց մէջ նշանակեալ բառերը գործողութեան անուններ են, բայց դոցա ցոյց տուած գործողութիւնը չկատարուիր, միայն կը յիշուի: Տարբեր են, զորօրինակ՝ կարող եմ և կը կարող եմ բառերը. երկրորդը կատարուող գործողութիւնն է — բայ է և ունի եղանակ, ժամանակ, թիւ և դէմք. իսկ կարող բայի սկզբնական ձեւը և բայի անունն է միայն: Այսպէս են և միւս նշանակեալ բառերը:

105. Այն բառերը, որոնք գործողութիւն ցոյց կու տան, բայց իրենց ցոյց տուած գործողութիւնները կատարման դրու-
 թեան մէջ չ'են՝ բերան կը կոչուին:

106. Դերբայները երկու պաշտօն կը կատարեն. էական բայերու օգնութեամբ

նոքա դիմաւոր բայի դեր կը կատարեն — կարդացած եմ, կարդալու եմ, կարդացող եմ: Իսկ առանց էական բայերու նոքա գոյական և ածական անուններու պաշտօն կը կատարեն և իսկապէս բայ-անուն են:

107. Դերբայները չորս են՝ ա. անոր դերբայ՝ որ բայի սկզբնական ձեւն է և ունի չորս վերջաւորութիւն՝ — ե, ն, ու, ան. գրել, խօսիլ, կարդալ, զարմանալ:

բ. Այլ դերբայ՝ որ կատարուած ու վերջացած գործողութեան անունն է՝ գրած, խօսած, կարդացած, զարմացած:

գ. Այլ դերբայ՝ որ դեռ եւս չ'սկսած գործողութեան անունն է՝ գրելու, խօսելու, կարդալու, զարմանալու:

դ. Ներքին դերբայ՝ որ գործ կատարողի անունն է, գրող, խօսող, կարդացող, զարմացող:

Է. Մ Ա Կ Բ Ա Յ

Ինչե՞ն դժուար է մարդ ճանաչելը:
 Հոն ազատեցանք փորձանքէն:
 Ո՞ր գնացիք, զիս այսու ինչո՞ւ թողուցիք:
 Ե՞նչ վերագարձաք քաղաքէն, երբ թէ այսօր:
 Ո՞ւր է. — այժմ ես քիչով դո՞հ կը վնիմ:

Որով մեծ եղաւ զարմանքս երբ զձեզ տեսայ :
 Յանձնեմք մեզի քնաս կուտանք :
 Ինչ տխուր էք, որ է ձեր նախկին զուարթու-
 թիւնը :

Արեւի ախոր ներկայ էիք հանդիսին :
 Այ՛, ես գնացեր էի, որով չքեղ հանդէս էր :
 Նա երբեք չէիք տունէն դուրս չ'եղներ :
 Քա՛ւ լեցի, ես այդպիսի բան չեմ ըրած :

Տրամաբանօրէն լուծելով վերոյիշեալ նախադա-
 սութիւնները, մենք կը տեսնենք որ նշանակեալ բա-
 ռերը՝ գործողութեան այլ և այլ պարագայները ցոյց
 կուտան :

108. Գործողութեան համար դրուած
 և նորա պարագայները ցոյց տուող բառե-
 րը՝ հետոյ կը կոչուին :

109. Մակբայները հետադարձ եօթը տե-
 սակ են :

ա. Հարցական՝ ո՞ւր, ինչպէ՞ս, արդե՞՞ք, ե՞րբ,
 ինչո՞ւ, որքա՞ն, քանի՞, քանի՞ անգամ :

բ. Հաստատական՝ այո՛, արդարեւ, յիրաւի,
 ապստօն, իսկ և իսկ, յատկապէս, ճիշդ :

գ. Բացասական՝ երբէք, քաւ լիցի, ամենեւին,
 բնաւ, ո՛չ :

դ. Որովհետեւ՝ սաստիկ, հազիւ, շուտով,
 շտապ, բռնի, կամաց, արագ :

ե. Քանակական՝ շատ, սակաւ, քանիցս, շատ
 անգամ, կրկին, դարձեալ, այլ :

զ. Տեղական՝ դուրս, ներս, մօտ, ուր, վեր,
 վար, աստ (հոս), անդ (հոն), ներքեւ, մէջ...
 է. Ժամանակական՝ այժմ, յետոյ, վաղիւ, միշտ,
 երբեմն, առայժմ, գիշեր, ցերեկ...

Պատճառ ցոյց տուող պարագայական
 բառերը՝ մակբայ չ'են :

Ը. ՆԱԽԱԿՐՈՒԹԻՒՆ

- Ծիտը կեցաւ ծառին իւր :
- Ծիտը իջաւ ծառին ներքեւ :
- Ծիտը թռաւ դեպի ծառը :
- Ծիտը կեցած է ծառին հոգը :
- Ծիտը կեցած է իւր ընկերոջ հետ :
- Ծիտը կ'երգէ իւր ընկերոջ համար :
- Ծիտը չ'երգեր ինչեւ ծիծեռնակը :

Ամեն մի նախադասութեան մէջ երկու գոյական
 անուն կայ. նօտր գիր բառերը որոնք ինքնին նշա-
 նակութիւն չ'ունին՝ գոյականներէն մէկուն մօտ դըր-
 ուելով կը ցուցնեն երկու գոյականներու մէջ եղած
 յարաբերութիւնը :

110. Այն բառերը որոնք գոյական ա-
 նուններու մօտ կը դրուին և կը ցուցնեն
 առարկայներու փոխադարձ յարաբերու-
 թիւնները, հետադարձ կը կոչուին :

111. Նախադրութիւնները գրաբարի
 մէջ գոյականէն առաջ դրուելու նպատաւա-

ուաւ նախադրու թիւն ըսուեր են , ապա թէ ոչ աշխարհաբարի մէջ ընդհանրապէս գոյականէն վերջը կը դրուին , և աւելի յետոյ կրնան կոչուիլ :

112. Միևնոյն բառը կրնայ միանգամայն նախադրու թիւն և մակբայ լինել : Եթէ բառը գոյականի մօտ դրուած է՝ նախադրու թիւն է , իսկ եթէ բայի մօտ՝ առանց գոյականի , մակբայ է :

Օրինակի համար . վրան ելաւ : Տակն գնաց : Մտն անցաւ : Հետք մի երթաք : Ինչո՞ւ կ'ապրիք այնտեղ :

Թ. Շ Ա Ղ Կ Ա Պ

113. Կան բառեր , որոնք այլևայլ նախադասու թիւնները կամ միևնոյն նախադասու թեան այլևայլ անդամները միմեանց հետ կը կապեն . դոքա շէնք կը կոչուին : Իսկ , բայց , որ , և , ու , կամ , այլ , եթէ , մանաւանդ թէ , սակայն և այնպէս , թէ և , նաև , այսու ամենայնիւ , ոչ թէ , ոչ միայն...

Ժ. Ձ Ա Յ Ն Ա Ր Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

114. Այն բառերը , որոնք մարդուս հոգեկան զգացմունքը ու կիրքը կ'արտայայ-

տեն , կը կոչուին ձայնարկու թիւն կամ միջարկու թիւն : Այ , ո՞վ , ո՞ , աւանդ , ափսոս , եղճկ , երանիք . . . :

115. Խօսքի մասերը (մասունք բանի) ինչպէս տեսանք տասն են՝ գոյական , ածական , թուական , դերանուն , բայ , դերբայ , մակբայ , նախադրու թիւն , շաղկապ և ձայնարկու թիւն :

Գ. Բ Ա Ռ Ա Կ Ա Ջ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ա Ր Մ Ա Տ Ե Ի Վ Ե Ր Ջ Ա Ի Ո Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Շարժ , շարժան , շարժող , շարժական , շարժողութիւն , անշարժ :

Մեղ , մեղի , մեղանոց , մեղանէլ , մեղանալիս :

Առաջին տողին բոլոր բառերուն մէջ կը գտնուի շարժ վանկը (բառ) , ինչպէս երկրորդ տողին բառերուն մէջ կրկնուած է ՚իւ վանկը (բառ) :

116. Իրարու նման բառերու մէջ անփոփոխ վանկը (բառը) որով միւս բառերը կը շինուին՝ արմատ կը կոչուի : Արմատէն ետքը դրուած մասը կը կոչուի վերջնական :

166. Հետեւեալ բառերուն մէջ գտէք արմատը . Գար , քարոտ , քարեղէն . բեր , բերել , բերող , բե-

րած . հոգի , հոգեակ , հոգեկան , հոգեւոր , հոգեւորական . կոյր , կուրութիւն , կուրանալ , կուրացող , կուրացեալ . վնաս , վնասել , վնասուիլ , վնասակար . ցաւ , ցաւագար , ցաւել , ցաւեցնել . ոսկրանալ , ոսկորեղէն , ոսկր . նաւորդ , նաւել , նաւ . խոտաւէտ , խոտ . աշխարհ , աշխարհական , աշխարհային , աշխարհիկ . աշխար , աշխարել :

Գտէք ձեր դասին մէջ եղած բոլոր բառերու արմատները :

Ն Ա Խ Գ Ի Բ

- Ս. Յոյց , դատել , խոհեմ , բերք , անուն .
- Բ. Աղացոյց , բարդատել , ախոհեմ , աբեր , հաւանուն .

Երկրորդ տողին բառերը շինուած են առաջին տողին բառերէն :

117. Բառերու սկիզբը կցուած աննշան մասնիկները, որոնք անոնց նշանակութիւնը կը փոխեն , նոյն մասնիկներ կը կոչուին :

167. Հետեւեալ բառերու մէջ նախդիրը ենթամայով բաժնեցէք և իմացէք թէ նա՞ բառին ի՞նչ նշանակութիւն կուտայ .— Հրէից մէջ անբեր (անպտուղ) կանայք յարգանք չէին վայելեր : Անանուն , անխոհեմ մարդ , անեղն Աստուած , տգեղ , տմարդի , տձեւ , տհաս , տկար , ակամայ , անպիտան :

168. Դասակարգեցէք և նախդիրները տետրակին լուսանցքին վրայ նշանակեցէք .— Առարկայ , առարկել , առանձին , առանձնանալ , առանձնութիւն ,

առողջ , առողջութիւն , առտնին , առհասարակ , առաւել , առաւելութիւն , արտագրել , արտասանել , արտաբերութիւն , արտուղի , արտուղութիւն , արտասուք , արտահանել , արտաթորել , արտադրեալ , արտալածիկ , բաղդատել , բաղդատութիւն , բաղդատող , բաղկանալ , բաղադրութիւն , բաղաձայն , բացառիկ , բացատրել , բացայայտ , բացօդեայ , բացարձակ , բացորոշ :

169. Գերակշիռ , գերապանծ , գերբնական , գերմարդկային , գերագոյն , գերադրական , դերանուն , դերասան , դերբայ , ենթակայ , ենթարկել , ենթարկող , ենթադրութիւն , հակասութիւն , հակաճառութիւն , հակառակ , հակադարձ , հակամիտ , համամիտ , համասիրտ , համագոյ , համաձայն , համախոհ , համասեր , համագգի , հաճասեռ , համարուեստ , համակրանք , մակդիր , մակբայ , մակաբերել , մակարդակ , մակընթացութիւն , յարաբերութիւն , յարագնաց , յարացոյց , յարանուն , յարակից :

170. Ներկայ , ներհակ , ներշնչել , ներածութիւն , ներմուծութիւն , ներբան . շղկապ , շղկապել , շաղակրատ , շարադրել , շարունակել , շարադրութիւն . պարբերութիւն , պարագայ , պարունակութիւն , պարուական , պարփակել . ստորագրել , ստորասական , ստորաբաժին . վերաբերիլ , վերադիտել , վերաստուգել , վերանորոգել , վերամբառնալ , վերականգնել , վերընծայել . տարբեր , տարագիր , տարագնաց , տարագէպ , տարօրինակ , տրամբան , տրամադիր , տրամախօս . փոխադրել , փոխաբերել , փոխանակել :

Նախդիրները կարգաւ արտագրեցէք :

ՎԵՐՋԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՎԵՐՋԱԴԻՐ

Ա. Նաւ, հայր, հանճար, քար, գանձ :

Բ. Նաւակ, հայրիկ, հանճարեւ, քարեղէն, գանձակ :

Երկրորդ տողին բառերը շինուած են առաջին տողին բառերուն վերջերը անշու մասնիկներ աւելցնելով :

118. Այն աննշան մասնիկները, որոնք բառերու վերջը կ'աւելցուին և նոցա սկզբնական նշանակութիւնը կը փոխեն, Գրեւորութեան մասնիկներ կը կոչուին :

171. Հետեւեալ բառերու վերջաւորութեանց մասնիկները ձեր տետրակի լուսանքին մէջ արտագրւեցէք և իմացէք թէ ի՞նչ փոփոխութիւն բերած են անոնք՝ բառին սկզբնական նշանակութեան վրայ : — Երկնային, դաշտային, ձմերային, ամարային, հիւսիսային, հարաւային, աստուածային, մարդկային : Արեւելեան, արեւմտեան, Հելլենական, Հռովմէական, Եգիպտական, իշխանական, գեղջկական : Քրիստոնեայ, քրիստոսեան, արեւմտեայ, արեւմտեան : Հոգեղէն, լուսեղէն, մսեղէն, կանաչեղէն, խմորեղէն, ոսկեղէն, կաւեղէն, հողեղէն, փայտեղէն : Աղի, արժանի, մոլի, երկսայրի, ջրարբի, պղնձի, արծաթի, երկաթի, կաղնի (ծառ), կաղամախի, ծիրանի, սալորի, թթենի, ընկուզենի, նոնենի, նշենի, խնձորենի, խոզենի (միս), առիւծենի, գայլենի (մորթ) :

172. Վերագրեալ վարժութեանց վերջաւորութիւնները ջնջեցէք և բառերը իրենց սկզբնական ձե-

ւին վերածեցէք—ածականը գոյականի դարձուցէք : — Երկինք, ձմեռ, դաշտ և այլն :

173. Հետեւեալ օրինակներուն մէջ վերջաւորութեանց տակ գիծ քաշեցէք և իմացէք թէ բառին ի՞նչ նշանակութիւն տուած են :

— Հանճարեղ (հանճար ունեցող), ուժեղ, հանճարաւոր, թագաւոր, զօրաւոր, զինաւոր—զինուոր, հոգեւոր, մարմնաւոր, ալեւոր, ունեւոր, չքաւոր, փայտաւոր, ձիաւոր, սպասաւոր, մտաւոր : Ծակոտ, աղտոտ, աղտեղի, ոսկրոտ, աղոտ, մսոտ, բորոտ, եղոտ, նախանձոտ, երկչոտ :

174. Վերջաւորութիւնները վերուցէք և ածական անունները գոյականի դարձուցէք :

175. Վերջաւորութիւնները զատեցէք և իմացէք թէ նոքա բառին ի՞նչ նշանակութիւն տուած են : — Բնիկ, գոռհիկ, ուռուցիկ, թափանցիկ, ընթացիկ, կանխիկ, ապառիկ :

Պարսիկ, հնդիկ, խափշիկ, վենետիկ : — Հեզիկ, մեղմիկ, քաղցրիկ, անուշիկ, հայրիկ, մայրիկ, մանկիկ, թռչնիկ, թաթիկ, Աննիկ, Թադիկ : Փափուկ, թափուկ, հեղուկ, հանելուկ, յեղյեղուկ և այլն :

Տեղացի, գիւղացի, դըսեցի, տնեցի, դաշտեցի, լեռնցի, քաղաքացի, գանձակեցի, կարնեցի :

Մանիքեցի, փարիսեցի, իսրայելացի, իսրայէլեան, իսրայէլական : Մտացի, խելացի :

176. Ի՞նչ բառերէ շինուած են հետեւեալ ածական անունները : — Ներքին, արտաքին, յետին, միջին, վերջին, խորին, մթին, անջրգին, խաւարին :

Հնոտի, սնոտի, օտարոտի, մեռելոտի, ցնցոտի : Ազդու, ահարկու, հատու, հուժկու, վերակացու, ստնտու, խրատտու, մահացու, տիրացու :

177. Հետեւեալ վերջաւորութիւնները ի՞նչ նշանակութիւն կուտան բառերուն :

Տնակ , նաւակ , թիակ , որդեակ , հոգեակ , մանեակ , աղաւնեակ :

Ընդունել — ընդունակ , խառնակ , բորբակ , մոլորակ , ճաշակ , դիտակ , վրիպակ , պտուտակ , էակ , Խոստակ , Ժողովակ , արտաստակ (նախատական իմաստով վերջին երեքը) :

Շուրջ — շրջան , նիշ — նշան , կարկատել — կարկատան , զրկան , իշխան , ծորան , խուժան , խածան , խթան , տափան , ցաքան , կուան , ջնջան : — Ռուբինեանք , թորոսեանք , հորանք : — Ութօրէք , ջրօրհնէք , տնօրհնէք : —

Սօղուն , թռչուն , զեռուն , սահուն , շարժուն , երերուն , զեղուն :

Նախատինք , բաժինք :

178. Ան , առ և Ի՞նչ վերջաւորութիւն ունեցող գոյականները , անորոշ դերբայի վերածեցէք :

179. Ի՞նչ բառերէ շինուած են հետեւեալ գոյականները : — Գոչիւն , մունչիւն , հնչիւն , թնդիւն , սօսաւիւն , շաչիւն , շառաչիւն :

Գոչումն , ողբումն , լալումն , սքանչացումն , զարմացումն , զղջումն , հիացումն :

Զօրանոց , աղքատանոց , հիւրանոց , ձմերոց , դըպրոց , ծաղկոց , կանանոց :

Սղոց , կտրոց , հատոց , քչոց , պրկոց , քերոց , կապոց , փաթթոց , չարդոց :

Պահարան , դեղարան , դարան , աղօթարան , գործարան , ննջարան , բնակարան :

Մառաստան , բուրաստան , այգեստան , անդաստան , կուսաստան , Պարսկաստան , Ռուսաստան :

180. Որսորդ , ճախորդ , յաճախորդ , առաջնորդ , միջնորդ , յաջորդ , նախորդ , պահնորդ , բաժանորդ , ժառանգորդ , ձախորդ , ուղղորդ , փոխանորդ :

Պահապան , պարտիզպան , այգեպան , դռնապան , ջաղացպան , ձիապան :

Գողունի , արքունի , Մանկունի , Արծրունի , Հայրունի , ծերունի :

181. Վերջաւորութիւնները զատեցէ՛ք : — Գանձանակ , մրցանակ , եղանակ , կոշնակ , խոտորնակ :

Մատանի , հարսանի , հովանի :

Լեզուանի , պիտանի , եռոտանի :

Թագունհի , դքսունհի , կոմսունհի , քանանունհի , Իսկունհի , Սրբունհի , բարեպաշտունհի , ազնուունհի :

182. Ծնունդ , սնունդ , ժողովուրդ , խառնուրդ : Ուրաստ , իմաստ , զգաստ , զգեստ , ուտեստ , պահեստ , գովեստ , հրաժեշտ :

Թագուստ , փախուստ , ապրուստ , գալուստ , հագուստ :

Սուրբ — սրբազան :

183. Մակբայակերտ վերջաւորութիւններ : — Լալազին , ուժգին , ողբազին , սրտազին , ցաւազին :

Բռնցի , աքացի , մագլցի :

Ուղղակի , կողմնակի , շեշտակի , յանկարծակի , թեթեւակի :

119. Շատ անգամ վերջաւորութեան մասնիկը միջանկեալ կը լինի բառի և բայի սովորական վերջաւորութեան մէջտեղ . օրինակի համար՝ տեղ-ուր-եւ , շնորհ-ուր-եւ , դիմ-ուր-եւ , զգեստ-ուր-եւ , հարկ-ուր-իլ ,

վերջաւորել, ջրորել, աղտորել, ժանգորել :

120. Երբեմն կը պատահի որ վերջաւորութեան մասնիկը բառին նշանակութիւնը չ'փոխեր :

Արքունի — արքունական, պատրաստ — պատրաստական, թշուառ — թշուառական, տէրունի — տէրունական, հայրենի — հայրենական, արժանի — արժանաւոր, հեռի — հեռաւոր, խոր — խորին, դժուար — դժուարին : Պիտանի — պիտանացու, ժառանգ — ժառանգորդ : Յառաջաբան — յառաջաբանութիւն, քանակ — քանակութիւն :

121. Կան մի քանի վերջաւորութեան մասնիկներ, որոնք բային արմատին և վերջաւորութեան մէջ կ'իյնան և գործողութեան մանր կրկնութիւնը կամ անընդհատ տեւողութիւնը ցոյց կուտան :

184. Թռչիլ, թռչտիլ, կտրել, կտրաել, կտորել, կտորտել, պատռել, պատռտել, խոցել, խոցոտել, կրճել, կրճտել, կռուիլ, կռուրտիլ, խածնել, խածատել, յօշել, յօշատել :

185. Վերոյիշեալ բոլոր վարժութեանց վերջաւորութեան մասնիկները կարգաւ արտագրեցէք ձեր տետրակաց լուսանցքներուն մէջ և գտէք թէ անոնց մէջ որո՞նք գոյականով, որո՞նք ածականով և որո՞նք մակբայով չ'իսուած են :

122. Այն բառերը, որոնք նախդիր և վերջաւորութեան մասնիկներ չ'ունին՝ կը կոչուին նախդիր, իսկ մասնիկ ունեցողները կը կոչուին ածական բառեր :

123. Ածանցական մասնիկները ինչպէս տեսանք՝ բառին սկիզբը կամ վերջը կը կրցուին . բայց նոքա կարող են նաև արմատի և վերջաւորութեան մէջ մտնել [տե՛ս 119] :

ՊԱՐՁ ԵՒ ԲԱՐԴ ԲԱՌԵՐ

124. Եթէ բառը արմատ մը ունի՝ որչա՞ր կը կոչուի . — աչք, ձեռք, ծառ :

Եթէ երկու արմատ ունի՝ բարկ կը կոչուի . — աչ—ա—գեղ, ձեռն—ա—սուն, ծառ—ա—տունկ :

Երկու արմատները միմեանց հետ կապող տառը յորակող կը կոչուի :

125. Բառերը երեք կերպիւ կը բարդուին :

ա. Երկու բառ իրարու կը կցուին առանց յօդակապի . արիւն — լուայ, կրճ — կալ, սուտ — գրոյց, քմ — ծիծաղ, տն — օրհնէք, հաց — թուխ, լուայ — արար, ձեռն — թափ... :

բ. Երկու բառ իրարու կը կցուին — յօ-
դակապով. — տն—ա—չէն, նաւ—ա—բեկ,
հայրասպան, նաւապետ, քայլափոխ, ծա-
ռատունկ, հաստապարանոց ։

գ. Երկու բառ իրարու կը կցուին — շաղ-
կապով. — ահուդող, աղուհաց, կերու-
խում, տակնու վրայ, ջարդուբուրդ ։

ԶԵՂՄԱՆ ԵՒ ՓՈՓՈԽՄԱՆ ԳԼԽԱԻՈՐ ԿԱՆՈՆՆԵՐԸ

126. Բարդութեանց և ածանցմանց մէջ
երբեմն ձայնաւոր տառերէն ոմանք դուրս
կը ձգուին կամ կը փոխուին ։

Ա. Զեղջմամբ՝

127. Բառը բարդած կամ ածանցած
ժամանակ, երբ հարկ լինի նախընթաց
վանկի բաղաձայնը յաջորդ վանկի տալ,
միայնակ մնացող ձայնաւորը պէտք է վեր-
նայ, եթէ —, է ձայնաւոր է ։

186. ա. Մաքուր — մաքրել, ամուր — ամրացնել,
մուր—մրտտել, մուշ—մշեցի, անասուն—անասնական,
գարուն—գարնանային, տուն—տնական, բուն—բնա-
կան, լուծ—լծել, լծորդ, բազում—բազմութիւն,
տխուր — տխրութիւն, աշուն — աշնանային, քուն —
քնել, տրտում—տրտմութիւն ։

բ. Գիր—գրել, գրութիւն, գրասէր, գրավարժ,
կիծ—կծել, կծող, կծու, գիծ—գծել, գծող, գծա-
գիր, բժիշկ—բժշկել, բժշկութիւն, բժշկական ։ Պար-
սիկ, պարսկերէն, պարսկահայ, հնդկահայ, ռամկա-
կան, աղջկական, մանկական ։

128. է տառով սկսուած միավանկները
վերի կանոնին չ'են հետեւիր, իր, իրական
և այլն ։

129. — տառով սկսուած միավանկները
ևս վերի կանոնին չ'են հետեւիր. — ուղտ—
ուղտերամակ, ութ—ութերող ։

130. Բարդութեանց ժամանակ՝ եթէ
յօդակապը դուրս թողուած է՝ բաղաձայնը
առանց յաջորդ վանկին ալ տալու՝ նախըն-
թաց ձայնաւորը կը կորսուի. — զուր և
պարտել՝ զրպարտել. սրամաշուք. քմծի-
ծաղ. անտես. ջրկեր, ջրհոր, ջրհոս ։

Բ. Փոփոխմամբ՝

131. Ածանցման ժամանակ՝ նոյն կա-
նոնի հիման վրայ՝ է ձայնաւորը կը փոխուի
է ձայնաւորի, ու երկատառը — երկատառի,
եւ երկատառը պարզ է ի, իսկ է- երկատա-
ռը կը փոխուի —ի ։ Միեւնոյնը կը լինի և
բարդութեանց ժամանակ ։

187. ա. Սէր, սիրել, սիրելի, եղբայրսիրութիւն .
դէտ, դիտել, դիտարան, դիտակ, դիտաւորութիւն .
Կէս, կիսել, կիսալանջ, կիսատ : Դէզ, դիզել, դի-
զած . այնպէս, այնպիսի, որպէս, որպիսի, որպիսու-
թիւն :

բ. Լոյծ, լուծել, լուծողական . բոյս, բուսական .
յոյս, յուսահատ, յուսալի, յուսակտուր . լոյս, լու-
սաւոր, լուսատու, լուսեղէն, լուսաբեր . գոյն, գու-
նաւոր . ծոյլ, ծուլութիւն, ծուլանալ . կոյս, կուսա-
կան, կուսաստան :

գ. Ատեան, ատենի, ատենակալ, ատենադպիր .
մատեան, մատենի, մատենագիր, մատենասէր . վայր-
կեան, վայրկենական :

դ. Պատիւ, պատուել, պատուական, պատուա-
սէր, անպատուել, պատուաւոր . ազնիւ, ազնուա-
կան, ազնուութիւն, ազնուազարմ . կռիւ, կռուա-
րար, կռուասէր . թիւ, թուել, թուահամար :

132. Բարդութեանց և ածանցմանց
ժամանակ + տառը դուրս կը ձգուի եթէ
նա արմատական չէ . իսկ եթէ արմատական
է՝ դուրս չ'կրնար ձգուիլ : — Խելք, խելացի,
խելօք, խելահաս : Մեղք, մեղաւոր, մե-
ղապարտ . փառք, փառաւոր, փառասէր :

Բացառութիւն է՝ հանք, հանքային :

133. Բառերը ածանցելու կամ բարդե-
լու ժամանակ՝ մեծ մասամբ յօդակապով
կ'ածանցուին կամ կը բարդուին : [Տե՛ս 124
և 125] : —

Յօդակապ չ'դրուիր .

ա. Երբ ածանցական մասնիկը կամբառը
ձայնաւորով սկսուած է՝ — հանձարեղ, ու-
ժեղ, մսեղէն, աղտեղի, հայրենի :

բ. Ե վերջացած բառերը ածանցուած ժա-
մանակ՝ — յօդակապ չ'են առնուր, այլ — և է
տառերէն կը կազմուի Ե յօդակապը՝ — հո-
գի—հոգեւոր, տարի—տարեկան, գինի—
գինեւէտ, հոգի—հոգեսէր, գերի—գերե-
վաճառ :

գ. Երբեմն Ե տառը բոլորովին կը զեղջ-
ուի . — եկեղեցի—եկեղեցական, պիտանի—
պիտանացու :

դ. Միավանկ բառերը Ե տառը կը պա-
հեն . — մի — միանալ, թի — թիաւոր, դի—
դիակ, ձի—ձիաւոր—ձիարչաւ :

188. Հետեւեալ բարդ բառերէ պարզ բառեր
կազմեցէք : — Առիւծասիրտ, առիւծակեր, առիւ-
ծակուր . շնագլուխ, շնկնճիթ . մարդասէր, մարդա-
կեր, մարդասպան . հայրախնամ, հայրագործ, հայ-
րագութ . արիւնկզակ, արիւնուշտ, արիւնբարու,
արիւնլուայ . սառնասիրտ, սառնակերպ . մեծասիրտ,
մեծամիտ, մեծագործ, մեծաբան . քաղցրաձայն,
քաղցրախօս . երկայնաթաթ, երկայնաբազուկ . հաս-
տապարանոց . քաջալանջ . գլխակոր . . .

Յլամարտ, կնամարդ, ընձառիւծ, այծեղջիւր,
ազգատոհմ, այրուձի, առեւտուր, հացկերոյթ :

189. Դիւրասահ, արագագնաց, հեշտասէր, մըշ-
տադալար, ձկնորս, հաւորս, ջրկիր, մատենագիր,
օրէնսդիր, օրէնսդէտ, ծնողասէր, լեղապատառ :

190. Հետեւեալ բարդութիւնները ինչպէս կազմուած են : — Դող, դողալ . չափ, չափել . հեծել, հեծեծել . կցել, կցկցել . շրջել, շրջաշրջել . վազել, վազվազել . չարչարել, չարչարանք :

Չարաչար, մեծամեծ, գունդագունդ, գոյնգոյն, այլեայլ, աղաւաղ :

Դ. ՄԱՍԱՆՑ ԲԱՆԻ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ
ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐՈՒ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ

Բարբ ջրային թռչուն է : — Ենթակայ :
Բարբն ոտքերը թաղանթոտ են : — Որոշող :
Բարբն կուտ կուտան : — Երկր . լրացնող (ու՞մ) :
Որսորդը սպաննեց Բարբ : — Բուն լրացնող :
Բարբն փետուրներ փետտեցին : — Երկրորդական լրացնող (որմէ) :
Բարբ յագեցուց իւր քաղցը : — Երկ . լրացնող (ինչո՞վ) :
Վերլուծելով վերոյիշեալ նախադասութիւնները, մենք կը տեսնենք .

Ս. Բարբ բառը կը կատարէ գլխաւոր և երկրորդական անդամներու պաշտօնը :

Բ. Այլևայլ պաշտօն կատարելու համար նա կը փոխէ իւր վերջաւորութիւնը, բայց չ'ածանցուիր :

134. Անուաններու վերջաւորութեանց փոփոխութիւնը կը կոչուի հւել :

Անուանները եօթը ձեւով միայն կրնան փոփոխել իրենց վերջաւորութիւնը . հետեւաբար հոլովներն ալ թուով եօթը են :

Իրենց բացատրած իմաստին համեմատ հոլովները կը լինին՝ ուղղական, սեռական, որական, հայցական, բացատրական, գործիական եւ ներգոյական :

Բոլոր հոլովները միասին առնելով հւելու են կը կոչուին :

Ս. Սագը, աղաւնին և ձուկը՝ ողնաւոր կենդանիներ են :

Բ. Սաքի, ուղանոյ եւ յիան մարմինները նման չ'են իրարու :

Վերոյիշեալ բառերը նախադասութեան մէջ միեւնոյն պաշտօնը կը կատարեն — որոշող են . բայց նոցա վերջաւորութիւնը միատեսակ չ'փոխուիր, այլ տարբեր (ի, ու, ան) :

135. Անուաններու վերջաւորութիւնները երեք ձեւով կը փոխուին :

Փոփոխման տարբերութիւնը սեռական հոլովին մէջ կը նկատուի :

Սեռական հոլովի վերջաւորութիւններն են՝ ի, ու, ան, եան :

Մնացեալ հոլովները կը կազմուին սեռականէն և ուղղականէն :

ՈՒՂՂԱԿԱՆ ԵՒ ՀԱՅՑԱԿԱՆ

136. Անուան անփոփոխ ձեւը կը կոչուի ուղղական :

Ուղղականը նախադասութեան մէջ միշտ

ենթակայ է. բայց նա օժանդակ բառերու հետ կրնայ ստորոգրեալի պաշտօննաև կատարել : — Ստեբ, աղանիս և յուր ողնաւոր կենդանիներ են :

137. Հայցականը՝ ձեւով նման է ուղղականին :

Հայցականը՝ նախադասութեան մէջ բուն լրացնողի պաշտօն կը կատարէ : — Ձկնորսը բռնեց ձուկը : Որսորդը հրացանով սպաննեց սագը և աղաւնին :

138. Ուղղականը կ'իմացուի ո՛ր և ի՞նչ հարցումներով, իսկ հայցականը՝ ը՛ր և ի՞նչ :

191. Ձեր դասին մէջ գտէք ուղղական և հայցական անուններ և տեսէք թէ ի՛նչ հարցումներու կը պատասխանեն :

192. Վերլուծեցէք հետեւեալ նախադասութիւնները և գտէք ուղղականները և հայցականները : — Նապաստակը երկչոտ է : Կարան ընտանի չորքտանի կենդանի է : Ծառը ունի շատ տոբեր, գրեհներ ու ծաղիկներ : Մանուշակը անուշ հոտ ունի : Կարան բռնեց ծուլը : Հաւը կոտ կ'ուտէ : Վարդը ծաղիկ է : Վարդերը կը շինէ մարանի : Ես սպի չ'ունիմ : Եսնը կը պահպանէ ասնը, հօրը և գիւղացոյն հարստութիւնը : Եսնը հալածեց գայլը — Որսորդը սպաննեց գայլը : Տարին ունի րոտներէն ա՛միս : Աճիսն ունի ըրո շե՛միս . իսկ շե՛միսը — եօ՛նն օր : Աշկերբորը առաւ երեքը և գնաց աստուծոյն : Աշկերբորը դասը չ'գիտեր :

139. Անուան այն ձեւը որ կը ցուցնէ թէ՛ առարկայն որո՞ւ կամ ինչի՞ կը պատկանի, սեռական հոլով կը կոչուի :

Սեռական հոլովը՝ առարկայն որո՞ւ պատկանիլը ցոյց կուտայ կամ ո՞ւմ լինելը կ'որոշէ : — Սագի, աղաւնոյ, ձկնո մարմինը . . . սենեկի, եկեղեցոյ, տան պատկերը . . . խաղողի, գինոյ, նոս համը . . .

140. Եթէ գոյական անունը ձեւով նրման է սեռականին, բայց նախադասութեան մէջ երկրորդական լրացնողի պաշտօն կը կատարէ՝ կը կոչուի որակաւ հոլով :

Տրական հոլովը կը ցուցնէ թէ ո՛ւմ կամ ի՛նչ ո և է բան մը կը յատկացնենք :

Տրական հոլովը միայն նշանակութեամբ կը զանազանի սեռականէն : — Խոհարարը ունեցած ստակը տուաւ սպի, աղանոյ, յիս : Վաճառականը խաղողն, գինոյ և նոսն ու շաղրութիւն կ'ընէր՝ գնելու նպատակաւ : — Ոտքս դպաւ քարին :

193. Հետեւեալ օրինակներու մէջ գտէք սեռական և տրական հոլովները : — Աշկերբին գիրքը գեղեցիկ է . ես գիրք տուի աշկերբին : Գրին կազմը շին-

ուած է գունաւոր թղթէ : Կաշին բաւական դրամ տրուած է : Սեւին օճառ , իւրին խրատը ինչ ընէ : Կուշտը Կաշին մանր կը բրդէ : Յովհաննէսին եղբայրը ուսումնարան գնաց : Խաղացած ժամանակս՝ ոտքս Կաշին դպաւ : Աշակերտները Յովհաննէսին ըսին որ իրենց աղօթել սովորեցնէ : Յովհաննէսին աշակերտները հասկերը կը կորզէին և կ'ուտէին : Աշակերտը վարձապետին փունջ մը ծաղիկ ընծայեց : Ծառերուն ջուր տուէք , ինչպէս որ կուտաք Կաշիններուն :

ԲԱՅԱՌԱԿԱՆ , ԳՈՐԾԻԱԿԱՆ ԵՒ ՆԵՐԳՈՅԱԿԱՆ
ՀՈՂՈՎՆԵՐ

141. Բայառական կը կոչուի անուան այն ձեւը , որ կը ցուցնէ թէ բան մը որով , ինչ և ուրիշ կ'ստանանք :

Բացառական հոլովը կրաւորական բայերու քով բուն լրացնող կը լինի , իսկ միւս բայերու քով՝ երկրորդական լրացնող և պարագայական կը լինի : —

194. Գիւղացին կտրեց ծառը : Ծառը կտրուեցաւ գիւղացիէն : Ձկնորսը բռնեց ձուկը : Ձուկը բռնուեցաւ ձկնորսէն : Հայրը որդիէն նամակ ստացաւ : Ծառէն պտուղ քաղեցինք : Աղբիւրէն ջուր խմեցինք : Զրհօրէն ջուր կը հանեն : Գետէն առու ելած է :

142. Գործիական կը կոչուի անուան այն ձեւը որ կը ցուցնէ թէ գործողութիւն մը

որով իրար , ինչի կամ որով յերկրորդներէ կը կատարենք :

Գործիական հոլովը նախադասութեան մէջ կը լինի երկրորդական լրացնող : Գիւղացին ծառը կտրեց Կաշին : Ես կը կարդամ Կաշիններէ :

195. Մանգաղով կը հնձեն խոտն ու ցորենը : Մեր պարտէզը լի է պտղատու ծառերով : Աշնան երկրագործին կարասները կը լեցունին գինով , ամբարներն՝ յիւրով և ցորենով , իսկ մառանները՝ տեսակ տեսակ պտուղներով : — Ով որ սուր առնու , որով կը մեռնի :

Ուշադրութեամբ ականջ դրէք ձեր վարժապետին և ճշդութեամբ կատարեցէք նորա պատուէրները :

143. Ներգոյական կը կոչուի անուան այն ձեւը որ կը ցուցնէ թէ գործողութիւն մը որով , ինչ քանի մէջ և ուրիշ կը կատարուի : — Ժողովուրդը կ'աղօթէր եկեղեցւոյ մէջ : Այնքան զօրութիւն չ'կայ ի՞նչ մէջ : Հոն մէջ աճեցնող զօրութիւն կայ :

ԿԱՆՈՆԱԻՈՐ ՀՈՂՈՎՄԱՆՑ ՊԱՏԿԵՐԸ

144. Բոլոր անունները սեռական հոլովի տարբերութիւն միայն ունին : Սեռական հոլովի կազմութեանը նայելով , բոլոր գոյական անունները չորս խումբի կը բաժ-

նուին: Իւրաքանչիւր խումբը մի հոլովում կը կազմէ:

145. Առաջին խումբը կը կազմեն այն անունները, որոնց սեռականը կը շինուի ուղղականի վերջը և կցելով: Հաց—հացի, քար—քարի, սեղան—սեղանի:

146. Երկրորդ խումբը կը կազմեն ընդհանրական այն անունները, որոնց ուղղականը ինքնին և ով կը վերջանայ և սեռականը ընելու համար և նախկին փոխուի: Ոսկի—ոսկի, գիւղացի—գիւղացի:

147. Երրորդ խումբը կը կազմեն այն բառերը, որոնք ինքնին և տառով կը վերջանան՝ յարակից որ և է բաղաձայն տառի մը: Սեռականի վերածելու համար հարկ կը լինի այդ և տառը՝ վերջին բաղաձայնէն հետացնել և առջեւը մտցնել տառը: Չուկն—ձկն, արիւն—արեւ, մեծուլ—մեծուլի, մեծուլի—մեծուլի:

148. Չորրորդ խումբը կը կազմեն անկանոն փոփոխու թիւն կրող անունները, ամիս—ամիս, օր—օր և այլն:

149. Կանոնաւոր հոլովման մի օրինակ.

Եզակի

Ուղ.	հաց,	գինի,	արիւն	օր
Սեռ.	հացի,	գինույ,	արեան,	օրուան
Տրւի.	հացի,	գինույ,	արեան,	օրուան
Հայց.	հացը,	գինին	արիւնը,	օրը
Բաց.	հացէ,	գինիէ,	արիւնէ,	օրէ
Գործ.	հացով,	գինիով,	արիւնով,	օրով
Ներք.	հացի մէջ,	գինույ մէջ,	արեան մէջ,	օրուան մէջ:

Յոգնակի

Ուղ.	հացեր,	գինիներ,	արիւններ,	օրեր
Սեռ.	հացերու,	գինիներու,	արիւններու,	օրերու
Տրւի.	հացերու,	գինիներու,	արիւններու,	օրերու
Հայց.	հացերը,	գինիները,	արիւնները,	օրերը
Բաց.	հացերէն,	գինիներէն,	արիւններէն,	օրերէն
Գործ.	հացերով,	գինիներով,	արիւններով,	օրերով
Ներք.	հացերու մէջ,	գինիներու մէջ,	արիւններու մէջ,	օրերու մէջ:

196. Արմատական հոլովներ ընդունելով ուղղականը և սեռականը, գտէ՛ք մնացեալ հոլովներուն կազմութիւնը՝ առաջին, երկրորդ, երրորդ և չորրորդ հոլովմանց մէջ առանձին առանձին:

197. Առաջին հոլովման տակ հոլովեցէ՛ք հետեւեալ գոյական անունները.

ա. վարդ, դաշտ, բաղդ, ծառ, տանձ, գանձ:

բ. Բաժակ, կացին, դանակ, սեղան, աթոռ, սղոց, խարտոց, անտառ, տերեւ, արեւ, ագուաւ, աղուէս, մողէս, բանակ, զինուոր, բժիշկ, պատկերահան :

198. Երկրորդ հոլովման տակ հոլովեցէք.

ա. Եկեղեցի, աղանի, մատանի, գինի, ձիթենի, խնձորենի :

բ. Թի, ձի, դի :

գ. Մարդ, Աստուած :

դ. Քաղաքացի, դաշտեցի կարնեցի :

199. Երրորդ հոլովման տակ հոլովեցէք .

ա. Շուն, տուն, ձուկ, նուռ, դուռ, մուկ :

բ. Արիւն, ծնունդ, ժողովուրդ, անուն, գարուն, աշուն :

գ. Խաւարումն, կործանումն, հարցումն, խոստումն, օժումն :

Յոգնակի՝ խաւարմունք կամ խաւարումներ, հարցմունք կամ հարցումներ . . .

դ. Աշխատութիւն, մեծութիւն, զօրութիւն, քաջութիւն, զեղխութիւն :

200. Ու՛, Իւն, և Բէւն վերջացած բառերը հոլովեցէք անխտիր երրորդ հոլովման վրայ :

201. Մահ, մահուան, կնիկ, աղջիկ և այլն հոլովեցէք չորրորդ հոլովման վրայ :

ԱՆԿԱՆՈՆ ՀՈԼՈՎՄՈՒՆՔ

150. Կան քանի մը անուաններ, որոնց եզակին անկանոն կը հոլովուի և յոգնակին կանոնաւոր . կան նաև այնպիսիներ, որոնց

եզակին կանոնաւոր և յոգնակին անկանոն է :
151. Եզակիի մէջ անկանոն հոլովուած անուաններն են .

- Ուլ. հայր, քոյր, սէր,
- Մե. Տբ. հօր, քրոջ, սիրոյ,
- Բաց. հօրմէ, քրոջմէ, սէրէ,
- Գրծ. հօրմով, քրոջմով, սիրով :

ա. Հայր բառի պէս հոլովեցէք՝ մայր, եղբայր, նախահայր և այլն :

բ. Քոյր բառի պէս հոլովեցէք՝ տէր, կին, տիկին, տալ, աներ, ընկեր և այլն :

գ. Սէր բառի պէս հոլովեցէք՝ սուրբ, սուր, լոյս :

202. Որոշեցէք հետեւեալ նախադասութեանց մէջ նշանակեալ գոյականներու հոլովմանց տարբերութիւնը . — Ես մի կնիկ երեք հաւ գնեցի : Դու միւս կնիկն հարիւր ձու գնեցիր : Իմ ընկերս գրքերը շատ են, քու ընկերը գրքերը քիչ են : Յովհաննէսի «ներջ որդին քու ուրջ հետ մեզ հիւր եկաւ : Կարապետի «ներջ որդին և ուրջ տղան ալ պիտի գան : Պարտիզի «ներջին խնդրեցինք որ մեզ խնձոր տայ : Տերջին մի նամակ ստացայ : Այս կնոջ «յը մի բարի մարդ է : Այս «յրն մէջէն զազան մը դուրս ելաւ : Մայր ծառը շատ երկայնակեաց է :

152. Յոգնակիի մէջ անկանոն հոլովուող անուաններն են .

Ուլ. Հայք, հրէայք, յոյնք, ասքանազեանք, կարնեցիք :

Սե. Հայոց, հրէից, յունաց, ասքանազեանց, կարնեցոց :

203. ա. Հոյ գոյականի պէս հոլովեցէք՝ տղայք, որդիք, ասորիք, պահք :

բ. Յոյ բառի պէս հոլովեցէք՝ ծնողք—ծնողաց, ռուսք, քուրդք, մոնկոլք, հոնք, լեհք :

գ. Ասքանազեանք բառի պէս հոլովեցէք՝ ա. բոլոր եւ վերջացած ցեղի և ազգի անուններու յոգնակին, բ. երրորդ հոլովման ինչ վերջացած բառերու յոգնակին ինչ աշխատութիւնք — աշխատութեանց և գ. նոյն հոլովման սոյ վերջացած բառերու յոգնակին ինչ ուսմունք — ուսմանց, նաեւ աղջկունք — աղջկանց, կանայք — կանանց :

դ. Հրեոյ բառի պէս հոլովեցէք՝ ծառայք :

ե. Կորեցի բառի պէս հոլովեցէք բոլոր եջ վերջացած բառերու յոգնակիները՝ քաղաքացիք, գիւղացիք, սագուկեցիք . . .

153. Բոլոր անկանոն հոլովուող անունները յոգնակիի մէջ կրնան առնել եւ յոգնականակերտ մասնիկը և կանոնաւոր կերպով հոլովուիլ առաջին հոլովման տակ — Հայեր, հրէաներ, յոյներ, ասքանազեաններ, կարնեցիներ :

154. Զեղչման կանոնին համաձայն՝ գոյական անուններէն շատերը հոլովման մէջ վերջին վանկի ձայնաւորը կը կորսնցնեն, մասնաւորապէս ձայնաւորները — Օգուտ —

օգտի, բրուտ — բրտի, քիթ — քիթի, սիրտ — սրտի, վիշտ — վշտի և այլն :

204. ա. Հոլովեցէք՝ երկիր, գետին, կաղին, սիրտ, գաւիթ, մոխիր, գիրք, միրգ, միս, մարմին . . .

բ. Օգուտ, հարուստ, ջուր, ձուկ, թուղթ, պլտուղ, կերակուր, մուկ, դուռ, նուռ, ուսում, ժողովուրդ . . .

155. Փոփոխման կանոնին համաձայն՝ գոյական անուններէն ոմանք հոլովման ժամանակ վերջին ձայնաւորնին կը փոխեն :

205. Հոլովեցէք՝ հանդէս — հանդիսի, սէր — սիրոյ : Հոլովեցէք՝ պատանեակ — պատանեկի, վարկեան — վարկենի, գեհեան — գեհենի, վառեակ — վառեկի, սենեակ — սենեկի :

Հոլովեցէք՝ հաշիւ — հաշուի, թիւ — թուի, հովիւ — հովուի, պատիւ — պատուի, լոյս — լուսի, հանգոյց — հանգուցի :

ԱՆՈՒԱՆ ՅՕԿԸ

156. Անուան յոյ կըրտուի այն տառը կամ մասնիկը որ անուան սկիզբը կամ վերջը կը դրուի և նորա գաղափարը կը մասնաւորէ —

- Ա. Ես իմնի մտայ և յորտ տեսայ :
- Բ. Ես իմնի մտայ և յորտ տեսայ :
- Առաջին նախադասութեան մէջ նշանակուած ա-

նունները բնականաբար գաղափար մը կ'ամփոփեն իրենց մէջ, այնպէս որ յայտնի չէ՝ թէ խօսողը ի՞նչ խանութ մտեր է և ի՞նչ մարդ տեսեր է :

Երկրորդ նախադասութեան մէջ միեւնոյն բառերը՝ սկիզբը կամ վերջը աննշան մասնիկ մը առնելով, ընդհանուր գաղափարը կը մասնաւորեն ինչպէս՝ Խանութ մտայ ըսելով, իսկոյն կ'ըմբռնենք որ յայտնի և որոշ խանութի մը ակնարկութիւն կ'ըլլուի, և մարդ մը ըսելով՝ կ'ըմբռնենք որ նորա տեսածը մի մարդ է եղբր և ոչ թէ ընդհանրապէս մարդ արարածը :

157. Յօդը երկու է, և՛ որոշիչ և և՛ անորոշ :

ա. և յօդը՝ ձայնաւորով վերջացած բառին վրայ կը դրուի. ձի, աղաւնի, որդի, ձու :

Եթէ անունը, տառով կը վերջանայ, սովորաբար, տառը կը վերցուի և և՛ յօդը տեղը կը դրուի, քահանան, երեսան, Մարթան :

Եթէ անուան յետագայ բառը ձայնաւորով սկսի, նախընթաց անունը իւր վերջը և յօդը կ'առնու : — Այն աչակերան է յառաջագիմութիւն ցոյց տուողը, որ իւր յոյսն ուրիշի վրայ չ'դնէ :

Մնացած դիպուածներու մէջ և տառը կը դրուի, մարդ, տղա, ծառ, ձիթանակ :

բ. Մը կամ մի անորոշ յօդը այն անուններու

սկիզբը կը դրուի՝ երբ խօսքը մի մասնաւոր բայց մեզ անյայտ և անծանօթ առարկայի մը վրայ է. զ. օր. մարդ, մի ծառ, մի սեղան : — Դուրսը մի մարդ կեցած է և քեզ կ'սպասէ :

ԱՆՈՒՆՆԵՐՈՒ ՀՈՂՈՎՈՒԹԸ ՈՐՈՇԵԱԼ ՅՕԴՈՎ

158. Դիմորոշք կը հոլովուին հասարակ անուններու պէս :

Որդ.	հացը,	զլուխդ,	հոգիս,
Մե.	հացի,	զլիւիդ,	հոգւոյս,
Տրի.	հացին,	զլիւիդ,	հոգւոյս,
Հայ.	հացը,	զլուխդ,	հոգիս,
Բայ.	հացէն,	զլիւէդ,	հոգիէս,
Գործ.	հացով,	զլիւովդ,	հոգւովս,
Ներք.	հացի մէջ,	զլիւիդ մէջ,	հոգւոյս մէջ :

206. Հասկըցէք թէ նշանակեալ բառերը ի՞նչ հոլով են :

Մայրը կը սիրէ որդին : Որդին կը պատուէ մայրը : Հայրը տարաւ Յովհաննէսը ուսումնարան : Ուսուցիչը Յովհաննէսին դասական գրքեր տուաւ : Ուսուցիչը քրննեց աշակերտը : Ուսուցիչը ըսաւ աշակերտին :

Ես տեսայ այն աշակերտը : Այն աշակերտին գիրքը կորսուեր էր :

207. Որսորդը սպաննեց մի թռչուն : Անտառապահը ծառ մի կտրեց : Անտառապահը կտրեց ծառը : Թռչնորսը թռչուն կ'որսայ : Թռչնորսը կ'որսայ թռչունը :

Տապարով կտորէ՛ Էրօր: Կոյնի՛ վայտ կտորէ: Դա-
շոյնը Էրօրէն սուր է:

ԱՅԱԿԱՆ ԱՆՈՒԱՆ ՀՈՂՈՎՈՒՄԸ

159. Ածականն անունը երկու տեսակ
գործածութիւն ունի՝ . . . գոյականի հետ,
ք. մինակ՝ առանց գոյականի:

160. Եթէ ածականը գոյականի հետ է,
նախադաս կը դրուի միշտ և անփոփոխ կը
մնայ, այսինքն չ'հոլովուի:

- Օրինակ՝ Ուշ բարի մարդ—սպիտակ թուղթ
- Սեւ. բարի մարդու—սպիտակ թղթի
- Տբւ. բարի մարդուն—սպիտակ թղթին
- Հոյ. բարի մարդը—սպիտակ թուղթը
- Բոյ. բարի մարդէն—սպիտակ թղթէն
- Գրծ. բարի մարդով—սպիտակ թղթով
- Ներհ. բարի մարդու մէջ—սպիտակ թղթի մէջ:

161. Եթէ ածականը առանձին է և
գիմորոշ յօդ առած է, գոյականի պէս կը
հոլովուի:

	Եզակի	Յոգնակի
Օրինակ՝	Ուշ սպիտակը	սպիտակները
	Սեւ սպիտակի	սպիտակներու
	Տբւ սպիտակին	սպիտակներուն
	Հոյ սպիտակը	սպիտակները
	Բոյ սպիտակէ(ն)	սպիտակներէ(ն)
	Գրծ սպիտակով(ը)	սպիտակներով(ը)
	Ներհ սպիտակի(ն) մէջ	սպիտակներու(ն) մէջ:

ԹՈՒԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐՈՒ ՀՈՂՈՎՈՒՄԸ

162. Թուականն անուններն ալ ածակա-
նի պէս երկու տեսակ գործածութիւն ու-
նին՝ միայնակ և գոյականի հետ:

Եթէ թուականը՝ գոյականին նախըն-
թաց է՝ չ'հոլովուի, եթէ առանձին է՝
գոյականն անուան պէս կը հոլովուի՝ յօ-
դով կամ առանց յօդի:

- Օրինակ՝ Ուշ Հոյ. հինգ—հինգերորդ—հնգական
- Սեւ. Տբ. հնգի—հինգերորդի—հնգականի
- Բոյ. հնգէ—հինգերորդէ—հնգականէ
- Գրծ. հնգով—հինգերորդով—հնգականով:

ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐՈՒ ՓՈՓՈԹՈՒԹԻՒՆԸ

163. Գոյականն դերանունները՝ գոյա-
կան անուններու պէս ունին թիւ և հոլով:

164. Էական դերանունները հետեւեալ
կերպով կը հոլովուին.

- ա. եւ. Ես, իմ, ինձ, ինձմէ, ինձմով:
- Թ. Ե՛նք, մեր, մեզ, մեզմէ, մեզմով:
- բ. եւ. Դու, քո, քեզ, քեզմէ, քեզմով:
- Թ. Դուք, ձեր, ձեզ, ձեզմէ, ձեզմով:
- գ. եւ. Ինքը, իւր, իւրեան, իւրմէ, իւրմով:
- Թ. Իրենք, իրենց կամ իւրեանց, իւր-
եանցմէ [իրենցմէ], իրենցմով:

208. Գտէք էական դերանուններու հորովը և նոցա կատարած պաշտօնը :

— Եւ կը սիրեմ ի՞ հայրս : Հայրս ինձ գեղեցիկ պարգեւ մը տուաւ : Հայրս գովեց զիս և յորդորեց որ միշտ ջանասէր լինիմ : Մայրս ինձմէ նամակ մը ստացաւ . նա ինձմով միայն կը մխիթարուի : Ես մեծ սէր կ'զգամ իմ մէջս գէպի բարին և առաքինին :

209. Նախադասութեամբ հորովեցէք Դ- և Ի-ի դերանունները հետեւեալ կարգով՝

Ես ունիմ եղբայր . ի՞ հօրեղբայրս բարի մարդ է և այլն :

165. Յոցական դերանունները հետեւեալ կերպով կը հորովուին :

ա. Եւ Սա, սորա, սորան, սորանէ, սորանով :

Եւ Սոքա, սոցա, սոցա, սոցանէ, սոցանով :

210. Հորովեցէք նոյն ձեւով Դ- և Ի- դերանունները :

211. Գրեցէք նախադասութիւններ ուր և և՛ դերանունները՝ ենթակայի, բուն և երկրորդական լրացնողներու և որոշողի պաշտօն կատարեն զանազան հորովներով, թէ եզակի և թէ յոգնակի :

166. Հոցական դերանունները երկու են՝ գոյական՝ ո՛ւ, ի՛նչ, և ածական՝ ո՛ր :

Ո՛ւ հարցականը եզակի կը հորովուի, իսկ յոգնակի միայն ուղղական ունի :

Ո՛ւ, որո՞ւ, ո՞ւմ, զո՞ւ, ումնե՞, ումնո՞ւ :

167. Ո՛ր հարցականը գոյական անուան

հետ կը գործածուի և ինքը անփոփոխ կը մնայ, բայց կրնայ յօդ առնել և այսպէս հորովուիլ :

Ո՞ր, որո՞յ, որո՞ւն, զո՞ր, որմե՞, որո՞ւմ :
Որո՞նք, որո՞նց, որո՞նց, որոնցմե՞, որոնցմո՞ւ :

168. Միևնոյն ձեւով կը հորովուի նաև ո՛ր յարաբերական դերանունը :

212. Գրեցէք այնպիսի նախադասութիւններ, որոնց մէջ երկրորդական նախադասութիւնը կապուած լինի գլխաւորին հետ՝ ո՛ր յարաբերական դերանուան զանազան հորովներով :

ՍՏԱՅԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

169. Գոյական դերանուններու սեռական հորովը կը կոչուի՝ սոցական դերանուն :

Ստացական դերանունները գոյականի պէս կը հորովուին և դիմորոշ ալ կ'առնուն . իմ—իմ, քո—քու—դ, անոր—անորը, իմ գիրքս .— իմ :

	եզակի		Յոգնակի	
	Գրաբար	Աշխարհբար	Գրաբար	Աշխարհբար
Ուր	իմ,	իմն,	մեր,	մերը
Սեւ	իմոյ,	իմին,	մերոյ,	մերին
Տրու	իմում,	իմին,	մերում,	մերին
Հոց	զիմ,	իմն,	զմեր,	մերը
Բաց	յիմմէ,	իմինէս,	ի մերմէ,	մերինէն
Գործ	իմով,	իմինով,	մերով,	մերինով

Նոյնպէս կը հոլովուին՝ քուկդ, անորը, ասորը և այլն :

ԴԻՄՈՐՈՇ ԴԵՐԱՆՈՒՆԵՐ

170. Դերանուանց արմատական տառերն ., ք, ն գոյական անուններու վրայ կը դրուին և կ'ըսուին քիքու :

., ք, ն տառերը հոլովեալ բառերու վրայ դրուելով միևնոյննչանակու թիւնը կուտան անոնց՝ ինչ նշանակու թիւն որ պիտի տային էական և ցուցական դերանունները :

Հայրս, իմ հայրս, սա հայրս. մայրդ, այդ մայրդ, քու մայրդ. տունս, գիւղքդ, եկեղեցին :

ԱՆՈՐՈՇ ԴԵՐԱՆՈՒՆ

171. Անորոշ դերանունները կը լինին. ա. Գոյական՝ ոմն, ոք, ոչ ոք, ոչինչ, իրար, միմեանց, մէկզմէկ, ամենքը, ամենեքեան :

բ. Անձական՝ քանի, մի քանի, որքան, այս ինչ, այն ինչ, այսքան, նոյնքան :

գ. Անձական և Գոյական՝ միւս, այլ, իւրաքանչիւր, ամեն, միևնոյն, բոլոր :

դ. Անձական և անհոլովով՝ որ և իցէ, որպիսի և

իցէ, որքան և իցէ, ինչ և իցէ, ինչ ինչ, որպիսի, այնպիսի . . .

172. Գոյական դերանուններէն . . . հետեւեալ կերպով կը հոլովուին .

	Եզակի		Յոգնակի	
	Գրաբար	Աշխրհբար.	Գրաբար	Աշխրհբար.
Ուղ.	ոմն,	մէկը,	ոմանք,	մէկ քանին,
Սեռ.	ուրումն,	մէկու մը,	ոմանց,	մէկ քանիին,
Տրհ.	ումեմն,	մէկու մը,	ոմանց,	մէկ քանիին,
Բաց.	յումեմնէ,	մէկէ մը,	յումանց,	մէկ քանիէն,
Գործ.	ոմամբ,	մէկով մը,	ոմամբք,	մէկ քանիով,
Հայց.	զումն,	մէկը,	զոմանս,	մէկ քանին,
Ներք.	—	—	յումանս,	մէկ քանիին մէջ :

173. Մնացած բոլոր անորոշ դերանունները կրնան դիմորոշ առնուել և գոյական անուան պէս հոլովուիլ :

- Ոչինչ, ոչնչի . Նոյնքան, նոյնքանի .
- Ամեն, ամենուն . Բոլոր, բոլորի .
- Այսքան, այսքանի . Միւս, միւսի .
- Այսչափ, այսչափի . Իւրաքանչիւր, իւրաքանչիւրի :

ԲԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆԸ

174. Բայի փոփոխութիւնը եղանակներով, ժամանակներով, թիւերով և դէմքերով՝ կը կոչուի Ինքնաբերական :

Ա. Սիրել, կը սիրե՞մ, սիրեցի՞, պիտի սիրե՞մ, սիրե՛ :

Բ. Խօսիլ, կը խօսե՞մ, խօսեցայ, պիտի խօսե՞մ, խօսե՛ :

Գ. Ուրախանալ, կ'ուրախանամ, ուրախացայ, պիտի ուրախանամ, ուրախացե՛ր :

175. Բոլոր բայերը մէկ կերպով չ'են խոնարհիր, այլ շատ կամ քիչ՝ կը տարբերին իրարմէ :

Միևնոյն ձևով խոնարհուող բայերը մասնաւոր դաս կը կազմեն և կը կոչուին լծորդութիւն :

176. Բայերը ունին չորս լծորդութիւն. Աստի՛ լծորդութիւնը կը կազմեն այն բայերը, որոնք եւ վերջաւորութիւնն ունին — Սիրել, գրել, գործել...

Երկրորդ լծորդութիւնը կը կազմեն այն բայերը, որոնք եւ վերջաւորութիւնն ունին — Հիւծիլ, յոգնիլ, սիրուիլ...

Երրորդ լծորդութիւնը կը կազմեն «ւ վերջացած» բայերը — Կարգար, խնդար, հաւատալ...

Չորրորդ լծորդութիւնը կը կազմեն «ու» վերջացած բայերը — Ուրախանալ, զամանալ, բարձրանալ...

— Եմ, լինիմ —

177. Չէզոք բայերէն երկուքը կը ցուցնեն ոչ թէ առարկայի գործողութիւնը, այլ իսկապէս նորա գոյութիւնը. սոքա կը կոչուին եւս բայեր։ Էական բայերը միևնոյն ժամանակ օժտուի ալ կը կոչուին. վասընդի նոցա օժանդակութեամբ կը կազմուին բաղադրեալ ժամանակներու մեծագոյն մասը :

Էական բայերն ունին առանձին խոնարհումն :

ա. ե՞մ բայը միայն երկու ժամանակ ունի. սահմանական ներքին եւ անարար :

Ներքին՝ եմ, ես, է, ենք, էք, են :

Անարար՝ էի, էիր, էր. էինք, էիք, էին :

բ. Լինի՞մ բայը բոլոր ժամանակներն ունի, և անկանոն բայերու դասէն է :

Սահմանական եղանակ՝

Ներքին՝ (*) կը լինիմ, կը լինիս, կը լինի. կը լինինք, կը լինիք, կը լինին :

Անարար՝ կը լինէի, կը լինէիր, կը լինէր. կը լինէինք, կը լինէիք, կը լինէին :

(*) Պոլսոյ աշխարհաբարի մէջ կը մասնիկը կը դրուի առհասարակ ամէն բայերու սկիզբը՝ բացի կարարեալ, արարանք ժամանակէն եւ հրամայական եղանակէն :

Կոտորեալ (*) եղայ, եղար, եղաւ. եղանք, եղաք, եղանք.
Աղառնի՝ պիտի լինիմ, պիտի լինիս, պիտի լինի. պի-
տի լինինք, պիտի լինիք, պիտի լինին:

Հրամայական՝ եղի՛ր, եղէ՛ք:

Անորոշ դերբայ՝ լինել:

Անցեալ , եղող:

Աղառնի , լինելու:

ԱՌԱՋԻՆ ԼԾՈՐԴՈՒԹԻՒՆ

178. Չորս լծորդու թեան բայերը իրար-
մէ կը տարբերին անորոշ դերբայի, անցեալ կոտորեալի,
հրամայականի և անցեալ դերբայի կազմութեամբ:

Մնացեալ ժամանակները բոլոր լծոր-
դու թեանց մէջ միօրինակ և իրարու նման
կը շինուին:

179. Առաջին լծորդու թեան կատար-
եալը կը կազմուի անորոշ դերբայի վեր-
ջաւորութեան փոխարէն դնելով եջի մաս-
նիկը, հրամայականը է՝ կամ է՛, անցեալ
դերբայը եւ կամ ո՛ւ:

(*) Աշխարհարարի մէջ վերջին կամ վերջնիթեր է կամ
է տառը — տառի կը փոխուի՝ եղայ, եղար, եղաւ:

Յարակատար, գերակատար դէմքերը իբր բաղադր-
եալ բային անցեալէն եւ էական եմէն կը շինուին, սակայն
մենք բոլորովին մէկդի կը թողունք՝ աչկերտաց միտքը
չ՛ծանրաբեռնելու համար:

Ահա առաջին առաջին լծորդու թեան ամ-
բողջ պատկերը:

Սահմանական եղանակ՝

Ներկայ՝ կը գրեմ, կը գրես, կը գրէ. կը գրենք,
կը գրէք, կը գրեն:

Անկոտոր՝ կը գրէի, կը գրէիր, կը գրէր. կը գրէինք,
կը գրէիք, կը գրէին:

Կոտորեալ՝ գրեցի, գրեցիր, գրեց. գրեցինք, գրեցիք,
գրեցին:

Աղառնի՝ պիտի գրեմ, պիտի գրես, պիտի գրէ.
պիտի գրենք, պիտի գրէք, պիտի գրեն:

Հրամայական՝ գրէ՛, գրեցէ՛ք:

Դերբայ՝ գրել, գրող, գրած, գրելու:

213. Ուշադրութեամբ քննեցէք խոնարհուած բայը
և բացատրեցէք ժամանակներու կազմութիւնը:

214. Սոյն օրինակով խոնարհեցէք հետեւեալ չէ-
զոք բայերը՝ վազել, քայլել, սպասել, պարապել:

215. Գրեցէք հետեւեալ ներգործական բայերու
կատարեալը, ապառնին, անցեալ դերբայը, հրամա-
յականը. — գովել, ժողովել, ազատել, փրկել, ար-
ձակել, կապել, բեւեռել, համարել, թուել:

ԵՐԿՐՈՐԴ ԼԾՈՐԴՈՒԹԻՒՆ

180. Երկրորդ լծորդու թեան տակն եւն
և վերջացած բոլոր ներգործական և չէ-
զոք բայերը:

Երկրորդ լծորդու թեան կատարեալը՝ եցայ

կը վերջանայ . մնացեալ ժամանակներու կազմութիւնը առաջին լծորդութեան պէս է :

Սահմանական եղանակ՝

Ներկայ՝ կը խօսիմ, կը խօսիս, կը խօսի . կը խօսինք, կը խօսիք, կը խօսին :

Անկարգ՝ կը խօսէի, կը խօսէիր, կը խօսէր . կը խօսէինք, կը խօսէիք, կը խօսէին :

Կարգեալ՝ խօսեցայ, խօսեցար, խօսեցաւ . խօսեցանք, խօսեցաք, խօսեցան :

Ապառնի՝ պիտի խօսիմ, պիտի խօսիս, պիտի խօսի . պիտի խօսինք, պիտի խօսիք, պիտի խօսին :

Հրամայական՝ խօսէ՛, խօսեցէ՛ք :

Դերբայ՝ խօսիլ, խօսող, խօսած, խօսելու :

181. Երկրորդ լծորդութեան բայերը կը խոնարհին նաև առաջին լծորդութեան բայերուն պէս :

216. Համեմատեցէ՛ք երկրորդ լծորդութիւնը առաջին լծորդութեան հետ և բացատրեցէ՛ք նոցա նմանութիւնը ու տարբերութիւնը :

217. Խոնարհեցէ՛ք հետեւեալ բայերը սոյն ձևով .— Ապրիլ, աշխատիլ, կանգնիլ, բնակիլ, սովորիլ, ծաղկիլ, քրանիլ, յաջողիլ :

218. Խոնարհեցէ՛ք էլ վերջացած հետեւեալ չէզոք բայերը՝ կարմրիլ, սպիտակիլ, պատահիլ, ցաւիլ, դադարիլ, հաւանիլ, պարապիլ . . . :

219. Գտէ՛ք ձեր ընթերցանութեան դասի մէջ առաջին և երկրորդ լծորդութեան բայերը և իմացէ՛ք նոցա սեռը, եղանակը, ժամանակը, թիւը և դէմքը :

ԵՐՐՈՐԴ ԼԾՈՐԴՈՒԹԻՒՆ

182. Երրորդ լծորդութիւնը կը կազմեն ու վերջացած բայերը : Այս լծորդութեան կատարեալ վերջաւորութիւնը կը լինի այն, հրամայականը՝ աւնցեալ դերբայը՝ յայն . Մնացեալ ժամանակներու կազմութիւնը նախընթաց բայերու լծորդութեան պէս է :

Սահմանական եղանակ՝

Ներկայ՝ կ'ողբամ, կ'ողբաս, կ'ողբայ . կ'ողբանք, կ'ողբաք, կ'ողբան :

Անկարգ՝ կ'ողբայի, կ'ողբայիր, կ'ողբար . կ'ողբայինք, կ'ողբայիք, կ'ողբային :

Կարգեալ՝ ողբայնք, ողբայնք, ողբայնք . ողբայնք, ողբայնք, ողբայնք :

Ապառնի՝ պիտի ողբամ, պիտի ողբաս, պիտի ողբայ . պիտի ողբանք, պիտի ողբաք, պիտի ողբանք :

Հրամայական՝ ողբա՛, ողբացէ՛ք :

Դերբայ՝ ողբալ, ողբացող, ողբացեալ կամ ողբացած, ողբալու :

220. Համեմատեցէ՛ք երրորդ լծորդութեան դերբայը և կատարեալը՝ նախընթաց լծորդութեանց հետ, իսկ հրամայականն ու ապառնին՝ երկրորդ լծորդութեան հետ :

221. Խոնարհեցէ՛ք հետեւեալ ներգործական բայերը՝ աղալ, զգալ, կարգալ . . . :

222. Գրեցէ՛ք անցեալ դերբայերը հետեւեալ չէզոք բայերու՝ մնալ, գոռալ, գնալ, յուսալ :

223. Գրեցէ՛ք ապառնին հետեւեալ չէզոք բայե-
րու՝ խղճալ, անսալ :

224. Գրեցէ՛ք բոլոր եղանակներով և ժամանակ-
ներով հետեւեալ բայերը՝ կաղալ, խնդալ, խաղալ . . .

ՉՈՐՐՈՐԴ ԼԾՈՐԴՈՒԹԻՒՆ

183. Չորրորդ լծորդու թիւնը կը կազ-
մեն ան վերջացած բայերը :

Չորրորդ լծորդու թեան կատարեալը
կը վերջանայ, հրամայականը անցեալ
դերբայը :

Սահմանական եղանակ՝

Ներկայ՝ կ'իմանամ, կ'իմանաս, կ'իմանայ . կ'իմա-
նանք, կ'իմանաք, կ'իմանան :

Անկատար՝ կ'իմանայի, կ'իմանայիր, կ'իմանար . կ'ի-
մանայինք, կ'իմանայիք, կ'իմանային :

Կատարեալ՝ իմացայ, իմացար, իմացաւ . իմացանք, ի-
մացաք, իմացան :

Ապառնի՝ պիտի իմանամ, պիտի իմանաս, պիտի ի-
մանայ . պիտի իմանանք, պիտի իմանաք,
պիտի իմանան :

Հրամայական՝ իմացի՛ր, իմացե՛տ :

Դերբայ՝ իմանալ, իմացող, իմացեալ կամ իմացած,
իմանալու :

225. Համեմատեցէ՛ք չորրորդ լծորդու թեան կա-
տարեալը, հրամայականը և անցեալ դերբայը՝ երկ-
րորդ լծորդու թեան նոյն ժամանակներու հետ :

226. Բոլոր չորս լծորդու թիւները համեմատե-

ցէք իրարու հետ և բացատրեցէ՛ք թէ՛ ո՞ր ժամանակ-
ներն կը տարբերին իրարմէ :

227. Մահմանական եղանակի բոլոր ժամանակնե-
րով խոնարհեցէ՛ք հետեւեալ ներգործական բայերը,
մոռանալ, խոստանալ, գողանալ, ընթեռնուլ :

228. Խոնարհեցէ՛ք մնացած եղանակներով հե-
տեւեալ չէզոք բայերը՝ ուրախանալ, զարմանալ, բարձ-
րանալ, մեծանալ, հարստանալ :

ԿՐԱԻՈՐԱԿԱՆ ԲԱՅԵՐՈՒ ԽՈՆԱՐՀՈՒՄԸ

184. Կրաւորական բայերը կը ծագին
ներգործական բայերէ՛ն՝ անցեալ դերբա-
յին առաջին վերջաւորութիւնը ան դար-
ձընելով՝ զորօրինակ՝ սիրել — սիրուել, կար-
դուլ — կարդացուել :

185. Ամեն բայ որոյ վերջաւորութիւնը
կարելի չ'լինի սոյն ձեւով փոփոխել, չէզոք
է. փոփոխուողները՝ ներգործական են :

186. Անորոշ դերբայը այսպէս կազմելէ
ետքը՝ բոլոր կրաւորական բայերը խոնար-
հելու է երկրորդ լծորդու թեան տակ :

Սահմանական եղանակ՝

Ներկայ՝ կը սիրուիմ, կը սիրուիս, կը սիրուի . կը
սիրուինք, կը սիրուիք, կը սիրուին :

Անկատար՝ կը սիրուէի, կը սիրուէիր, կը սիրուէր . կը
սիրուէինք, կը սիրուէիք, կը սիրուէին :

Կարբեւ՝ սիրուեցայ, սիրուեցար, սիրուեցաւ. սիրուեցանք, սիրուեցաք, սիրուեցանք :

Ապառնի՝ պիտի սիրուիմ, պիտի սիրուիս, պիտի սիրուի. պիտի սիրուինք, պիտի սիրուիք, պիտի սիրուինք :

Հրայայտան՝ սիրուէ՛, սիրուեցէ՛ք :

Դերբայ՝ սիրուիլ, սիրուած :

229. Խոնարհեցէ՛ք նշանակեալ բայերը բոլոր ժամանակներով : — (Գրաւոր) :

230. Իմացէ՛ք թէ հետեւեալ բայերէն որո՞նք են ներգործական և որո՞նք չէզոք : — Կարգալ, հաւատալ, գողանալ, իմանալ, մարգարէանալ, մոռանալ, յղանալ, ծնանել, չափել, հոգալ, որսալ, զարմանալ, բարկանալ, զօրանալ, թշուառանալ, ծուլանալ, դողալ, գտնալ, յուսալ, ջանալ, ցնծալ, ազգել, աղաչել, այրել, կարել, հրամայել, մատնել, յայտնել, շարժել, շինել, շնչել, փրկել, քաջալերել, բաժանել, դարմանել, խափանել, կործանել, յանդիմանել, սերմանել, հալածել, վանել, հասնիլ, աղաղակել, ամաչել, գոչել, դիմել, սպառել, թագաւորել, տիրել, կանչել, կանաչանալ, մնչել, կտրել, կտորել, վարել, քանդել, փորել, աղալ, աղել, տաչել, շարդել, հալածել, մղել, փրկել, սպաննել, անցնիլ, իջնել, ելնել, մտնել, համբերել, յուսահատիլ, վհատիլ, դաւանել, խոստովանել, խորհել, բանալ, աշխատիլ, բնակիլ, դադարիլ, հրաժարիլ, պակասիլ, արձակել, դիզել, կարկառել, գործել :

231. Վերոյիշեալ բայերէն ներգործականները գրեցէ՛ք՝ կրաւորականի վերջաւորութեամբ :

187. Այն բայերը, որոնց կատարեալը, հրամայականը և անցեալ դերբայը մեր սովորած խոնարհումէն կը շեղին՝ անկանոն բայեր կը կոչուին : Անկանոն բայերը երկու դասի կը բաժնուին՝ կէս զարտուղիներ և բուն զարտուղիներ :

188. Կէս զարտուղիներն են բոլոր նէ, նէ և նւ վերջաւորութեամբ բայերը որոնք չորրորդ ընթացքով թեան պէս կը խոնարհին, բայց անկանոն ժամանակներուն մէջ՝ և տառը փոխանակելի փոխելու, իբրև եկամուտ տառ դուրս կը ձգեն : — Կրաւորականը կանոնաւոր է և և տառը կը պահէ :

Օրինակներ՝

- Գտնել, գտայ, գտի՛ր, գտած :
- Տեսնել, տեսայ, տես՛ս, տեսած :
- Մտնել, մտայ, մտի՛ր, մտած :
- Լինել, եղայ, եղի՛ր, եղած :
- Դառնալ, դարձայ, դարձի՛ր, դարձած :
- Հեծնել, հեծայ, հեծի՛ր, հեծած :
- Իջնել, իջայ, իջի՛ր, իջած :
- Խածնել, խածայ, խածի՛ր, խածած :
- Հասնիլ, հասայ, հասի՛ր, հասած :
- Բուսնիլ, բուսայ, բուսի՛ր, բուսած :

Անցնիլ, անցայ, անցի՛ր, անցած :

Հագնիլ, հագայ, հագի՛ր, հագած :

Մեռնիլ, մեռայ, մեռի՛ր, մեռած :

Ծնանիլ, ծնայ, ծնի՛ր, ծնած :

Ջրօսնուլ, զբօսայ, զբօսի՛ր, զբօսած :

Երդնուլ, երդուայ կամ երդուընցայ, երդուի՛ր կամ երդուընցի՛ր, երդուած կամ երդուընցած :

Ընկնիլ, ընկայ, ընկի՛ր, ընկած :

232. Խոնարհեցէք շնանել եւ շնանիլ միևնոյն բայը՝ ներգործական և կրաւորական վիճակի մէջ :

233. Խոնարհեցէք գոնել եւ գոնիլ բայերու կրաւորականը :

234. Գրաւոր ներկայացուցէք վերոյիշեալ բայերու սահմանականը և կատարեալը :

235. Գրեցէք նոյն բայերու ապառնին :

189. Այսպէս կը խոնարհուին : և վերջացած բայերը, որոնց ւ տառը եւս եկամուտ լինելով դուրս կը ձգուի :

Թռչիլ, թռայ, թռի՛ր, թռած :

Կորչիլ, կորայ, կորի՛ր, կորած :

190. Հետեւեալ բուն զարտուղի բայերը խոնարհման երկու ձեւ ունին, որոնցմէ առաջինը՝ անկանոնը աւելի գործածական է : Սոցա կրաւորականները ևս կանոնաւոր են :

ա. Բերել, կրաւորական Բերիլ

Կատարելի՝ բերի, բերի՛ր, բերաւ. բերինք, բերիք, բերին :

Հրամայական՝ բեր՛ր, բերէ՛ք :

Դերբայ՝ բերել, բերած :

կրաւորական

Կատարելի՝ բերուեցայ, բերուեցար, բերուեցաւ. բերուեցանք, բերուեցաք, բերուեցան :

Հրամայական՝ բերուէ՛, բերուեցէ՛ք :

Դերբայ՝ բերուիլ, բերուած :

բ. Ըսել — ըսիլ

Ըսի, ըսիր, ըսաւ. ըսինք, ըսիք, ըսին :

Կրաւորական՝ Ըսուեցայ, ըսուեցար, ըսուեցաւ :

գ. Գործել կամ գործուիլ

Գործեցի, գործեցիր, գործեց. գործեցինք, գործեցիք, գործեցին :

Գործէ՛, գործեցէ՛ք, գործել, գործած :

դ. Դնել — դրել

Դրի, դրիր, դրաւ. դրինք, դրիք, դրին :

Դի՛ր, դրէ՛ք, դնել, դրուած :

ե. Առնիլ

Առի, առիր, առաւ. առինք, առիք, առին : Ա՛ռ, առէ՛ք, առնուլ, առած :

զ. Տանիլ

Տարի, տարիր, տարաւ. տարինք, տարիք, տարին :

Տա՛ր, տարէ՛ք, տանել, տարած :

է. Բանալ — Բացիլ

Կը բանամ, կը բանաս, կը բանայ. կը բանանք, կը բանաք, կը բանան :

Բացի, բացիր, բացաւ. բացինք, բացիք, բացին :

Բացէ՛ք, բանալ, բացած :

Կրաւորական՝ կը բացուիմ, կը բացուիս, կը բացուի. կը բացուինք, կը բացուիք, կը բացուին : Բացուեցայ, բացուեցար, բացուեցաւ. բացուեցանք, բացուեցաք, բացուեցան : Բացուիլ, բացուած :

ը. նստի

կը նստիմ, կը նստիս, կը նստի. կը նըստինք, կը նստիք, կը նստինք :
նստայ, նստար, նստաւ. նստանք, նըստաք, նստան :
նիստ, նստեցէ՛ք, նստիլ, նստած :

թ. թողնի

թողուցի, թողուցիր, թողուց. թողուցինք, թողուցիք, թողուցինք :
թո՛ղ, թողէ՛ք, թողնել, թողած :

Ժ. Երդուի

Երդուայ, երդուար, երդուաւ. երդուանք, երդուաք, երդուանք :
Երդուի՛ր, երդուեցէ՛ք :

ժա. Սկսի

Սկսեցի, սկսեցիր, սկսեց. սկսեցինք, սկսեցիք, սկսեցինք :
Սկսէ՛, սկսեցէ՛ք, սկսած :

236. Վերոյիշեալ բայերէն իւրաքանչիւրը խոնարհեցէք բոլոր ժամանակներով (գրաւոր) :

237. Ներգործականներուն կրաւորականները խոնարհեցէք բերանացի :

191. Երկու բայ կայ, որոնց կատարեալը ուրիշ արմատէ կը շինուի, որովնորք բոլորովին անկանոն են :

ա. Ուրի

կերայ, կերար, կերաւ. կերանք, կերաք, կերանք :
կե՛ր, կերէ՛ք, կերած :

բ. Գու

կարեւո՛ւ Եկայ, եկար, եկաւ. եկանք, եկաք, եկանք :
Ե՛կ, եկէ՛ք, եկեալ, եկած :

192. Տալ բային կատարեալը ալ անկանոն է :

կարեւո՛ւ Տուի, տուիր, տուաւ. տուինք, տուիք, տուինք :
Տա՛լ, տուէ՛ք, տուած :

238. Գրաւոր ներկայացուցէք է՛ւ, րո՛ւ բայերը բոլոր եղանակներով և ժամանակներով խոնարհած :

239. Տալ բայի անկատար և ապառնի ժամանակներու վրայ նախադասութիւններ գրեցէք, եզակի և յոգնակի :

Գու բային ներկայ, անցեալ և ապառնի դերբայներէն նախադասութիւններ գրեցէք, այնպէս որ դերբայները որոշողի պաշտօն կատարած լինին :

ՊԱԿԱՍՍԱԻՈՐ ԲԱՅԵՐ

193. Կան բայեր որոնք բոլոր ժամանակները չ'ունին. դոքա կը կոչուին պակասորք : Պակասաւոր բայերու պակաս ժամանակները ուրիշ բայերով կը լրացուին : Ահա և ստիկ՝

ա. Ե՛ս եւ կ՛մ էական բայերը ունին միայն երկու ժամանակ, սահմանական ներկայ և անկատար. Ե՛՛, Ե՛՛ :
Մնացեալ ժամանակները լինի՛ էական բայով կը լրանան :

բ. Ունիմ, ունիս, ունի. ունինք, ունիրք, ունինք :
Ունէի, ունէիր . . . կատարեալը կը լրանայ ունեալ
բայով :

240. Պակասաւոր բայերը խոնարհեցէք և մնաց-
եալ ժամանակները իրենց լրացուցիչ բայերով լծոր-
դեցէք :

241. Լրացուցիչ բայերն ալ առանձին խոնարհե-
ցէք :

ՄԻԱԴԵՄ ԲԱՅԵՐ

194. Կան բայեր, որոնք միայն եղակի
երրորդ դէմքով կը գործածուին, ուստի
և յետէ կը կոչուին : Միադէմբայերը իսկա-
պէս երկու մասէ բաղկացած են . երկրորդ
մասն էական բայն է, իսկ առաջին մասը
գոյական կամ ածական անուան իմաստ ու-
նի : — Պէտք է, արժան է, հարկ է, ամօթ
է, հնար է, վայել է, բաւ է, անկ է . . .

195. Միադէմբայի քով ենթակայն որոնք
հօլովով կը դրուի . երբեմն միադէմբայը
կը գործածուի առանց ենթակայի և կը
կազմէ ուրիշ նախադասութիւն :

196. Դիմաւոր բայերէն ոմանք ալ իբր
միադէմբայեր կը գործածուին և անդէմ

նախադասութիւն կը կազմեն : — Կը լսուի,
խօսուեցաւ, կը մթնէ, ցրտեց . . . :

242. Հետեւեալ նախադասութեանց մէջ գտէ՛ք
ենթակայն : — Ձեզ պէտք է ածիլ, իսկ ինձ — մեղմա-
նալ : Մեղք է զրպարտել անմեղ մարդիկը : Ամօթ է
երբ մարդ չկատարեր իւր խօստումը : Հարկ է, որ
որդիքը պատուեն իրենց ծնողքը : Քեզ արժան է
գիտնալ քու օգուտդ ու վնասդ : Որքան հարկ է, պէտք է
չըջահայեցութիւն ունենաս, որպէսզի թշնամին մեր
մէջ չմտնէ : Բարեկամ է, որքան խաբուեցանք . բարե-
կամն դաւաճանեցին զմեզ՝ օգտուելով մեր հաւա-
տարմութենէն : Խօսուեցաւ ու վնասուեցաւ որ առաջ մենք
երթանք՝ յետոյ դուք :

ԲԱՅԱՍԱԿԱՆ ԲԱՅԵՐ

197. Երբոր բայերը գործողութեան
կատարումը կը ժխտեն՝ թի, ոչ կամ չմերժու-
ղական իմաստ ունեցող ստոր իրենց առ-
ջեւը առնելով՝ բացարձակ բայ կը կոչուին : —
Չտեսի, ոչ գրել, ոչ կարդալ, չխօսեցայ,
չկրցի, թի գրեր :

Բացասական բայերուն հակառակ միւս
բայերը հաստատական կը կոչուին :

198. Բացասական բայերու խոնարհու-
մը փոքր ինչ տարբեր է հաստատական
բայերու խոնարհումէն :

Օրինակի համար՝ չեւ:

Սահմանական եղանակ՝

- Ներքո՝ Չ'եմ լսեր, չ'ես լսեր, չ'լսեր. չ'ենք լսեր, չ'էք լսեր, չ'են լսեր:
- Մեկտար՝ Չ'էի լսեր, չ'էիր լսեր, չ'էր լսեր. չ'էինք լսեր, չ'էիք լսեր, չ'էին լսեր:
- Կարգութիւն՝ Չ'լսեցի, չ'լսեցիր, չ'լսեց. չ'լսեցինք, չ'լսեցիք, չ'լսեցին:
- Ապառնի՝ Չ'պիտի լսեմ, չ'պիտի լսես, չ'պիտի լսէ. չ'պիտի լսենք, չ'պիտի լսէք, չ'պիտի լսենա:
- Հրամայական՝ Մի՛ լսեր, մի՛ լսէք:
- Դերբայ՝ Չ'լսել, չ'լսող, չ'լսած, չ'լսելու:

199. Այս պատկերէն կ'երեւի.

ա. Էական բայով կազմուած ժամանակները և տառն կ'ընդունին էական բայի վրայ և սովորաբար նախադաս կը դրուին: — Կէ խօսիմ, քի խօսիր. Կը գրէի, քի գրեր:

բ. Հրամայական եղանակը և մասնիկի տեղ՝ քի բացասական մասնիկը կ'առնու:

ԱՆՅՈՂԱԿԱՆ ԲԱՅԵՐ

- Ա. Կարդալ, խօսիլ, մոռանալ:
- Բ. Կարդ—ցնել, խօս—եցնել, մոռ—ցնել:
- Գ. Կարդալ տալ, խօսիլ տալ, մոռանալ տալ:
- Դ. Կարդացնել տալ, խօսեցնել տալ, մոռացնել տալ:

200. Առաջին տողի բայերը ներգործական են:

Երկրորդ տողի բայերը շինուած են նոյն ներգործականներէն և կը ցուցնեն որ գործողութիւնը ոչ թէ անմիջապէս իւր մօտաւոր առարկային վրայ ուղղակի կը ներգործէ, այլ օտարի ձեռքով կ'անցնի անոր վրայ: Այդ տեսակ բայերը անցողական կը կոչենք:

Անցողական բայերը կը շինուին ներգործական բայերու արմատին կցելով ցել մասնիկը — կամ է յօդակապով:

201. Անցողական բայերու տեղ կրնան գործածուիլ ներգործական բայերը ալ բայի հետ: Կարդալ տալ, խօսիլ տալ, մոռանալ տալ:

Իսկ եթէ ալ բայը աւելցնենք անցողական բայերու վրայ՝ կրկին անցողական կ'ստանանք: — Կարդացնել տալ, խօսեցնել տալ, մոռացնել տալ:

- Ա. Մեռնիլ, յոգնիլ, կորսուիլ, թռչիլ:
- Բ. Մեռ—ցնել, յոգն—ցնել, կորսն—ցնել, թռ—ցնել:

202. Ցել մասնիկը, որ ներգործական

բայր անցողականի կը վերածէ, չէզոք բա-
յերու վրայ դրուելով գանտնք պարզ ներ-
գործական կը շինէ՝ մեղքն, յփեցնել, կորսնցնել,
հեռնել, ոչ թէ ուրիշի ձեռօք, այլ անմիջա-
պէս:

Այս ներգործականները անցողական ը-
նելու համար պէտք է քովը դնել բայր—
Մեռցնել տալ, յոգնեցնել տալ, կորսնցնել
տալ, թուցնել տալ:

203. Անցողական բայերը առաջին լծոր-
դութեան պէս կը խոնարհուին, միայն կա-
տարեալ ժամանակի մէջ՝ քեմսանիկի և տա-
ռը -ի կը փոխուի. կարդացնել, կարդա-
ցուցի, կարդացուցիր, կարդացուց. իսկ
հրամայականը՝ կարդացու:

243. Հետեւեալ ներգործական բայերը անցողա-
կան շինեցէք և խոնարհեցէք: — Հաւատալ, խմել,
հասնիլ, մոռանալ, հաւանիլ, ճանաչել, կարդալ,
սովորիլ, ուտել . . .

244. Միևնոյն բայերը բայով կրկին անցողա-
կան շինեցէք և խոնարհեցէք:

245. Հետեւեալ չէզոք բայերը շինեցէք ներգոր-
ծական և խոնարհեցէք՝ մեռնիլ, յոգնիլ, կորսուիլ,
խաղալ, կպչիլ, թուչիլ, մեծանալ, լուանալ, հի-
ւանդանալ:

246. Միևնոյն բայերը անցողական շինեցէք և խո-
նարհեցէք:

247. Հետեւեալ բայերը անցողական շինեցէք. չա-
փել, ազդել, աղաչել, այրել, բռնել, կարել, հրա-
մայել, յանդիմանել, հալածել, վռնտել:

248. Խոնարհեցէք հետեւեալ բարդ բայերը. ներս
մտնել, դուրս գնալ, ջանք ընել, գործ ածել:

Դ Ե Ր Բ Ա Յ

204. Դերբայները չորս են (107) ա. ա-
նորոչ դերբայ կամ աներեւոյթ, բ. ներ-
կայ դերբայ կամ ընդունելու թիւն ներկայ,
գ. անցեալ դերբայ, դ. ապառնի դերբայ:

205. Անորոչ դերբայը կը գործածուի
ա. իբրեւ բայ և բ. իբրեւ գոյական անուն:

ա. Անորոչ դերբայը՝ բայ է, երբ քովը
ուրիշ դիմաւոր բայ մը ունի և նախադա-
սուլթեան մէջ լրացնողի կամ ենթակայի
պաշտօն չկատարեր, այլ ինքն ունի իւր
լրացնողը կամ ենթակայն. զորօրինակ՝ կ'ու-
ղեմ գալ և վարժապետէս ներողութիւն
խնդրել, այսինքն կ'ուղեմ որ երևա՞ և վար-
ժապետէս ներողութիւն խնդրե՞մ:

206. բ. Անորոչ դերբայը գոյական է, երբ
նախադասութեան մէջ լրացնողի, որոշողի
և ենթակայի պաշտօն կը կատարէ: Այդ
պարագայի մէջ՝ հասարակ գոյական անունի

պէս կը հորովուի՝ սիրել, սիրելու, սիրելէ, սիրելով ։

ա. Սերելու լաւ բան է (ի՞նչ) — սիրելը (ենթակայ) ։

բ. Կարող — գիրքս գեղեցիկ է . — կարդալու (որոշող) ։

գ. Գիրքը կարող — համար շինողուած է . — կարդալու (տրակ. և լրացնող) ։

դ. Կարող մարդս գոհութիւն կ'զգայ . — կարդալէ (երկ. լրացնող) ։

ե. Կարող մենք կը հարստացնենք մեր միտքը . — կարդալով (երկ. լրացնող) ։

207. Ներկայ դերբայը կը գործածուի իբրեւ բայ և իբրեւ ածական անուն ։

Իբրեւ բայ՝ ներկայ դերբայը կը գործածուի միայն էական բայի օգնութեամբ (տե՛ս վարը) ։ Իբրև ածական անուն՝ նա միշտ կը դրուի գոյականին քով և պարզ ածականի պէս կ'որոշէ զայն . հետևաբար կրնայ դիմորոշ յօդ առնուլ և հորովուիլ իբր սովորական ածական անուն ։ — Խոտ հոյ՝ մշակները՝ գերանդիները առին և գնացին մարդագետինը — Խոտ հոյ՝ գերանդիներն առին . . . ։

208. Անցեալ դերբայը երկու վերջա-

ւորութիւն ունի՝ եւ և ւն ։ Սիրեցեալ, ցաւ ւն ։ Եւ կը գործածուի իբր հասարակ ածական, սիրեցեալ, մեռեալ . երբեմն ալ միայն իբրեւ դերբայ՝ «Եւ այն օրէն (ըսկրտելով այն օրէն իմաստով) ։

209. Անցեալը երկու կերպ գործածութիւն ունի .

ա. Եթէ քովը որ և իցէ գոյական մը գտնուի սրուն ինքն լինի իբր որոշող՝ ածական է, գործիչնակ՝ կարող գիրքս, կերպ հացս, ի՞նչ ջուրս և այլն ։

բ. Անցեալը եթէ հորովուի և նախադասութեան մէջ՝ լրացնողի և ենթակայի պաշտօն կատարէ՝ գոյական է .

ա. Գրած ջնջուեցաւ . — գրութիւնը (ենթակայ) ուղղական ։

բ. Գրածի կէսը նօսր գիր է . — գրութեան (որոշող) սեռական ։

գ. Գրածի նուիրած էր բոլոր ուշադրութիւնը . — գրութեան (տրականի իմաստով լրացնող) ։

դ. Գրած սրբագրեց վարժապետը . — գրածը (հայցական . լրացնող) ։

ե. Գրած քաղեց շատ մը տեղեկութիւններ . — գրածէն (բացառական . լրացնող) ։

դ. Գրեմի Հաստատեցիւ Բառաջարկածը. —
գրածով (գործիական. լրացնող)։

210. Ապառնի դերբայը (լու) անորոշ
դերբայի սեռականն է և միշտ ածական ու
բոշողի պաշտօն կը կատարէ՝ հաց,
Ի՛նչ- ջուր, Կարճ- գիրք։ Երբեմն ալ և վեր-
ջաւորութեամբ կը գործածուի առսուե-
լապէս կոչական բառերու մէջ՝ սիրե՛ք եղ-
բայր, պատուե՛ք բարեկամ։

Երբեմն ալ և վերջաւորութեամբ կը
գործածուի երբ գոյականը գորութեամբ
կիմացուի, միայն թէ այն ժամանակ ընդ-
հանրապէս յոգնակի կը գործածուի և
գիմորոշ կ'առնու՝ ըսելիս՝ ըսէ՛ (ըսելու
բաներդ)։

211. Ապառնի դերբայը գիմաւոր բայի
տեղ գրուած պիտի համարուի, եթէ նը-
պատակ ցոյց տուող պարագայականի պաշ-
տօն կատարած լինի՝ ես կ'երթամ Կարճ-
(որ կարգամ) ։

Ձկնորսը գնաց ձուկ Կարճ-(որ ձուկ որսայ)։

212. Բոլոր դերբայները բայի անորոշ-
ներէ՛ էական բայերու օգնութեամբ կը
խոնարհուին բոլոր ժամանակներով և գի-
մաւոր բայերու տեղ կը գործածուին ։

Դերբայներու պէս՝ էական բայերու օգ-
նութեամբ կրնան խոնարհուիլ և ածա-
կան ու գոյական անունները. դերբայնե-
րը անով միայն կը զանազանուին, որ ա-
ռանց էական բայերու ալ իրենք իրենց
մէջ յատուկ գործողութիւն մը ունին ։
Ահաւասիկ մի ընդհանուր օրինակ.

Սահմանական եղանակ՝

- Ներկայ՝ մարդ եմ, ծոյլ եմ, գրած եմ, գրող եմ.
- Անկարար՝ մարդ էի, ծոյլ էի, գրած էի, գրող էի,
գրելու էի ։
- Կարարեալ՝ մարդ եղայ, ծոյլ եղայ, գրած եղայ, գրող
եղայ, գրելու եղայ ։
- Հրահրական՝ մարդ եղի՛ր, ծոյլ եղի՛ր և այլն ։
- Դերբայ՝ մարդ լինիլ, ծոյլ լինիլ և այլն ։

Մ Ա Կ Բ Ա Յ

213. Մակբայները իրենց կազմութեանը
նայելով երկու են՝ բուն մակբայներ և միւս
բանի մասունքներէն առնուած մակբայ-
ներ ։

Բուն մակբայները կամ պարզ բառեր են
արեղ, յաճախ, ո՛ր, երբ կամ առանձին յատուկ
մասնիկներով շինուած ածանցական բա-
ռեր, զորօրինակ՝ մեծ-ագէտ, քաջ-բար, առատ-
օրէն, արտաբն, սաստիկ, բնաւ, կամայ, ակամայ ։

249. Հետեւեալ օրինակներուն մէջ գտէք բուն մակբայները և իրենց նշանակութեան համեմատ առանձին դաս դաս բաժնեցէք, համաձայն 109. կանոնին :

Ինչպէ՞ գեղեցիկ կ'երգէր սոխակը, Հալե՛ թէ մթընցաւ և հա՛ զմեզ սաստիկ կը տանջէ ցուրտն ու անձրեւը : Յանցաւորները քանի՞ դատարան տարին : Կրակը շո՞ր մարեցաւ և ջրկիրները յե՞ր դարձան : Ես գիտեմ հայերէն, ասորերէն և պարսկերէն կարգաւ ու գրեւ : Մեկուսի գնացէք, Կալաթոս պաշտպանեցէք ինքզինքնիդ վայրենի գազաններուն դէմ՝ և կամ անձնատուր մի՛ լինիք : Յաղթուելէ յետոյ կամայ սկսեալ ընդունեցանք մեր վրայ դրուած պայմանները : Կամայ գնացէք, մենք ալ շո՞ր կը հասնինք : Ա՛նտէն շնկատեցի թէ դու մեզի հե՞ր էիր : Նա քուրսի՞ն չ'էր պատրաստած գասերը : Բնու՛ չ'էի կարծեր թէ դու է սոսա՛ կը մոռնաս ընելիքդ : Անտէն շո՞ր պէտք է աշխատիք : Բնութեան գեղեցկութիւնն ալ զիս չ'էր սփոփեր : Մեայնի կանգնած էր նա լերան վրայ :

250. Այսպէ՛ ծեփն գիտեմ որ յրէ առածնիս՝ յրէ պէտք է տանք : Յաստի մարդս այնպիսի բաներ կը լսէ որ սոսա՛ կը գժուարանայ հաւատալ : Մայրը սոսա՛ թուղթ կը գրէ իւր որդւոյն որ աներասեփար էրէն մոռցած էր զինքը : Յանկարծա՛կ այն նեղութենէն յետոյ աւրեգակը կը խաւարի : Թշնամիք յանկարծ ներս թափեցան և սպաննեցին զինքը : Մեայնի զգուշացէք ուրիշը դատելէ : Աստուած յայտնապէս խօսեցաւ Մովսէսի հետ : Մովսէս սոսա՛ զարկաւ ապառաժին և անձնապէս առատ ջուր բղխեցուց : Վերջապէ՛ Իսրայելացիք հասան Բանանացուց երկիրը : Հայր և որդի ընտանեփար կը խօսէին : Հայրը ծեփերէն կը խրատէր իւր որդին : Բամբասանքը արտաք կը խոցոտէ մարդու սիրտը : Անշո՞ր կը հասկընանք՝ ծեփն անհամ եթէ հարեանցի պատմէք

մեզ ձեր մտադրութիւնը : Ես սոսա՛ կը ցանկայի զձեզ տեսնել : Ուշադիր մանուկը սոսա՛ կանջ պիտի դնէ և սոսա՛ խօսի : Ո՛ր կ'երթաս, սոսա՛ կուգաս, սոսա՛ խակ նժդեհ : Ո՛ր պիտի դնենք մեր յոգնած գլուխը : Արտաք զարդարուած էր, բայց ներսոսա՛ լի էր պղծութեամբ :

251. Երբ անսեր էք որ այրին օտից ցգլուխ պըճնուի իւր զարդերով թանկագին : Աշխատող մարդը ծեփ հաց կը գտնէ, երբեք սովամահ չ'լինիր : Երբեք էի լոյս, և այժմ եմ խաւար : Մերն կ'որոտաս, ծեփն կ'ամպես : Մերն հարաւային հողմոյ նման սոսա՛ կը շնչես : Ես շո՞ր կը լինիմ : Լաւ է անհամ քան երբեք : Բժիշկը դեռ չ'հասած՝ հիւանդը արբէն մեռաւ : Դուք կանոն գնացէք : Յաստի գիտէի : Ան այժմ պէտք չ'ունիմ : Յաստ մենք կը կարգանք, յետոյ դուք : Նոն մտածէ՛, սոսա՛ խօսէ : Նախ և առաջ նիւթը պատրաստէ՛ և սոսա՛ գրէ : Աստուծոյ նախախնամութիւնը յոստեան պիտի թագաւորէ : Յետոյ զղջաց Յուդայ և տարաւ արծաթը քահանայապետին :

214. Բացի բուն մակբայներէն կան անուններ և դերանուններ որոնք բայի համար կը դրուին և մակբայ կը համարուին. գոյականներէ առնուած մակբայները կարող են հոլովուիլ : Միայն հոլովեալ գոյական մակբայները՝ յոգնակի թուին հասարակ գոյական անուն պէտք է համարուին (բացի նորբեր, ծեփեր, անհամեր որոնք ժամանակակից մակբայ են) . զորօրինակ՝

Վեր գնաց (տրական հոլով գէպի վեր) =

Վերե քնկաւ (բացառական հոլով) =

Վերե վարովը (գործխական) =

Վերե բռնուած են (յոգնակի հասարակ գոյական անուն) =

252. Հետեւեալ մակբայներով նախադասութիւններ կազմեցէք :

Ներս , ներսը , ներսէն . վար , վարը , վեր , վերը . դուրս , դրսէն , դուրսը . առաջ , առաջուց , առջեւէն . ետեւ , յետոյ , ետքէն , յետ . դէմ , դիմաց , դիմացէն :

253. Գոյականը գերանուն հետ : — Այստեղ , այդտեղ , այնտեղ , այստեղէն , այդտեղէն , այնտեղէն , ո՞րտեղ , ո՞ւրտեղ , ամեն տեղ , ամենայն տեղ , մի քանի տեղ , ոչ մի տեղ , ամեն տեղէն , մէջտեղ :

254. Գոյականը միայն կամ ուրիշ բառի հետ : — Այսօր , վաղը , երէկ , հիմայ , առաւօտը , երեկոյին , հերու , անցեալ տարի , առաջ , առաջուց , մի օր , մի ժամանակ , օրով , ցերեկով , կէսօրին , գիշերը , ցերեկը , կէս գիշերին , վերջալուսին , շատոնց , հնուց , վաղուց , ի սկզբանէ , ի յաւիտենից , յաւիտեան :

Խոսիւ , սիրով , փութով , շուտով , դիւրաւ , դրժուարաւ , բարեաւ , շտապաւ , իսկոյն , սրտանց , երեսանց . Զախ առնուլ . է քնէ կոյրը բժշկեց . է քնէ անպիտան էր : — Անգամ , միանգամ , միանգամայն , երկիցս , երիցս , չորիցս ևայլն . . .

215. Ածական անուններու մեծագոյն մասը՝ բայի քով մակբայի պաշտօն կը կատար-

րեն՝ միայն կամ ի մասնիկի հետ : — Բարձր մարդը բարձր կը խօսէր : Փոքրի մանուկը ինչ քիչ ու շացաւ :

255. Զուգընթացաբար գրեցէք քանի մը նախադասութիւններ , ուր միևնոյն ածական անունը՝ թէ՛ ածական լինի և թէ՛ մակբայ :

216. Դերանունը զանազան մասերու օգնութեամբ մակբայի պաշտօն կը կատարէ : — Այսպէս , այդպէս , այնպէս , սոյնպէս , դոյնպէս , նոյնպէս , այսքան , այդքան , այնքան , սոյնքան , դոյնքան , նոյնքան , այսպիսով , այսուհետեւ , այնուհետեւ , սապէս , դապէս , նապէս :

217. Գոյական անուններէն շատերը եթէ կրկնութեամբ գործածուած են կամ եթէ միևնոյն գոյականը իւր մէկ հոլովին հետ է՝ կրնայ մակբայ լինել :

256. կաթիլ — կաթիլ կաթիլ .

Ոլոռն — ոլոռն ոլոռն .

Ստէպ — ստէպ ստէպ .

Խումբ — խումբ խումբ .

Դաս — դաս դաս .

Ոլոր — ոլոր ոլոր .

Կամաց — կամաց կամաց .

Ծուռ — ծուռ ծուռ .

Տեղ — տեղ տեղ .

Ժամանակ—ժամանակ ժամանակ .

Թել—թել թել .

Կարգ—կարգ կարգ .

257. Օր—օրէ օր .

Ժամ—ժամէ ժամ .

Մօտ—մօտ առ մօտ .

Երես—երես առ երես .

Ձեռք—ձեռքէ ձեռք .

Դուռ—դռնէ դուռ .

Երկիր—երկրէ երկիր .

Աշխարհ—աշխարհէ աշխարհ .

Ծայր—ծայրէ ի ծայր .

Գլուխ—գլխէ ի գլուխ .

Դէմք—դէմ առ դէմ .

Դար—դարէ դար .

Կէս—կիսով չափ .

Հոգի—հոգևով չափ .

Տեղ—տեղն ի տեղը .

Փոխ—փոխ առ փոխ .

Վազ—վազէ ի վազ .

Հետ—հետ զհետէ .

Կոյր—կոյր զկուրայն .

Վեր—վեր ի վերոյ .

Քայլ—քայլ առ քայլ .

Տուն—տունէ տուն .

Դաս—դաս առ դաս .

Բառ—բառ առ բառ .

Խիտ—խիտ առ խիտ .

Հագիւ—հագիւ հազ .

258. Եւ զի կը տեսնես օր օրի վրայ, գիշեր ցե-

րեկ, ըստ ամենայնի, ըստ պատշաճի, ըստ օրինի .
ըստ պատահման, ըստ դիպուածոյ, առ առաւելն,
առ հարկի . Ինչէ՛ խօսեցաւ . զուր տեղը կը ջանաս .
անիրաւ տեղը դատուեցաւ . գուցէ թէ, կարծես թէ,
իցէ թէ, այն միջոցին, յայնչա՛ս թողին գնացին . —
Քանի որ, մինչեւ որ, երբոր կայն . . .

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

218. Նախադրու թիւնները իրենց կազմու թեանը նայելով երկու են՝

ա. Բուն նախադրութիւններ՝ վասն, համար, հետ, դէմ, չափ, պէս, առանց, մինչեւ, դէպ, իբր, իբրեւ, բացի, զատ, ի զատ, ի վեր, ի վայր, առ, հակառակ, համեմատ, մօր (վերջին երեքը ածականաձեւ են) :

բ. Գոյականներէ առնուած նախադրութիւններ՝ որոնք բոլորը, առանց բացառու թեան, մակբայի պաշտօն կս կատարեն. դրանք «-ը», պարզսպին երեւ, վերեւը, ներքեւը, վրան, տակը, մէջը, քովը, դէմը :

219. Բուն նախադրութիւններէն՝

ա. Հետեւեալք, զան, համար, հետ, շէ, դէ, դէմ, առանց, հակառակ, համեմատ, մօր տրական հոլով կ'առնուն. զ. օր. վասն այսորիկ, ինձ համար, քեզի չափ, թշնամուց դէմ, ս'ւմ հակառակ, ինձ մօտ, առանց ինձի :

բ. Փոխանակ սեռական հոլով կ'առնու ։ —
Տ՛՛ւր փոխանակ իմ և քո ։

գ. ՄԻ՛ւ, դե՛պ ուղղականի հետ կը գործածուի. մինչեւ տուն, դէպի դուռ ։

դ. Իբր, եբրե՛ւ ամեն հոլովի հետ կը գործածուի. իբր կամ իբրեւ մարդ, իբր կամ իբրեւ մարդոյ հետ կը խօսիմ, իբր մարդէ, իբրեւ մարդով, իբրեւ իմարդ (մարդու մէջ) ։

ե. Բացի, շոր, է վեր, է վայր, է քուռ, է ատ՛
բացառական և հայցական հոլովներ կ'առնուն. բացի քեզմէ, քեզմէ զատ, մանկու թենէ ՚ի վեր, լեռնէն ի վայր, օրն ի բուն, գիշերն ի բուն, ձմեռն ի գլուխ՝ անդադուր կ'աշխատի ։ Դիմել առ Սասունած ։

Գոյականներէ առնուած նախադրութիւնները՝ սեռական հոլով կ'առնուն և անոր հետ ալ կը հոլովուին. ծառին տակը, լերան վրայ, իմ առջեւ, իմ առջեւիս, իմ առջեւէս և այլն ։

259. Իրեցէք հետեւեալ նախադրութիւններով օրինակներ՝ առջևը, ետեւը, վերեւը, ներքևը, վրան, մէջ, մօտ, դէմ, փոխանակ, յետո՛վ, ճիջո՛յվ, նկարմաբ (վերջին երեքը հոլովեալ գոյականներ են, որք երբեմն միայն նախադրութեան տեղ կը գործածուին) ։

ՎԵՐՋ ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍԻՆ



ՅԱՆԿ ԳԼԽՈՑ



1.	Յառաջարան	էջ	9.
2.	Նախադասութեան տեսակները	»	7
3.	Պարզարանող բառերու տեսակները	»	9
4.	Միաւորեալ նախադասութիւն	»	17
5.	Բաղադրեալ նախադասութիւն	»	20
6.	Մասունք բանի (գոյական անուն)	»	27
7.	Գոյական անունն սեռը	»	29
8.	Գոյական անուններու թիւը	»	32
9.	Ածական անուն	»	34
10.	Որակական եւ յարաբերական ածականներ	»	36
11.	Թուական անուն	»	39
12.	Դերանուն	»	42
13.	Բայ	»	46
14.	Բայի եղանակը, ժամանակը, թիւը եւ դէմքը	»	51
15.	Դերբայ	»	54
16.	Մակբայ	»	55
17.	Նախադրութիւն	»	57
18.	Շաղկապ	»	58
19.	Զայնարկութիւն	»	58
20.	Բառակազմութիւն	»	59
21.	Նախդիր	»	60
22.	Վերջաւորութիւն կամ վերջադիր	»	62
23.	Նախնական եւ ածանցական բառեր	»	67
24.	Պարզ եւ բարդ բառեր	»	67
25.	Զեղջման եւ փոփոխման զլխաւոր կանոնները	»	68
26.	Մասանց բանի փոփոխութիւն	»	72
27.	Ուղղական եւ հայցական	»	73
28.	Սեռական եւ տրական	»	75
29.	Բացառական, գործիական եւ ներգոյական հոլովներ	»	76

30.	Կանոնաւոր հոլովմանց պատկերը	էջ	77
31.	Անկանոն հոլովմունք	»	80
32.	Անուան յօդը	»	83
33.	Անուններու հոլովումը որոշեալ յօդով	»	85
34.	Ածական անուան հոլովումը	»	86
35.	Թուական անուններու հոլովումը	»	87
36.	Դերանուններու փոփոխութիւնը	»	87
37.	Ստացական դերանուններ	»	89
38.	Դիմորոշ դերանուններ	»	90
39.	Անորոշ դերանուն	»	90
40.	Բայի փոփոխութիւնը	»	91
41.	Էական բայերու խոնարհումը	»	93
42.	Առաջին լծորդութիւն	»	94
43.	Երկրորդ »	»	95
44.	Երրորդ »	»	97
45.	Չորրորդ »	»	98
46.	Կրաւորական բայերու խոնարհումը	»	99
47.	Անկանոն խոնարհմունք	»	101
48.	Պակասաւոր բայեր	»	105
49.	Միադէմ բայեր	»	106
50.	Բացասական բայեր	»	107
51.	Անցողական բայեր	»	108
52.	Դերբայ	»	111
53.	Մակբայ	»	115
54.	Նախադրութիւն	»	121

49199-5

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

Մ Ա Ս Ն Գ .


ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ

Ուրք Մասունգ Բանիի

ՀՐԱՏԱՐԱԿԻԶ

ԳՐԱՎԱՃԱՌՎ. Ե. ՄԱՐԳԱՐԵԱՆ

معارف نظارت جلیله سنک ۲۹۳ نومرولی و ۱۳۰۵
 ۳۱۵ تاریخلو رخصتنامه سیله طبع اولنمشدر



Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐ. Ն. Կ. ՊԷՐՊԷՐԵԱՆ

1900

3136-3138

«Ազգային գրադարան»



NL0060896

«Ազգային գրադարան»



NL0060895

«Ազգային գրադարան»



NL0060894

